



ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ՏԻԳՐԱՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԶԵՅԹՈՒՆԻ ՏԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ
ՍՎԵԴԻԱՅԻ ԱՊՍԱՍԲՈՒԹՅՈՒՆԸ

Գ հրատարակություն

(Արևելահայերեն առաջին հրատարակություն)

ԵՐԵՎԱՆ
2015



9(47.925)

Նհ-58

հշ

ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ՏԻԳՐԱՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

**ԶԵՅԹՈՒՆԻ ՏԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ
ՍՎԵԴԻԱՅԻ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ**


Արևելահայերենը՝

արևմտահայերենի Բ հրատարակությունից

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

Երևան
2015

6064



ՀՏԴ 94 (479, 25)
ԳՄԴ 63.3(2 Դ)

Անդրեասյան Տիգրան
ԶԵՅԹՈՒՆԻ ՏԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՎԵՂԻԱՅԻ ԱՊՍԱՄԲՈՒ-
Ա 583 ԹՅՈՒՆԸ /Յեղիմակ վերապատվելի Տիգրան Անդրեասյան.-եր.:
Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության Հայաս-
տանի մասնաճյուղ, 2015. - 96 էջ:

Գրքում արտացոլված է Առաջին համաշխարհային պատերազմի ժա-
մանակ Ձեյթուն և Սվեղիա գավառների բնակչության հերոսական պայ-
քարը թուրք ջարդարարների դեմ: Թուրքական կառավարությունը բանա-
կի կարիքները հռալու պատրվակով սկսում է բռնազավթել Արևմտահա-
յաստանի բնակչության ունեցվածքը, տեղահանել նրանց և տարագրել:

Առաջին հարվածն իջնում է Ձեյթունի գլխին:

Այդ օրերին Ձեյթունի Հայ Ավետարանական եկեղեցու հոգևոր հովիվ
Տիգրան Անդրեասյանը, տեսնելով զեյթունցիների կրած տառապանք-
ները, գալիս է Սվեղիա և պատմում Ձեյթունի հայության դժոխային կա-
ցության մասին:

Մուսալեռցիները, անտեսելով թուրքական կառավարության՝ բռնա-
զաղթի հրամանը, միավորվում են, բարձրանում Մուսա լեռան անտա-
ռախիտ լեռները և պայքարում հանուն իրենց ազատության:

Գիրքը վերահրատարակվում է ըստ Տիգրան Անդրեասյանի «ԶԵՅԹՈՒ-
ՆԻ ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՎ ՍՈՒԷՏԻՈՅ ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆԸ» գրքի արևմտա-
հայերեն Բ հրատարակության (ՏՊԱՐԱՆ ԳՈԼԵՃ, ՀԱԼԵՊ, 1935 թ.):

Հասցե՝ Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության Հայաս-
տանի մասնաճյուղ
Մարշալ Բաղրամյան 18

ՀՏԴ 94 (479, 25)
ԳՄԴ 63.3(2 Դ)

ISBN 978 - 9939 - 1 - 0158 - 3

© Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ, 2015



ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ
ՏԻԳՐԱՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Առաջաբան

Վերապատվելի Տիգրան Անդրեասյան

Կյանքը

Վերապատվելի Տիգրան Անդրեասյանը ծնվել է 1888 թ. Մուսա լեռան Յողուն-Օլուք գյուղում: 1911 թ. ավարտել է Կիլիկիայի Այնթապ քաղաքի Թուրքիայի Կենտրոնական քոլեջը, իսկ 1914 թ.՝ Մարաշի Աստվածաբանական ճեմարանը: Այդ տարիներին վեր. Անդրեասյանը պարբերաբար ընդհատում էր ուսումը Քեսաբի էքիզ-Օլուք և Քյորքունե գյուղերում, ինչպես նաև Ֆարքըսլիում դասավանդելու և քարոզելու համար:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին նա ստանձնեց Ձեյթունի Չայ Ավետարանական (բողոքական) եկեղեցու քարոզչի պաշտոնը: Չանցած մեկ տարի, հայերի տարհանման ժամանակ, նրան հաջողվեց փախչել և ապաստանել իր հայրենի գյուղում: 1915 թ. հուլիսին Մուսա լեռան հայերը տեղահանման հրաման ստացան, և պատվելի Անդրեասյանի ժամանումը ծննդավայր համընկավ այս իրադարձությանը: Սկզբնապես իր հայրենակիցներից շատերի նման նա մի փոքր տատանվում էր, բայց շուտով դարձավ ցեղասպանության դիմադրության ուժեղ կողմնակից:

Օգոստոսից մինչև սեպտեմբերի կեսը օսմանյան բանակի և խուժանային ամբոխի դեմ մղվող ճակատամարտերի ընթացքում պատվելի Անդրեասյանը ստանձնեց կենտրոնական վարչական խորհրդի ատենապետությունը, վերահսկելով ընդհանուր քաղաքացիական և ռազմական կարիքները: Նա այդ գործը հանձն էր առել իր բնավորության պատճառով: Ըստ պատվելի Անդրեասյանին ճանաչողներին, նա ուներ արկածախնդիր մարդկանց բնորոշ համարձակ ոգի, որը լրացվում էր տրամաբանական մտածողությամբ, հավասարակշռությամբ և տեսլականի հստակությամբ:

Քսանյոթ տարեկանում պատվելի Անդրեասյանը տեղի ամենաուսյալ մարդկանցից մեկն էր: Չնայած ծառայում էր փոքրամասնություն կազմող ավետարանական համայնքում՝ հայրենակիցների կողմից նա մեծ հարգանք էր վայելում: Որպես կենտրոնական վարչական խորհրդի

ատենապետ, պատվելի Անդրեասյանը դարձավ այդ ժամանակ ծավալված իրադարձությունների կենդանի վկան:

1915 թ. սեպտեմբերի 12-16-ին, երբ ֆրանսիական նավատորմը մուսալեռցիներին տեղափոխեց Եգիպտոսի Պոր-Սաիդ նավահանգիստը, Սուեզի ջրանցքի ասիական հատվածի վրա նրանց համար գաղթական հիմնվեց: Այստեղ պատվելի Անդրեասյանը որոշակի քայլերի ձեռնարկեց, որպեսզի կարողանա հոգալ մարդկանց առաջնային կարիքները:

1915 թ. հոկտեմբերի 17-ին գաղթականի ավետարանականները հավաքվեցին հաղորդության համար, որի ընթացքում պատվելի Անդրեասյանը քարոզեց: Այնուհետև նա հանդես եկավ բողոքական համայնքի հոգևոր հովիվ նշանակվելու խնդրանքով: Վերապատվելի Ստեփան Թրոուբրիջը, որն ամերիկյան բողոքական միսիոներ էր և Կիլիկիայից ապաստանել էր Եգիպտոսում, գրել է. «Այս օժտված և առավել հոգևոր երիտասարդին պետք է դասել բեռնաթափման գործերով ու հաշիվներով զբաղվող բեռնափոխադրման գրագիրների շարքում, քանի որ նրա կարիքը ավելի շատ զգում էին հոգևոր աշխատանքում»: Պատվելի Անդրեասյանն այդպիսով լիակատար նվիրումով վերականգնեց իր հովվային պարտականությունները: Նա նշում էր, որ հաճախ ուսյնիսկ ուտելու ժամանակ չէր ունենում: Ըստ նրան, իր առաջադրանքը սովորական չէր. «Ես երբեմն հարկադրված եմ մարդկանց հետ խիստ վերաբերվել, քանի որ լինելով անուս՝ նրանք անկարող են որոշ հարցերում տեսնելու ճշմարտությունը և դրանով ինձ ստիպում են խիստ լինել իրենց նկատմամբ: Իմ դեմ մի ինչ-որ զգացում կա, մի բան, որ խանգարում է, որ նրանք հոգևոր աջակցություն ստանան»: Բայց և այնպես, ոչ միայն բողոքականները, այլև առաքելական հայեր ներկա էին լինում նրա պաշտամունքներին:

Պատվելի Անդրեասյանը հայրենի Մուսա լեռ վերադառնալուն պես շարունակեց առաջնորդի իր դերը: 1919 թ. ամռանը և աշնանը փախստականները հայրենադարձվեցին Պորտ-Սաիդից, և ղեկտեմբերին Անտիոքի շրջանի ֆրանսիացի զինվորական հրամանատարը Մուսա լեռան վեց գյուղերում արտոնված ընտրություններ անցկացրեց՝ Չայ ազգային միության (ՀԱՄ) առաջնորդներին ընտրելու նպատակով: Գաղտնի քվեարկությամբ յուրաքանչյուր գյուղ ընտրեց իր ՀԱՄ-ին, որոնցից էլ կազմվեց պատվելի Անդրեասյանի կողմից ղեկավարվող կենտրոնական մարմինը: 1920 թ. ընթացքում կենտրոնական մարմնի հիմնական պաշտոնատար անձինք երեք անգամ փոխվեցին: Մոտավորապես հոկտեմբերի 7-ից մինչև ղեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում

պատվելի Անդրեասյանը կրկին նախագահ նշանակվեց: Այդ փոփոխությունները պայմանավորող հանգամանքներն այդպես էլ անորոշ մնացին, բայց մի բան պարզ էր. պատվելի Անդրեասյանի պաշտոնավարման ընթացքն, ընդհանուր առմամբ, ամենաերկարն էր:

ՀԱՄ-ը պահանջում էր դրամական և նյութական այլ օժանդակություն՝ ժողովրդի գոյատևումն ապահովելու համար: Այդ պահանջները ներկայացվում էին Կիլիկիա, Սիրիա և Լիբանան ուղարկված մարդկանց միջոցով՝ մարզային և օտարերկրյա հաստատությունների հետ նամակագրությամբ, ինչպես նաև որոշակի առաքելություն իրականացնելու նպատակով: Օրինակ, Մերսին և Ադանա մի պատվիրակություն ուղարկվեց, որը բաղկացած էր Լաթաքիայի, Անտիոքի և Ջիսր ալ-Շուրուրի Հայ առաքելական եկեղեցիների առաջնորդական տեղապահ Մովսես Ծ. վրդ. Ոսկերչյանից, պատվելի Անդրեասյանից և Մուսա լեռան ապագա կառավարիչներից (1927-1939 թթ.) Սերոբ Շերբեթյանից: Վերջին երկուսը տարբեր առիթներով եղան նաև Բեյրութում:

1921 թ. հունվարին Կահիրեի Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ) Բեյրութի Մերձավոր Արևելքի նպաստամատույց (ՄԱՆ) կազմակերպության պատասխանատու՝ Բայարդ Դոջի հետ պայմանագիր կնքեց, որի համաձայն՝ Քեսաբի և Մուսա լեռան աղքատներին և կարիքավորներին շուրջ 15 000 դոլար գումար պետք է տրամադրվեր: Այս պայմանագրի մասին լուրերը պետք է որ հասած լինեին Մուսա լեռ, քանի որ պատվելի Անդրեասյանը ուղևորվեց Լիբանանի մայրաքաղաք, պահանջելու իր ժողովրդին հատկացված գումարը: Նրան հաջողվեց ՄԱՆ-ից 7 000 դոլար ստանալ, որի մի մասը ծախսվեց գետնախնձորի վրա, իսկ մյուս մասը բաժանվեց մուսալեռցիներին, քանի որ ցանքի եղանակն արդեն անցել էր:

Պատվելի Անդրեասյանն ավելի վաղ դիմել էր նաև «Հայաստանի բրիտանացի բարեկամներ» կազմակերպությանը, որը Պոր-Սաիդի գաղթակայանում աջակցել էր մուսալեռցիներին: Այն դրականորեն արձագանքեց պատվելի Անդրեասյանի խնդրանքին և շուրջ 200 անգլիական ոսկու դրամական օգնություն ցուցաբերեց: Նշված գումարը բաժանվեց ամենակարիքավորներին: Շարունակական դժվարությունները ստիպում էին պատվելի Անդրեասյանին էլ ավելի շատ օգնություն խնդրել: Հայտնի չէ, եթե Հայաստանի բարեկամները երկրորդ անգամ դրամական օգնություն տրամադրեցին:

1921-1922 թթ., երբ Մուսա լեռան Հաջի Հաբիբլի և Բիթիաս գյուղերի

միջև ընկերային-տնտեսական պատճառներով արյունահեղ ընդհանրումներ սկսվեցին, միջամտեց Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Երկրորդ Խաբայանը: Սակայն 1922 թ. օգոստոսի վերջին Մուսա լեռ կատարած իր կարճ այցի ընթացքում նրան չհաջողվեց լուծել այդ խնդիրը: Կաթողիկոսը նախքան մեկնելը ձևավորեց մեկ տարվա իրավասությամբ տեղական մարմին, որը պետք է ձեռնամուխ լիներ երկու գյուղերի միջև հաշտության և խաղաղության ապահովմանը: Յողուն-Օլուքի առաքելական եկեղեցու քահանա Աբրահամ Տեր-Գալուստյանն ու պատվելի Անդրեասյանը համանախագահներ էին նորաստեղծ մարմնին: Ի վերջո այլ հանգամանքներում թշնամությանը վերջ դրվեց:

1921-1922 թթ. Յողուն-Օլուքի և Բիթիասի հայկական բողոքական եկեղեցիներում հոգևոր ծառայությունը համատեղելուց և 1922-1924 թթ. Բիթիասի եկեղեցում ծառայելուց հետո պատվելի Անդրեասյանը ստանձնեց Քեսաբի Հայ Ավետարանական եկեղեցու հոգևոր առաջնորդի պաշտոնը: Այստեղ երեք ամիս ծառայելուց հետո Հոգևոր հովիվների միությունը հրավիրեց նրան Հալեպ, վերապատվելի ձեռնադրվելու: 1924 թ. դեկտեմբերի 12-ին, ուրբաթ օրը, պատվելի Անդրեասյանին մոտ 1000 հոգու ներկայությամբ քննեցին և մի շարք հարցեր տվեցին, այդ թվում, փոխակերպման, վարդապետության և աստվածաբանության բնագավառներից: Քննող հանձնաժողովը կազմված էր երկու միսիոներներից, Հայ Ավետարանական տեղացի երեք հոգևոր այրերից և յոթ պատվիրակներից, որոնք միասին մոտ երեսուներկու հարց տվեցին: Երկու օր անց, դեկտեմբերի 14-ին՝ կիրակի օրը, էմմանուել եկեղեցում 1500 հոգու ներկայությամբ Տիգրան Անդրեասյանը ձեռնադրվեց վերապատվելի: Ֆրանսիական բանակի հոգևոր հովիվը, երկու միսիոներներ, տեղացի չորս հովիվներ և Հայ Առաքելական եկեղեցու մեկ քահանա մասնակցեցին ձեռնադրման արարողությանը: Այնուհետև վերապատվելի Անդրեասյանը մոտ 25 րոպե քարոզեց, որին հաջորդեց օրհնությունը: «Հալեպում նման արարողություն եզակի դեպք էր...»:

Քեսաբի եկեղեցում չորս տարի ծառայելուց հետո վերապատվելի Անդրեասյանին կրկին ուղարկում են՝ Բիթիասի եկեղեցում ծառայելու: Ծառայությունն այս անգամ տևում է վեց տարի (1929-1935 թթ.): Նա շարունակում է հարգանք ու վստահություն ներշնչել որպես իր ժողովրդի ամենավստահելի ղեկավար: Երբ 1935 թ. Յողուն-Օլուքի Հայ Ավետարանական եկեղեցու հովիվ վերապատվելի Ստեփան Ասատուրյանը (Յարփուզյանը), ով հովվություն էր արել խառնակ ժամանակահատվածում՝

1890-ական թթ., Ամերիկայից 3 000 դոլար դրամական օգնություն առա-
գեց Մուսա լեռան և Անտիոքի կարիքավորներին, գումարը ժողովրդին
բաժանելու գործը վստահվեց վերապատվելի Անդրեսայանին: Նա ամ-
բողջ գումարը արդարացիորեն բաժանում էր հասցեատերերին, ի հե-
ճուկս այն բոլոր քննադատությունների, որոնց անտեղի արժանանում էր:

1936-1938 թթ. վերապատվելի Անդրեսայանը կրկին Քեսաբի եկեղե-
ցու գլուխն էր կանգնած, որտեղից էլ 1939 թ. տեղափոխվեց Լաթաքիա,
տեղի ավետարանական փոքրիկ համայնքը ղեկավարելու համար: Հե-
տանուտ լինելով Հալեպում Աստծուն ծառայելու կոչին, 1942 թ. վերա-
պատվելի Անդրեսայանը զբաղեցրեց Տավուտիե թաղամասում գործող
նորակառույց Հայ Ավետարանական եկեղեցու ղեկավարի պաշտոնը:
Նրա վերջին կանգառը կրկին Հալեպում գործող Բեթել Հայ Ավետարա-
նական եկեղեցին էր, որտեղ նա պաշտոնավարեց 1949-1957 թթ., մինչև
հանգստյան կոչվելը: Մեկ տարի անց վերապատվելի Անդրեսայանը տե-
ղափոխվեց Բեյրութ, որտեղ էլ 1962թ. վախճանվեց:

1915 թ. Մուսա լեռան հերոսամարտը հաջողությամբ պսակվեց, շատե-
րը նրա շնորհիվ ճանաչվեցին ու փառքի արժանացան, և մի շարք քա-
ղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ հետագա տասնամ-
յակների ընթացքում փորձում էին փառքի արժանանալ՝ շեշտելով իրենց
կեղրոնական դերը պատմական այս կարևոր իրադարձության մեջ:

Մերծավոր Արևելքի Հայ Ավետարանական համայնքը մի կողմից
ակնհայտորեն հիասթափված էր այն բանից, որ Մուսա լեռան հաղթա-
նակը քաղաքականացված էր, մյուս կողմից նրան զայրացնում էր այն
հանգամանքը, որ չէր շրջանառվում վերապատվելի Անդրեսայանի
անունը, և չէին խոսում որպես կռիվների ղեկավարներից նրա ունեցած
դերի մասին: Այս ամենը նկատի ունենալով՝ համայնքը՝ ի պատիվ վե-
րապատվելի Անդրեսայանի, «Ջանասէր» ամսագրի մի ամբողջ համար
թողարկեց (N4, 15 փետրվարի, 1966): Բայց ի տարբերություն մի շարք
կուսակցական մտեցումներին, ամսագրում տպագրված տարատեսակ
կենսագրական հոդվածները չափազանցված կերպով ու անտեղիորեն
չէին գովերգում վերապատվելի Անդրեսայանի պաշտպանական մար-
տերի ղեկավարի կերպարը: Ի վերջո, հայ ժողովրդի պատմության մեջ
արժանի տեղ ու դեր ունենալը հենց այն ամենն էր, ինչ կարող էր բավա-
րարել համեստ վերապատվելի Անդրեսայանը, իր լուռ տառապանքը
մեղմելու համար:

2000 թ.՝ Մուսա լեռան ինքնապաշտպանության 85-ամյակին, Մեր-

ծավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիների միությունը հանդի-
սավոր կերպով տեղափոխեց վերապատվելի Անդրեսայանի մասունք-
ները և վերաթաղեց Անճարում, Լիբանանում Մուսա լեռան հայության
տանը: Նրա գերեզմանը հանգչում է Հայ Ավետարանական եկեղեցու ու
վարժարանի համալիրում: Նույն տարում Անճարի ժողովուրդն ու ղեկա-
վարությունը Մուսա լեռան հերոսամարտի զոհերի հիշատակին նվիր-
ված հուշարձանի կողքին կանգնեցրին նաև վերապատվելի Անդրեսա-
յանի կիսանդրին՝ ի արդար գնահատում Մուսա լեռան պաշտպանա-
կան գործողություններում վերապատվելի Անդրեսայանի նշանակալի
դերակատարության:

Այս գրքի ծնունդը

1915թ. Հոկտեմբերին, մուսալեռցիների՝ Եգիպտոս ժամանելուց ան-
միջապես հետո, պատվելի Անդրեսայանը Կահիրեի Ամերիկյան միսիո-
ներական առաքելությունում դասախոսություն կարդաց իրենց ողիսա-
կանի մասին: Վերապատվելի Ստեփան Թրաուրբիջը անգլերենի թարգ-
մանեց այդ դասախոսությունը և փոքրիկ գրքույկի տեսքով հրատարա-
կեց այն Կահիրեի Ամերիկյան օգնության կոմիտեի համար (Nile Mission
Press, 1915), որից հետո Պոր-Սաիդի գաղթականացն ու ազատագրա-
կան պայքարի տեսարանները նկարագրող մի քանի նկարների հետ ու-
ղարկեց այն ԱՄՆ՝ պարբերականներում հրատարակելու համար: «Չորս
հազար հոգու փրկած կարմիր խաչով դրոշը» վերնագրված պատմու-
թյունը մեծ արծազանք գտավ: Խոսելով դրա ազդեցության մասին, վե-
րապատվելի Թրաուրբիջը մանրամասնեց. «Պատմության վերաբերյալ
մեզ արծազանքներ են հասել այնպիսի հեռավոր անկյուններից, ինչպի-
սիք են Կալկուտան, Ռիո դե ժանեյրոն, Ալյասկան և Մելբուռնը, ինչպես
նաև՝ ԱՄՆ-ի գրեթե բոլոր նահանգներից: Հայ օգնության ֆոնդի նվերնե-
րից մեկը մի գերմանացի զինվորի կնոջ կողմից էր: Անգլիացի մի ան-
հատ չորս ամսվա իր աշխատավարձի չափով գումար էր նվիրաբերել:
Աշխարհի տարբեր երկրներից նվերներ էին ուղարկել նաև բազմաթիվ
երեխաներ: Մինչ օրս էլ այդ պատմությունը մեծ պահանջարկ ունի»:
Այդ առիթով վերապատվելի Թրաուրբիջը Մասաչուսեթս նահանգի Բոս-
թոն քաղաքում գործող Օտարերկրյա առաքելությունների լիազորների
ամերիկյան խորհրդի գլխամասային գրասենյակի ավագ քարտուղար
Ջեյմս Լ. Բարթոնին գրել է. «Ի պատասխան Ձեր նամակի (մարտի 1,

1916)՝ ես անմիջապես Ձեզ ուղարկեցի «Կարմիր խաչով դրոշի»՝ ինձ մոտ եղած բոլոր օրինակները: Մենք ընդամենը տասներկուսն ունենք, իսկ աշխարհի բոլոր ծայրերից դեռ գրքի պատվերներ ենք ստանում: Վերջին նամակը, որ ստացել ենք, գրված էր Սեյլունի նահանգապետի կնոջ կողմից»: Արձագանքելով գրքի պատմությանը. «Սանդեյ Աքուլ Թայմզ» պարբերականը, ԱՄՆ-ում գործող կիրակնօրյա դպրոցների տարածուն ցանցի պաշտոնական ծայրը, հավաստիացրել է, որ իր ընթերցողները Մուսա լեռան հերոսամարտին մասնակից 4000 հոգուն Բելգիայում ծառայող տղա զինվորների հետ միասին համարում են «Թայմզ» ի ընտանիքի անդամներ:

Վերոնշյալ պատմությունը տպագրվել էր նաև 1915 թ. Լոնդոնի «Արարատ» ամսագրի նոյեմբերյան համարում, 1915 թ. դեկտեմբերի 1-ին՝ «Աուբլուք մեզըզին» ամսագրում, 1916թ.՝ «Նյու Արմենիա» ամսագրի հունվարյան համարում, իսկ դրանից կարճ ժամանակ անց՝ Նյու Յորքի «Իվնինգ Սան» ամսագրում: Ֆրանսիական և գերմանական թարգմանությունները լույս տեսան համապատասխանաբար 1916 և 1919 թթ.: Կարևոր այս գրառումը որպես հայոց ցեղասպանության վկայություն ներառվել է բրիտանական «Կապույտ գրքում», որը խմբագրվել է վիկոնտ Բրայսի կողմից և վերնագրվել՝ «Օսմանյան կայսրության վերաբերմունքը հայերի նկատմամբ 1915-1916 թթ.»։ Վերապատվելի Անդրեասյանի սույն փաստաթղթի մեքենագիր մեկ օրինակ պահվում է Բեյրութի Ամերիկյան համալսարանի արխիվում:

Պատվելի Անդրեասյանը հայերենով տպագրել է իր դասախոսության ավելի ծավալուն տարբերակը (68 էջ), վերնագրված «Զեյթունի անձնատվությունը և Սուլտիո ինքնապաշտպանութիւնը» (Կահիրե, Զ. Պերպերյան հրատարակություն, 1915): Առաջաբանում նա գրել էր. «... Իմ այս հակիրճ պատմական ակնարկը իրադարձությունների պարզ շարադրանք է, որը չունի վերլուծական եզրակացություններ և քննադատական ուսումնասիրություն»։ Այդ հայեցակարգերն արժարծվեցին քսան տարի անց, երբ հեղինակը հրատարակեց երկրորդ՝ խմբագրված և ընդլայնված տարբերակը, որը վերնագրվեց «Զեյթունի տարագրութիւնը և Սուլտիո ապստամբությունը» (Հալեպ, Քուլեջ Փրես, 1935):

Այս գիրքը 1935թ. տպագրված արևմտահայերենի արևելահայերեն տարբերակն է, որը հայոց ցեղասպանության հարյուրամյակի կապակցությամբ տպագրվել է Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության (ԱՅԱԸ) կողմից: Անկախ բարբառից՝ այնուամենայնիվ, այս գիրքը

մնում է Մուսա լեռան հերոսամարտի փաստացի իրադարձությունների ամենավավերական սկզբնաղբյուրներից մին:

Հարկ է նշել նաև, որ վերապատվելի Անդրեասյանը իր ժողովրդի պատմությանը և մշակույթին նպաստել է ևս մեկ աշխատությամբ. 1967 թ. ՀԽՍՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հրատարակեց վերապատվելի Անդրեասյանի մի կարևոր ուսումնասիրություն Մուսա լեռան բարբառի մասին՝ վերնագրված «Սվեդիայի բարբառը (Քիսթինըզի լեզուն)»:

1993 թ. ԱՅԱԸ-ը անգլերենով հրատարակեց վերապատվելի Անդրեասյանի՝ 1935 թ. լույս տեսած մասնակիցի եւ ականատեսի վկայությունը (թարգմանիչ՝ Քնարիկ Օ. Մենեշյան): Գրքի վերնագիրը, սակայն, փոքր-ինչ փոփոխվեց և անվանվեց «Փախուստ Մուսա Դադ կամ Զեյթունի աքսորը ու Սուլտիոյ ապստամբությունը»:

2000 թ. ԱՅԱԸ-ն Բեյրութում երրորդ անգամ վերահրատարակեց 1935 թ. հայերեն հրատարակված տարբերակը: Այն ներկայացվեց վերապատվելի Անդրեասյանի փեսայի՝ վերապատվելի Պարզև Տարագջյանի կողմից:

Կալիֆոռնիայի Ֆրեզնո քաղաքի «Մուսա լեռ» հայրենակցական ընկերակցությունը նույնպես վերահրատարակել է հայերեն տարբերակը: Վերջերս մի անանուն ընկերություն վերապատվելի Անդրեասյանի ընտանիքից գնել է գրքի իրավունքը, որպեսզի ականատեսի վկայություններ պարունակող այս գրքի հիման վրա նկարահանի փաստավավերագրական կամ մի այլ հատուկ ֆիլմ:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին Հայ Առաքելական եկեղեցին մարդկության դեմ այս սարսափելի ոճրագործության 1 500 000 միլիոն անմեղ զոհերին դասել է սրբերի շարքում:

Վաղուց ժամանակն է, որ հայ ազգը ստեղծի հերոսների մի նոր հայեցակարգ, այնպիսի հերոսներ, որոնք Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և դրանից հետո տիրող ծանր փորձությունների շրջանում անձնուրաց նվիրվել են մահվան դատապարտված իրենց ազակիցներին փրկելու գործին: Վերապատվելի Տիգրան Անդրեասյանը, անկասկած, կհամարեր այդ հերոսների շարքերը, հերոսներ, որ սիրված կլինեն, և որոնց գործին սերնդեսերունդ հետամուտ կլինեն:

Վահրամ Շեննասեան

ԱՐԵՎՍՏԱՅԱՅԵՐԵՆ Բ ՅՐԱՏԱՐԱՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Քսան երկար և իրադարձություններով լի տարիներ են իրար հաջորդել այն օրից, երբ առաջին անգամ հրատարակվեց այս գիրքը: Ըստ գրական աշխարհում ընդունված կանոնների՝ դժվար է արդարացնել այս վերահրատարակությունը, եթե նկատի ունենանք, որ ամենանշանավոր գրքերն անգամ, քսան տարի չանցած, մոռացության են մատնվում:

Այդուհանդերձ, մենք համարձակվում ենք վերստին կյանքի կոչել այս գիրքը՝ համոզված, որ մեր այս ձեռնարկն արդարացնող բավարար պատճառներ կան:

Առաջին պատճառն այս գրքի պահանջարկն է, որ միշտ էլ եղել է: Առաջին հրատարակության սպառման օրից մեզ պարբերաբար դիմել են այն ձեռք բերելու համար. բնականաբար, չենք կարողացել գոհացնել:

Երկրորդ պատճառն այն է, որ այդ օրերին զարհուրելի տանջանքների մեջ տվայտող հայության մեծ մասն անտեղյակ մնաց գրքում շարադրված իրադարձություններին, որոնք, ռոմանտիկական լինելուց բացի, աներկբայորեն մեր ազգային պատմության պատվաբեր էջերից են: Յուրաքանչյուր գիտակից հայի իրավունքն ու միանգամայն պարտականությունն է ծանոթանալ իր ազգակիցների՝ տարագրության այդ սև օրերի հուզումնալից ապրումներին և հերոսական քայլերին: Մանավանդ ապագա պատմագիրը պետք է իմանա այս ամենի մասին, որպեսզի գրի մեր ազգային պատմությունը: Շարադրելիս մենք նրան տալիս ենք այդ իրավունքը:

Երրորդ պատճառը, որ ստիպեց մեզ երկրորդ անգամ հրատարակել այս գիրքը, այն է, որ, դժբախտաբար, Սվեդիայի¹ հերոսամարտի մասին առաջին իսկ օրից փառամոլ անձինք հերյուրանքներ տարածեցին և ոչ ճիշտ հայտարարություններ արեցին: Մանավանդ քաղաքական կուսակցությունները մինչև այսօր չեն կարողանում նրա փառքը բաժանել իրար մեջ²:

Իրականությունն այն է, որ այս ինքնապաշտպանությունը ժողովրդական շարժում էր: Գուցե զենք հայթայթելու համար որոշ կուսակցություններ ավելի կամ պակաս ջանքեր են թափել: Այդ առումով չենք կարող հեղինակավոր խոսք ասել, բայց գիտենք նաև, որ չեզոքներն էլ նրանցից ոչ պակաս հետաքրքրված են եղել այդ առաջնահերթ խնդրով: Կուսակցականները և չեզոքները հավասարապես, իրենց համոզման և

արիության չափով, մղում էին ժողովրդին կամ ինքնապաշտպանության դիմելու, կամ ենթարկվելու թուրքական կառավարությանը: Իսկ բուն ապստամբության օրերին յուրաքանչյուր ոք դրսևորեց իր իսկական արժանիքները՝ անկախ կուսակցական կամ ոչ կուսակցական լինելու հանգամանքից:

Չորրորդ պատճառը, որ առիթ դարձավ այս գրքի վերահրատարակության համար, Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հոյակապ վեպն է², մի իսկական գլուխգործոց, բոլոր շրջանակների համար նրա փառավոր ընդունելությունը հանկարծ վերստին այժմեական դարձրեց Սվեդիայի ինքնապաշտպանության պատմությունը: Այս փառահեղ վեպն ընթերցող ամեն հայ և բազմաթիվ օտարներ բնականաբար հետաքրքրվելու են՝ իմանալու բուն՝ վիպային գունազարդումից գերծ իրականությունը:

Առաջին տպագրությունը հապճեպ էր: Այս հրատարակությունը հնարավորություն տվեց հանգամանորեն գրելու դեպքերի և դեմքերի մասին և, խրատվելով անցյալի փորձառությունից, հարկ համարեցինք հնարավորինս հակառակ հանվանե հիշատակել [ինքնապաշտպանության] վարչական կառույցներում պաշտոնավարած անձնավորություններին:

Սրբագրելու քիչ բան ունենք ՁեՅԹՈՒՆԻ ՏԱՐԱՎՐՈՒԹՅԱՆ պատմության մեջ կամ ավելացնելու նրան: Մեր գլխավոր նպատակը նորոգելն է և հավերժացնելը թանկագին հիշատակը այն քաղաքի, որ երկար ժամանակ եղել է հայության փառքն ու պարծանքը: Դա չեմ անջատում ՍՎԵԴԻԱՅԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԻՑ, քանի որ երկուսն էլ իմ կյանքի փորձառության հրաբորբոք բովում առհավետ միաձուլվել են: «Այն, ինչ Աստված միավորել է, թող մարդը չանջատի»:

Շնորհակալությամբ վերհիշում ենք վեր. Գ. Խանդամուրի³ օժանդակությունն այս աշխատության առաջին հրատարակության ժամանակ. նա ազնվաբար բարեփոխել է լեզվական տեսակետից սրբագրության կարոտ ինչ-ինչ բառեր ու արտահայտություններ:

ՏԻԳՐԱՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

20 հունիսի 1935 թվական

**ԱՐԵՎՍՏԱՅԱՅԵՐԵՆ Ա ՅՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ**

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՒՆ

Ոչխարի պէս ալ՝ մորթուիլ, մի՛ տար, Տէ՛ր,
Իրաւ, Յայն ալ թէ ազատ ես ստեղծեր.
Թէ մեզ ապրիլ չես կամենար մարդկօրէն,
Առիւծի պէս գէթ թող մեռնիլ կամքդ ներեն:

Ստրուկի պէս թոյլ մի՛ տար որ վատօրէն
Մեր մահն անգամ զագանաբար գործադրեն,
Ալ կը բաւեն մահու խժողութ գործիքներ,
Չոր դարերով հայուն վրայ են փործեր:

Թէւ մահն իսկ մեզի համար ալ շատ էր,
Երբ ոչ մէկ գետ այնքան արիւն կը հոսէր,
Որքան Արաքս, Եփրատ, Տիգրիս ու Ճիհան,
Ուր անպատուած կոյս դիակներ պահուեցան:

Բայց թէ չկայ ազատ ապրիլ մեզ համար,
Այսքան ազատ ցեղերու մէջ անհամար,
Գէթ մեր մահը ազատ ըլլայ եւ արդար,
Մարդու պէս, Տէ՛ր, մեզ մեռնիլ տուր քաջաբար:

ԱԿԻԼԻՆԷ՜4

11 Նոյեմբեր 1915
Գահիրէ

Ա ՄԱՍ

ՁԵՅԹՈՒՆԻ ՏԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



Ա

Քսան երկար և իրադարձություններով լի տարիները չկարողացան փոխել զգացումների այն անօրինակ հոսանքը, որ, ինչպես մեր ազատագրության վաղորդայնին Պոր-Սաիդ գաղթավայրում, այժմ էլ պարուրում է իմ հոգին ամեն անգամ, երբ վերհիշում եմ 1915 թվականի իրադարձությունները՝ Ձեթունից մինչև Պոր-Սաիդ: Այսօր էլ տակավին վիշտն ու ուրախությունն առեղծվածային միախառնումով համակում են իմ ողջ էությունը, երբ ամեն անգամ իմ խորհրդածությունների և հիշողության աշխարհում մղվում եմ վերապրելու 1915 թվականը: Ուրախությունը կայտառ ու գեղեցիկ հավերժահարսի նման հարություն է առնում իմ սրտում, երբ հիշում եմ, թե ինչպես երկար ու տաժանագին մաքառումներից հետո, մենք՝ 4200 հոգի, վերջապես ափ իջանք մի ազատ երկրում՝ մեր հետևում թողնելով հուսախաբ ու պարտված թշնամուն: Բայց իմ տրտմությունն անհուն է դառնում, երբ հիշում եմ, թե ինչպես լքվեց և վերջնականապես կործանվեց հերոսների արծիվ-քաղաքը՝ պանծալի Ձեթունը, որ հայի քաջության փառքն ու պարծանքն է եղել դարերով: Եկեղեցիները, որոնց զմբեթներից խունկն ու աղոթքն այնքան երկար տարիներ երկինք էին բարձրացել, այսօր, ավերակների վերածված, արծազանքում են բվերի տխուր վայումներին: Կանաչազարդ բլուրները, որտեղ հայ հովվի և հովվուհու սրնգի ծայնով մակաղում էին ոչխարներն ու գառները, այսօր չարի ոտքերի տակ թառամած ու խանձված ողբում են կորուստը իրենց հարազատ տերերի: Թուրք գյուղացին և արյունարբու ու վայրենի բռնակը՝ լակում են զուլալ ջրերն ու աղբյուրները և վայելում

այն, ինչ մնացել է անմահական այգիներից ու մրգաստաններից, որոնց մեծ մասը, նրանց ծուլության և անհոգության պատճառով, անտարակույս արդեն վերածվել է խոպանի: Իսկ հերոսական գեթունցուն, որ հայության երգն ու տաղն էր երգել դարերով, հեռավոր անապատներ քարշ տվեցին. նա ընկավ թուրքի, քրդի ու արաբի վայրենի յաթաղանի տակ: Սպարտական⁶ կանայք ու աղջիկները, կորցրած իրենց պատիվն ու օջախը, իրենց մագերեն են փետտում լալահառաջ: Այդ հերոսական ժողովրդի ընդամենը մի փոքր մասն է վերապրում այսօր՝ ցաքուցրիվ եղած աշխարհի չորս կողմերը: Լոնգֆելլո⁷ է հարկավոր՝ քսաներորդ դարի այս Գրանփրեի⁸ դժբախտությունը ողբալու համար: Սակայն, դժբախտաբար, Լոնգֆելլո չէ այն մարդը, որը փրկվել է՝ Դոբի⁹ համբերությամբ տարած այս արհավիրքի մասին պատմելու համար:

1914 թվականի հուլիսի 8-ին ընտանիքիս հետ հասա Ձեյթուն՝ որպես տեղի ավետարանական եկեղեցու քարոզիչ: Հագիվ մեկ ամիս էր անցել, երբ օգոստոսի 10-ին թուրքական կառավարությունը զորաշարժ հայտարարեց, և սկսվեց անվերջ տառապանքը:

Ըստ զորաշարժի կանոնների՝ պահանջվում էր, որ, մինչև պահանջված ժամկետը, 45-ից ցածր տարիքի յուրաքանչյուր տղամարդ դիմի զինվորական իշխանություններին՝ իր վկայագիրը (վեսիթա¹⁰) ստանալու և ամեն ռոպե պատրաստ լինի զինակոչի հրամանին: Չհնազանդվողը դատապարտվելու էր մահվան:

Ձեյթունը զինվորական կենտրոններից էր: Ամեն օր հազարավոր զինվորացուներ էին բերվում Ձեյթունի զորանոց, և քանի որ քաղաքում հյուրանոց չկար, բոլորը հյուրընկալվում էին զեյթունցի ընտանիքներում:

Եվ ահա զեյթունցու համար սկսվեց անհանդուրժելի կյանքը: Չինվորական ծառայությանն անվարժ զեյթունցին գիտակցում էր, որ թուրքին ծառայելը չէր նշանակում ծառայել ընդհանուր հայրենիքին և մարդու իրավունքներին, այլ, ընդհակառակը, նշանակում էր կռվել քաղաքակրթության դեմ և նպաստել իր իսկ շղթաների ամրացմանը: Դրա համար էլ զեյթունցին հաճախ խուսափում էր զինվորական ծառայությունից: Սակայն ներկա պարագայում կացությունն ավելի ծանր էր: Թուրքիան դեռևս պատերազմի մեջ չէր մտել: 45-ից ցածր տարիքի բոլոր տղամար-

դիկ զորակոչին հնազանդվե՞ն: Կարելի էր չկասկածել, որ այս կերպ քաղաքն իր քաջ տղամարդկանցից դատարկելուց հետո թուրքական կառավարությունը դյուրությամբ ամայացնելու էր Ձեյթունը՝ հանկարծակի հարձակումով: Ձեյթունցին անսաց ընդվզման իր պատմական բնագրին: Ժանդարմներն իզուր էին հալածում փախստականներին:

Պետք է իմանալ, սակայն, որ միայն զեյթունցին չէր խուսափում զինվորական ծառայությունից. թուրք և քրիստոնյա փախստականները վխտում էին ամենուր, մասնավոր՝ լեռնային վայրերում:

Այդ ժամանակ էլ զեյթունցիներն անում են առաջին անխոհեմ քայլը: Մի օր զեյթունցի էշկիաներ¹¹՝ մոտ 25–30 հայ երիտասարդներ, հարձակվում են Մարաշ գնացող մի քանի հարյուր թուրք անզեն զինվորների վրա, կողոպտում նրանց, մի քանիսի մորուքի կեսն ածիլում ու բաց թողնում՝ մասնավոր բարևներ ուղարկելով Մարաշի մութասարիֆին¹²:

Հարկ չեղավ երկար սպասել այդ անխոհեմ արարքի պտուղները հնձելու համար: Օգոստոսի վերջերին Մարաշի մութասարիֆ Հայդար փաշան¹³ 600 զինվորների հետ Ձեյթունի ճանապարհին էր: Ինչպես պատմեցին նրա հետ եկած մի քանի հայ զինվորները, Հայդարը ճանապարհին սաստիկ վախենում էր: Հավանաբար, նա զեյթունցիների դիմադրության էր սպասում: Ձեյթունցիները ճիշտ ժամանակին ստացել էին անհրաժեշտ տեղեկությունները: Աղաները¹⁴ տևականորեն խորհրդակցում էին: Ի՞նչ էին անելու: Եղիա աղա ենիդունյայանը^{14*} խորհուրդ է տալիս իր հորեղբորորդի Նազարեթ Չավուշին¹⁵ 500–600 զինված կտրիճներով անմիջապես դիմավորել Հայդարին, նաև նրան հիշեցնում է, որ փաշայի այցի նպատակը չարագուշակ է թվում: Սակայն Նազարեթ Չավուշը պատասխանում է՝ ո՛չ: «Դնարավոր է, որ այդ մարդու գալուստն ինձ համար մահ նշանակի, բայց թող որ ես մեռնեմ, որպեսզի Ձեյթունն ազատվի, որովհետև լավ գիտեմ, որ հիմա դիմադրության ժամանակը չէ»:

Նազարեթ աղան այդ խոսքերով արտահայտում էր ժողովրդի ընդհանուր մտայնությունը: Ողջամիտները բացարձակապես անկարելի էին համարում հաջող դիմադրությունը, քանի որ թուրքական հսկայական բանակները մեծաքանակ զինամթերքով, կազմ ու պատրաստ սպասում էին շրջակա մոտ ու հեռու բոլոր կենտրոններում: Ձեյթունն իր ամենահզոր ու լավ կազմակերպված շրջանում միայն մեկ ամիս էր կարողացել պատե-

6064

9



րազմել անհավասար՝ թուրքական մեծ ուժերի դեմ. եվրոպացու բարեկամական միջամտությունը փրկել էր նրա պատիվը: Սակայն հիմա անկարելի էր եվրոպայից միջամտություն ակնկալելը, քանի որ նա, դժբախտաբար, կենաց ու մահու խնդիր ուներ արդեն: Մյուս կողմից՝ Ձեյթունը չունեի 95-ի պատրաստությունները¹⁶, ողջ Ձեյթունում կար հազիվ երկու հարյուրի չափ «Մարթին»¹⁷ անբավարար զինամթերքով: Բացի դրանից՝ դեռ բերքահավաքի ու պարենավորման ժամանակը չէր, որով և դիմադրությունը գրեթե անկարելի էր դառնում: Փաշան էլ չէր մոռացել հարկ եղած նախազուշական միջոցները գործադրել իր ձեռնարկի հաջողության համար, ինչպես նաև իր հետ Մարաշից բերել էր մի քանի հայ երևելիների, որպեսզի նրանք իրեն օգնեին աղաներին համոզելու:

Սկզբում Չայդարը մեծ բան չպահանջեց՝ միայն էշկիաներին՝ և ուրիշ ոչինչ: Ձեյթունցիները, իրենք էլ զգված նրանցից, որ, իրենց նախնիների հայրենասիրական ճանապարհից շեղվելով, վերածվել էին սովորական հրոսակախմբերի, համաձայնեցին նրանց հանձնել: Առաջինը Նազարեթ Չավուշն իր եղբորորդուն՝ էշկիաներից մեկին, բռնեց ու հանձնեց կառավարությանը: Շուտով բոլոր զեյթունցիները հետևեցին նրա օրինակին, և բոլոր էշկիաները ձերբակալվեցին:

Սակայն խաբեբա Չայդարն այդքանով չբավարարվեց: Հաջորդ օրը ձերբակալեց աղաներին և նրանցից զենք պահանջեց: Գավազանի հարվածներն ստիպում էին աղաներին հանձնել զենքերը: Դժբախտ զեյթունցիների ներբաններին այնքան սաստիկ էին հարվածում, որ ոտքերն սկսում էին ուռչել, և նրանք օրերով չէին կարողանում քայլել: Խոշտանգվողների աղաղակներն անլսելի դարձնելու համար անդադար թմբուկ էին խփում, իսկ թուրք խուժանը, շրջապատելով տեղանքը, այս ամենին խառնում էր իր ցնծության հայիոյանքներն ու մոլեռանդ երգերը: Հաճախ, ինչպես Նազարեթ Չավուշի դեպքում էր, խոշտանգվողի բերանին բարձ էին դնում, որի վրա մի պաշտոնյա էր նստում, իսկ մյուսները շարունակում էին հարվածել: Այս խոշտանգումներից զերծ մնացած ակամատեսներն իրենք իրենց համարում էին վերջին դատաստանը տեսած ու դժոխքից ազատված:

Այսպես՝ Չայդարը հաջողեց հավաքել քաղաքի ամենաընտիր զենքերի մեծ մասը՝ մոտ 150 «Մարթին», նաև բազմաթիվ սովորական հրացաններ: Ընդամենը մեկ «Մարթին» ունեցողներից շատերն ստիպված էին 1-2 հատ գնել ուրիշներից, որով գոհացնում էին փաշայի պահանջը և ազատվում ստույգ մահից:



Ձերբակալված զեյթունցիների պատմությունը մի քանի օրվա տարբերությամբ ամփոփվել է երեք խմբանկարում: Ըստ պատմական ակնարկի առաջին խմբանկարը Ձեյթունի զորանոցի բակում է, երկրորդը՝ Մարաշի զինվորական պահեստի առջև, երրորդը՝ Մարաշի կառավարչատան բակում: Ներկայացված խմբանկարում (երրորդ լուսանկար) վերևի շարքում ձախից կանգնած է Մարաշի գավառապետ Չայդար փաշան՝ շրջապատված թուրք զինվորներով ու պաշտոնյաներով:

Թուրքական իշխանությունները, չհանդուրժելով Ձեյթունի կիսանկախ վիճակը, հաճախ այնտեղ էին ուղարկում պատժիչ արշավախմբեր: Նման մի արշավախումբ շուրջ 600 հոգի, 1914 թ. օգոստոսին Մարաշի նոր կառավարչի՝ ազգայնամուլ և հայատյաց Ալի Չայդար փաշայի զխավորությամբ մտնում է Ձեյթուն և, սուտ խոստումներ տալով, ձերբակալում Ձեյթունի երևելիներին, իսկ մյուսներին զինաթափում է: Ձերբակալվածների թվում էին Նազարեթ Չավուշ Նորաշխարհյանը (լուսանկարի ներքևի շարքի մեջտեղում զլիկոր կանգնածն է), Փանոս Չոլաքյանը, Նշան Խաչերը, Ավետիս Պատանյանը, Հաճի Մարկանյանը և այլք:

Ձեյթունում ձերբակալվածներին մինչև Մարաշ տանելը նվաստացնում են. Մարաշի գավառապետը, ի նշան իր «փառավոր հաղթանակի», երեք անգամ լուսանկարվում է նրանց հետ: Հետագայում այդ երեք խմբանկարները՝ որպես նրա «սխրանքի» ապացույց, ի ցույց դրվելով բոլորին, թաղվում են նրա հետ:

Լուսանկարը՝ Հայաստանի ազգային արխիվի հավաքածուից

Այս բոլոր վատ ու անգութ արարքներից հետո Հայդարը ձերբակալված էշկիաների ու գրեթե բոլոր աղաների հետ հաղթականորեն վերադառնում է Մարաշ, որտեղ պարծենում է, թե էշկիաներին ձերբակալել է զենքի ուժով: Փաշան իր հետ տարել էր նաև գեթունցի բոլոր զինվորներին:

Այս կերպ է ավարտվում աղեխարշ ողբերգության առաջին արարը:

Դ

Սակայն դադարը երկար չի տևում: Մեկ ամիս անց աղաներն ազատ են արձակվում բանտից՝ բացի Նազարեթ Չավուշից, որին միայն մահն էր ազատել գավազանների անվերջ հարվածներից: Ձեյթունցի զինվորներից շատերը, թուրքական բանակից փախչելով, վերադարձան Ձեյթուն՝ քաղաքը նորից մատնելով տագնապալի կացության: Սա հիանալի առիթ էր տալիս գեթունցուն ճնշելու և նրան ապստամբության մղելու համար՝ փախստական զինվորներին ձերբակալելու պատրվակով: Վրեժխնդրության սև ժահրով լցված երկու վատահամբավ գործիչներ՝ Հյուսեյն Հյուսնի կայմակամը¹⁸ և ժանդարմերիայի¹⁹ հրամանատար Սուլեյմանը, որոնք Բալկանյան պատերազմի²⁰ ժամանակ ամեն ինչ թողած հազիվ ճողոպրել էին, քրիստոնյա ժողովրդին հալածելու համար ամենահարմար թեկնածուներն էին՝ Հայդարի առաջնորդությամբ: Ցավով ենք հիշում, որ այս երկուսին, ինչպես համոզված էին մյուս աղաները, միացել էր Ձեյթունի աղաներից Հայկ Ասմինյանը²¹՝ դատելով բազմաթիվ երևույթներից: Կառավարությունը վերջինիս քաղաքապետ էր կարգել՝ որպես վարձատրություն լրտեսության ու մատնության նրա չարանենգ ծառայությունների համար:

Արդարացի էին փախստական զինվորներին ձերբակալելու կառավարության քայլերը, բայց անիրավացի էին նրանց բռնելու համար գործածած հակամարդկային միջոցները: Մի գիշեր Հյուսեյնի և Սուլեյմանի ուղարկած ժանդարմները հանկարծակի պաշարում են մի փախստականի տուն, և երբ վերջինիս այնտեղ չեն գտնում, սկսում են անգործն ծեծել նրա եղբայրներին և ծեր հորը: Հաճախ փախստականի կնոջը, մորը կամ քրոջը պառկեցնում էին, ոտքերը բարձրացնում և վայրագործն ծեծում հաստ փայտերով:

Իրավիճակն ավելի ու ավելի էր անհանդուրժելի դառնում: Դրան մի դարձան գտնելու հույսով աղաների և հոգևոր պետերի միացյալ ժողո-

վը²² որոշում է, որ երեք հոգևոր պետերը՝ առաջնորդ Խաչատուր վրդ. Տեր-Ղազարյանը, հայ կաթոլիկների հոգևոր հովիվ Յովսեփ վրդ. Ազրեայանը և այս տողերի հեղինակը, դիմեն կայմակամին՝ խնդրելով խնայել անմեղներին: Սուրբ հայրերը հազիվ էին ներկայացրել խնդիրը, Հյուսեյնը որոտում է. «Ի՞նչ եք ասում: Ժողովուրդն իր չափը շատ է անցել: Մեր արածը դեռ շատ քիչ է: Օսմանյան կառավարությունը, կրկին գթասրտություն ցուցաբերելով, մինչև հիմա հանդուրժում է: Աստված վկա, եթե մեր փոխարեն ուրիշ պետություն լիներ, Ձեյթունը վաղուց ունակոծած ու քարուքանդ արած կլիներ»:

Առարկելով՝ պատասխանեցի. «Բեյ էֆենդի²³, զարմանում եմ ձեր այս հայտարարության համար: Մենք էլ ամբողջովին անտեղյակ չենք աշխարհից: Ո՞ր կառավարությունը տասը-քսան փախստականի համար կոմբակոծեր իր քաղաքը՝ անգլիակա՞ն, ֆրանսիակա՞ն, գերմանակա՞ն, ո՞ր մեկը: Եթե դուք Ձեյթունը օտար և թշնամի քաղաք եք համարում, իրավացի եք: Մի՞թե Ձեյթունն օսմանական քաղաք չէք համարում»:

Խոսքս անպատասխան մնաց: Այնուամենայնիվ, նա միանգամայն անդրդվելի տոնով ասաց. «Խրատեցեք ժողովրդին, որ առանց այլևայլության հնազանդվի կառավարության, հակառակ դեպքում նրանց վիճակը շատ ավելի վատ է լինելու»:

Եղան այնպիսիք, ովքեր անձամբ իրենց որդիներին կառավարությանը հանձնելուց հետո էլ չկարողացան զերծ մնալ խոշտանգումներից, քանի որ որդիները նորից խույս էին տվել, իսկ նրանք չգիտեին որդիների տեղը: Բազմաթիվ մարդիկ էլ անխնա խոշտանգվեցին ու հալածվեցին իրենց փախստական հարևանների կամ թաղեցիների համար: Ավելի ծանրակշիռը պատվի հարցն էր: Կանանց և աղջիկներին երբեմն բռնաբարում էին:

Ձերբակալված փախստականներին էլ խոշտանգում էին զորանոց բերելու ճանապարհին: Ջորակոչի առաջին հրավերին հնազանդվողներն անգամ չէին կարողանում զերծ մնալ ծեծուջարդից:

Փախստականներին ձերբակալելու պատրվակով կառավարությունն ամիսներ շարունակ արգելեց արևամուտից հետո տնից դուրս գալը: Կացությունն աստիճանաբար անհանդուրժելի էր դառնում: Ակնհայտ էր, որ գեթունցու խրոխտ հոգուն կուտակվող պատվի ու վրեժխնդրության զգացումները մի օր հանկարծ պռոթկալու էին:

Փետրվարի ավարտին վերջապես այդ օրը հասավ: Կառավարությունը, զենքի կարիք ունենալով, բոլոր ժանդարմների զենքերը՝ ընդամենը երեք-չորս հարյուր հատ, հավաքել էր կառավարչատանը, որտեղից ուղարկելու էր Մարաշ: Դրանց փոխարեն «վինչեստերներ²⁴» էին բաժանել ժանդարմներին: Ապստամբելու ճիշտ պահն էր: Մի քանի հարյուր զեյթունցիներ վերջնականապես որոշում են այդ գիշեր հարձակվել կառավարչատան վրա: Սակայն վերջին պահին լուրը հաղորդվում է աղաներին, որոնք, մանավանդ՝ Պապա աղա Բասիլոսյանը²⁵, որ ամենապատկառելին էր, շատ վտանգավոր և վաղաժամ են համարում նման քայլը և մեծ դժվարությամբ ի վերջո հաջողում են համոզել հրաժարվել այդպիսի վտանգավոր նախաձեռնությունից:

Կառավարությունը, իմանալով ամեն ինչ, հաջորդ օրն իսկ անմիջապես ձերբակալում է ըմբոստների մի մասին ու բանտարկում: Սակայն ամենահանդուգները՝ քսանհինգ խրոխտ երիտասարդներ, բարձրանում են լեռ և, երկու օր անց, կտրելով Մարաշ գնացող մի խումբ ժանդարմների ճանապարհը, սպանում են նրանցից իննին, իսկ ողջ մնացածներից մի քանիսը կարողանում են փախչել:

Ազդանշանը տրվել էր: Հյուսեյնն ու Սուլեյմանն անմիջապես հասկանում են դրա իմաստը: Գայլերն անմիջապես դառնում են գառնուկ: «Ես, ասում էր Հյուսեյնը, զեյթունցիներին սխալ են հասկացել: Ես վատ մարդ չեմ, բայց չեմ կարողացել հասկանալ զեյթունցիների հոգեբանությունը: Եթե Աստված ինձ կյանք պարգևի, ես նրանց համար բարի գործ եմ անելու»:

Հյուսեյնը խոստանում է դուրս չգալ հեռագրատնից՝ առանց ըմբոստների համար ներում ստանալու: Մյուս բոլոր պաշտոնյաները, բնականաբար, նրան էին հետևում, և միասին աղաներից զթություն հայցում:

Իսկ ի՞նչ էին մտածում աղաները: Դժբախտաբար, նրանք միաբան չէին: Ոմանք կողմնակից էին ապստամբության: Առավել խտիճները պարզապես հիմարություն էին համարում դիմադրությունը: Կային նաև ուրիշներ, որոնք տարուբերվում էին այս երկու հոսանքների միջև: Խնդիրը շատ պարզ էր ողջամիտների համար. ըստ նրանց՝ ապստամբությունը չէր կարող հաջող ելք ունենալ: Թեև թուրքը պատերազմ էր հայտարարել, բայց պատերազմը դեռ չէր սկսվել²⁶: Միայն թեթևակի հարձակումներ էին եղել Դարդանելի վրա, որից հետո ամենուր նորից

լռություն էր տիրել: Հսկա բանակներ կազմ ու պատրաստ սպասում էին մարտի մեջ մտնելու՝ հարյուր վաշտ՝ Դամասկոսում, վաթսուհ վաշտ՝ Հալեպում, քառասուն վաշտ՝ Ամրկում և Բեյլանում²⁷, հիսուն վաշտ՝ Օսմանիեում²⁸, և այլն: Իսկ Ջեյթունն անհրաժեշտ քանակի զենք ու զինամթերք չուներ, թեև այս անգամ բավականաչափ պարեն ուներ: Ոմանք մտորում էին, որ նույնիսկ առատ զենք ու զինամթերքով փոքրիկ Ջեյթունը չի կարողանա երկար ժամանակ դիմադրել կազմակերպված պետական բանակին: Շատերն են հարցնում, թե ինչո՞ւ զեյթունցիները հանձնվեցին: Եթե Ջեյթունը նույնիսկ դիմադրեր, միևնույնն է, ոչնչանալու էր, որովհետև պայմանները նպաստավոր չէին: Այս հարցում պատասխանատվության մեծ բաժինն ընկնում է ըմբոստացող երիտասարդների վրա, որոնք շտապեցին: Ջեյթունցիները պետք է ժամանակ շահեին՝ ի հարկին կաշառելով Հյուսեյնին ու Սուլեյմանին: Պարզ էր, որ թուրքական բանակներն անվերջ անգործ չէին մնալու: Ջեյթունը կարող էր մեկ-երկու ամիս ևս ժամանակ շահել՝ մինչև թուրքական բանակները մեկնեին պատերազմի դաշտ, և միայն այդ ժամանակ ապստամբության դրոշ պարզեր²⁹:

Ժանդարմներին սպանող զեյթունցի փախստականները վերադառնում են Ջեյթուն և ապաստանում վանքում: Մի երեկո նրանք փորձում են գրավել կառավարչատունը: Մինչև կեսգիշեր կատաղի կռիվներ են մղվում ժանդարմների դեմ, բայց անհաջող, քանի որ զեյթունցիներն իրենց չեն միանում սպասվածին պես, ինչպես կիուսային: Ընդհակառակն, որոշ հայեր դիմադրում են վանքի պաշտպաններին: Կռիվն ավարտվում է մի քանի ժանդարմների և մի քանի զեյթունցի չեզոքների մահով:

Սակայն թուրքական բանակի զինվորներն աստիճանաբար շատանում էին զորանոցում: Նրանց թիվը հասավ 5000-ի: Մինչ թուրք զինվորները զորանոցի շրջակայքում մարզումներ էին անում, հայ էլկիաները նրանց դեմ դիմաց՝ վանքի տանիքի վրա, զինավարժություն էին կատարում և ծաղրում թուրքական բանակին: Իսկ կյանքը լուռ ու մուռջ շարունակում էր իր ընթացքը, և կառավարությունը որևէ գործողություն չէր սկսում:

միջ հետադարձ աստիճանային շրջանում և զարգացող
նոր հասարակական կառույցներում՝ նոր հարաբերակցություններ
գոյություն ունենալու են:

Մարտի 24-ին Մարաշի երևելիների նոր պատվիրակություն է հաս-
նում Ջեյթուն: Կառավարությունն սպասում էր նրանց գալստյանը: Պատ-
վիրակության կազմում էին վեր. Ա. Շիրաջյանը³⁰, տեր Սահակ քահա-
նան³¹, մի կաթողիկ վարդապետ, գերմանացի միսիոներ հեր³² Բլանկը³³
և մի քանի այլ երևելիներ: Նրանք անմիջապես հրավիրում են քաղաքի
աղաների ու հոգևոր պետերի ժողով: Մեր կացության վտանգավոր և
ծանր հանգամանքը պարզելուց հետո նրանք մեզ հայտնեցին կառավա-
րության միակ պահանջը՝ ասել էշկիաների տեղը և մինչև վերջ պահպա-
նել կատարյալ չեզոքություն. «Այդ դեպքում կառավարությունը խոստա-
նում է երբեք չխռովել անմեղ ժողովրդի անվտանգությունը»: Պատվիրա-
կությունը խորհուրդ է տալիս, որ սրտանց ընդունենք կառավարության
առաջարկները, և հիշեցնում է, որ հակառակ դեպքում վտանգվելու է ոչ
միայն Ջեյթունի գոյությունը, այլև, հավանաբար, անխնա կոտորվելու է
Կիլիկիայի ողջ հայությունը:


Այդ օրերին Ջեյթունում ստանում են նաև Սահակ կաթողիկոսի³⁴ հե-
ռագիրը, որով զեյթունցիներին հորդորում էր հնազանդվել կառավարու-
թյանը: Վեհափառ հայրապետի գլխավոր մտահոգությունը Կիլիկիայի
հայության անվտանգությունն էր³⁵:

Աղաների մեծ մասն արդեն համամիտ էր այդ գաղափարին: Այժմ հա-
կառակ կարծիք ունեցող փոքրամասնությունն էլ հարկադրված էր հա-
մակերպվել: Առաջարկն ընդունվեց, և կառավարությանը տեղեկացվեց,
որ էշկիաները վանքում են:

Երբ Ջեյթունի կառավարությանը հասանք Մարաշի մարտի 24-ին
հասարակական կառույցներում իրականացված փոփոխությունների
և նրանց հետևանքների մասին, նրանք հարկադրված էին համաձայն
գալու Մարաշի կառավարությանը:

Հաջորդ օրը՝ մարտի 25-ի առավոտյան ժամը կեսին (ըստ թուրքական
ժամանակացույցի)³⁶, վանքի վրա նետվում է թնդանոթի առաջին ռումբը,
և էշկիաների ու թուրքական բանակի միջև սկսվում է կռիվը: Մարաշի նոր
մութասարիֆը, որ այդ օրերին Ջեյթունի զորանոցում էր, առաջարկում է
պաշարել վանքը: Բայց ալայ-կոմանդանը³⁷ հորշիղը մերժում է՝ ասելով,
թե էշկիաները երկու ժամից իր ձեռքում կլինեն՝ ողջ կամ սպանված:

Բուն պատճառը, որ հորշիղը խուսափեց պաշարել վանքը, հավա-
նաբար այն էր, որ այդ դեպքում նա պետք է վանք մտներ արևմտյան



ՋԵՅԹՈՒՆ

կողմից՝ վանքի և Ջեյթունի միջակա տարածքից, որի անվտանգությա-
նը կասկածում էր, կամ էլ հյուսիսից՝ վանքի և հարող լեռան կողմից,
որը նույնպես վտանգավոր էր:

Կռիվն աստիճանաբար սաստկանում էր: Մի քանի հազար զինվոր
անընդհատ հարձակվում էր ու զնդակոծում վանքը: Բայց էշկիաները
կատարյալ պաղարյունությամբ ու քաջությամբ պատասխանում էին
նրանց՝ առանց իրենց սակավաթիվ փամփուշտներն իզուր վատնելու:

Վանքը Ջեյթունի դեմ դիմացն էր, և զեյթունցիները հնարավորություն
ունեին հետևելու կռիվի ընթացքին, տեսնելու բլուրներից ցած գլորվող
թուրքերի դիակները: Երեկոյան թշնամին շատ էր առաջացել. մի խումբ մո-
տեցել էր վանքի դռանը: Նրանք իրենց հետ թիթեղյա տարաներով նավթ
էին վերցրել վանքը հրկիզելու համար: Հանկարծ էշկիաները բացում են
վանքի դուռը և, թշնամու վրա կրակ թափելով, սպանում բազմաթիվ զին-
վորների ու մեկ հազարապետի՝ ուղիղ վանքի դռան առաջ: Այդ ժամանակ
թուրքական թնդանոթի արձակած ռումբերից մեկն ընկնում է թուրք զին-
վորների մեջտեղում՝ ստիպելով նրանց խառնաշփոթ նահանջել:

Ճակատամարտը տևում է տասներկու ժամ: Այդուհանդերձ, հորշիղը
չի կարողանում գերեվարել էշկիաներին՝ «ողջ կամ սպանված»: Երբ

վրա է հասնում գիշերը, էշկիաները լքում են վանքն ու բարձրանում լեռ: Նրանցից մեկ-երկու հոգի միայն թեթևակի վիրավորվել էին, իսկ թուրքերի կորուստը մեծ էր՝ 200-300 սպանված կամ վիրավոր: Ըստ մուֆթի-ի³⁸ տեղեկության, որը նա հաղորդել էր հաջորդ օրը՝ աղաների ժողովին, թշնամին ունեցել է 101 սպանված ու 110 վիրավոր:

Ը

Հաջորդ օրը՝ մարտի 26-ի առավոտյան, թուրքական բանակը կրկին հարձակվում է վանքի վրա՝ մեծաքանակ փամփուշտ սպառելով՝ կարծելով, թե էշկիաները դեռ այնտեղ են: Այդ ընթացքում աղաներն ու հոգևոր պետերը ժողով էին գումարել սուրբ Աստվածածին եկեղեցու վերնատանը՝ կացության մասին խորհրդածելու և հնարավոր խելամիտ ընթացք որոշելու համար: Հանկարծ դրսում՝ փողոցում խռնված ժողովրդի մեջ իրարանցում է սկսվում: «Վա՛նքն են այրում, վա՛նքն են այրում», - աղաղակում էին: Իսկապես ծխի սև ու թանձր քուլաներ էին բարձրանում վանքից: Ժողովուրդը բորբոքվում էր և ալեկոծվում: Քիչ էր մնում՝ ապստամբություն բռնկվեր: Ժողովը որոշում է, որ Հայր Արեպյան վարդապետը և տողերիս հեղինակը ժողովի անունից գնան բողոքեն կայմակամին: Գնացինք: Կայմակամը փախել էր զորանոց. նրան փոխարինում էր կադի³⁹: Սրան պատմեցինք եղելությունը և բողոքեցինք՝ պնդելով, որ կառավարությունն իրավունք չունի այրելու հայկական վանքը՝ մի քանի ըմբոստ երիտասարդների պատճառով: Մեր բողոքը հեռախոսով փոխանցեցին ալայ-կոմանդանդին: Խորշիղը ժխտեց եղելությունը: Երբ վերադարձանք, ծուխը բոցերի էր վերածվել: Կրկին վազեցինք կադիի մոտ և կրկնեցինք մեր բողոքը: Խորշիղն այլևս անկարող էր թաքցնել իր արարքը, բայց, կրկին անգիտակ ձևանալով, սկսեց իր կեղծ բարկությունը թափել զինվորների վրա և հայտարարեց, որ կիրամայի անմիջապես հանգցնել կրակը: Խորշիղը պարզապես ստում էր: Մինչև մեր վերադարձը վանքն ամբողջությամբ բոցերի մեջ էր:

Անցել էր տասնհինգ օր, նոր դեպք տեղի չէր ունեցել, բայց մարդիկ ամեն օր էին վախենում չարաշուք վտանգից: Ապրիլի 9-ին աղաներին հանկարծ կանչում են զորանոց: Բոլորն էին մեծ հետաքրքրությամբ ու երկյուղով սպասում նրանց վերադարձին: Բայց կեսօրին մոտ նրանցից ընդամենը մի քանիսն են վերադառնում: Մյուսների ընտանիքներին ան-

միջապես տանում են զորանոց՝ իրենց հարազատների մոտ, և այնտեղից քշում դեպի անծանոթ վայրեր, որտեղ մահն էր նրանց սպասում: Սրանք առաջին տարագրյալներն էին:

Ձեթունցիները սրա դառն իմաստը չեն հասկանում: Նրանք ասացին. «Մենք այսպիսի բաներ շատ ենք տեսել, շատ անգամ մինչև Պոլիս ենք քշվել, բայց ամիսներ անց վերադարձել ենք»: 7-8 օր անց, սակայն, կառավարությունը երկրորդ ընտրությունն է անում և ամենաերևելի ընտանիքներից մոտ 60-ին հանկարծ տարագրում: 2-3 օր անց վանքի թաղը տարագրվում է: Հաջորդում է բավականին երկարատև՝ ավելի քան երկշաբաթյա լռություն, որի ընթացքում Ձեթունի [գավառի] գյուղերն իրար հետևից դատարկվում էին: Բայց Ձեթունում տեղյակ չէին այս անցքերին, քանի որ քաղաքը պաշարվել էր, իսկ երթևեկությունը՝ արգելվել: Մի կիրակի օր, երբ ամեն ինչ ավարտված էր համարվում, ամբողջ վերին թաղը, բացի հիսուն ընտանիքից, այսինքն՝ չորս հարյուրից ավելի ընտանիք միանգամից ստանում է տարագրության հրամանը: Յուրաքանչյուրը պետք է սպասեր իր հերթին, թեև մինչև վերջ էլ շատերը հույս ունեին, որ իրենց խնայելու էին: Յուրաքանչյուր խմբի տարագրումից հետո կառավարությունը երաշխիք էր տալիս, որ տարագրությունն ավարտված է, և ամեն մարդ մնալու է իր տեղում: Սակայն ամեն մի նոր խմբի տարագրության համար մի պատճառ էր հերյուրում. «Սրանք վանքում կռվողների ծնողները կամ ազգականներն են», «Այս գերդաստաններից անցյալում շատ էշկիաներ են եղել»: Նույնն արեց նաև Ֆախրի փաշան. երբ նա այցելեց Ձեթուն, քաղաքի կեսն արդեն տարագրվել էր, բայց վստահեցնում է թախանձազին իրեն դիմող կանանց՝ հանցանք չունեցողները թող չվախենան, տարագրությունն արդեն ավարտվել է, ամեն մարդ թող նստի իր տեղը՝ առանց խուճապի մատնվելու:

Անցնում է մեկ օր, և Բոզբաշը թաղի շուրջ 500 ընտանիք աքսորվում է: Երկու օր անց մնացած երկու թաղերի մեծ մասը դատարկվում է: Նորից հաջորդում է երկար դադար: Մնացել էր ընդամենը շուրջ 400 ընտանիք, որոնք հակված էին հավատալու, թե այս աղետալի պատուհասից զերծ են մնալու: Տարագրության հարցով զբաղվող հազարապետ Հյուսնին երդվում էր, որ գաղթն ավարտվել է: Նա նույնիսկ մուսնեթիկի միջոցով լուր է տարածում, թե այլևս ոչ ոք չի տարագրվելու: Բայց մայիսի երկրորդ կեսին նույն մուսնեթիկը կառավարության անունից ծանուցում էր, որ որևէ զեթունցի չի մնալու քաղաքում, բոլորն էլ երկու օրվա ընթացքում պետք է հեռանան Ձեթունից:

Մինչ այդ թուրքական կառավարությունն արդեն սկսել էր խուճապ առ խուճապ բռնակներ փոխադրել և նրանց տեղավորել Ձեթունուում:

Թերևս հարց տրվի, թե ինչու՞ զեթունցիները չապստամբեցին հատկապես առաջին մեկ-երկու խմբերի տարագրումից հետո, երբ հասկացան թուրքի նպատակը: Չապստամբեցին նախ այն պատճառով, որ դա չհասկացան. թուրքը կարողացավ ժողովրդի միամիտ մեծամասնությանը մինչև վերջ էլ օրորել խաբեպատիր խոստումներով: Երկրորդ՝ առաջին խմբերի հետ մեկնել էին ժողովրդի ազդեցիկ և խիզախ առաջնորդները, որոնք կկարողանային կազմակերպել ապստամբական շարժում և ղեկավարել այն, այսինքն՝ ժողովրդի մնացած մասը բարոյալքվել էր: Երրորդ պատճառն էլ այն էր, որ մինչ այդ կառավարությունը քաղաքի բազմաթիվ վայրերում ուժեր էր կենտրոնացրել և աչալրջորեն հսկում էր:

Բնականաբար, ես էլ հարկադրված էի վերջին խմբի հետ իմ ընտանիքով թողնել Ձեթունը՝ տանելով նաև ամերիկյան որբանոցի հայ որբերին, որոնց պատասխանատվությունը ես էի կրում, քանի որ որբանոցի տնօրենը՝ Վարդիվառ խոջա⁴⁰ Չուլաքյանը, տարագրվել էր առաջին խմբի հետ: Ինձ իբր չէին աքսորում և ազատ էի գնալ՝ ուր ուզեմ: Այս շնորհը կայմական ինձ համար արել էր Մարաշում իմ միսիոներ բարեկամների միջամտությամբ:

Շատ տաժանելի էր մեր ճամփորդությունը: Կայմականը և հազարապետ Յուսուֆն նախապես ինձ խոստացել էին բավականաչափ գրաստ տրամադրել մեր փոխադրության համար. որբերը, վարժուհին, մայրս և կինս իբր թե պետք է գնային գրաստով, բայց երբ բեռները գրաստների վրա դրվեցին, վերջին պահին տեսանք, որ որևէ մեկի համար հեծնելու անասուն չի մնացել: Բոլոր որբերն ստիպված էին քայլել, ինչպես նաև վարժուհին, մայրս և կինս, որը շուտով պետք է մայրանար, դեռ չեմ ասում այն մասին, որ նա սովոր չէր այդքան երկար ու տաժանակիր ճանապարհի: Բեռները չավարտած՝ ժանդարմներն ինքնազուլխ կերպով ճամփա էին գցել կարավանի առաջին մասը: Հեռավոր վազեցի նրանց կանգնեցնելու համար, որպեսզի հետևի մասը կարողանա հասնել նրանց: Թեպետ շատ էին հեռացել, բայց վերջապես հասա: Սակայն ժանդարմները մերժեցին կանգնեցնել առջևից գնացողներին: Ստիպված էի հետ վազել և միանալ կարավանի հետևից կամաց-կամաց քայլողներին:

Անտանելի էր մանավանդ կնոջս վիճակը: Քիչ անց ուժասպառ եղավ: Ուզում էի մեր իրերի մի մասը փոխադրել էշի վրայից և իմ կնոջը նստեցնել, սակայն էշի սեփականատեր թուրք բիրտ գյուղացին ընդդիմացավ:

Ստիպված էի նորից վազել առաջ, հասնել ժանդարմներին և թախանձազին խնդրել կանգնեցնել կարավանը՝ մինչև կհասնեն հետևից եկողները: Նորից սառնասրտորեն մերժեցին: Ստիպված էի նստել ու սպասել: Երբ մերոնք հասան, երկու թուրք իշապանները չկային. նրանք մեր երկու բեռ իրերն առել հեռացել էին:

Մայրամուտին հոգնաբեկ ու թախծալից իջևանեցինք Ջիհանի⁴¹ ափին: Գիշերը թուրք ջորեպանները գրաստների մեծ մասը փախցրին և մնացին միայն անասուններն այն հայ ջորեպանների, որոնց գյուղերը դեռ չէին տարագրվել: Նախօրեի երեկոյան, երբ հայ ջորեպաններից իմացանք թուրք ջորեպանների ստադրությունը, դիմեցինք ժանդարմներին՝ խնդրելով աչալուրջ լինել և արգելել նրանց փախուստը: Ժանդարմներից մեկը բարկությամբ պատասխանեց. «Մենք չենք կարող: Ես քան ժամանակ անքուն մնալուց մեր հոգին դուրս է եկել: Մենք չենք կարող հսկել»: Իզուր ջանացի նրանց մեջ արթնացնել պատասխանատվության զգացում: Առավոտյան մնացել էինք շվարած: Ժանդարմներն էլ դատարկ ցույցեր էին անում՝ իբր ուզում են վերադարձնել փախցրած ջորիներն ու էշերը: Հուսահատված, առանց ժանդարմներին լուր տալու, ես և մեզ հետ ճամփորդող ավետարանականների դպրոցի ուսուցիչ Կարապետ Փիրիմջյանը գնացինք երկու ժամվա ճանապարհ՝ մինչև Ջիհանի կամրջին կից պահականոց, որտեղից հույս ունեինք հեռագիր ուղարկել ալայ-կոմանդանը խորշիդին: Պատասխանատու պահակապետը ընդառաջեց մեզ և մեր խնդրանքն իրականացնելու հոժարակամություն հայտնեց: Բայց հեռագիրը փոխանցող պաշտոնյան հայտարարեց, թե հեռագրաթելերը զբաղված են. Պոլիսն ու Հալեպը հաղորդակցություն մեջ են... Ո՞վ գիտե, թերևս տվյալ պահին այդ անզգա թելերով թալեաթի դժոխային հրամաններն ու հրահանգներն էին սուրում Հալեպի վալիին⁴²: Մի ժամից ավելի սպասելուց հետո վերջապես հաջողեցինք որոշված հեռագիրը հաղորդել՝ մասնավորաբար շեշտելով ամերիկյան որբանոցի որբերի վիճակը: Դա անօգուտ չեղավ: Խորշիդը խիստ հրամաններ արձակեց հոգ տանել մեր հանգստությունն ապահովելու համար:

Մինչ այդ մեզ ուղեկցող ժանդարմը եկել էր մեր հետևից: Երբ տեղեկացավ խորշիդի հրամաններին և իրենց հասցեին նրա դառը խոսքերին, այլայլվեց: Նա ասաց, որ ամբողջ կարավանը ճանապարհել է: Նրան սպառնացի. «Ինձ նայի, բավական է, հենց տեղ հասնեմ, բեռները թափելու եմ և որբերին ու կանանց եմ նստեցնելու, իսկ իրերի պատասխանատուն դու ես»:

«Բոլոր իրերը բեռնել են, – պատասխանեց, – երկու բեռը մեկ անասունի վրա են կապել, և քո կնոջն ու տկար որբերին նստեցրել են արդեն»:

Նա պարզապես ստում էր:

Այս ընթացքում Կարապետ Փիրինջյանը լուր ստացավ, որ իր զոքանչն ու փոքր աներորդին մնացել են ճանապարհին ու լացում են, որովհետև իրենց տրված միակ գրաստը փախցրել են: Ստիպված էի գնալ նրանց գտնելու: Միայնակ ճամփա ընկա դեպի Մարաշ՝ րոպե առաջ մերոնց հասնելու համար: Բայց իզուր: Շատ երկար քայլեցի ու վազեցի, վազեցի ու քայլեցի, սակայն չկարողացա հասնել:

Մեր պաշարը կարավանի հետ էր. շուտ վերադառնալու հույսով մեզ հետ բան չէինք վերցրել: Որոշ ժամանակ անց սկսվեց տեղատարափ անձրև: Մեկ–երկու անձրևանոց ունեինք, դրանք էլ էին մնացել կարավանի հետ: Անոթի, ուժասպառ ու ամբողջովին թրջված ժամերով շարունակեցի իմ ճամփան, բայց չկարողացա հասնել իմ սիրելիներին: Ո՞ւր էին նրանք: Մտահոգությունն անգթորեն կրծում էր սիրտս: Ճամփեզրին տեսա մորս գավազանը. ճանապարհին այն կտրել էի մի ծառից, տվել ձեռքը, որպեսզի մի քիչ օգնեք նրա քայլելուն: Ի՞նչ էր դա նշանակում, ինչո՞ւ էր գավազանն ընկած այնտեղ...

Սակայն ի՞նչ օգուտ: Հարկավոր էր քայլել ու քայլել: Քայլեցի այնքան, մինչև որ այլևս չկարողացա քայլել: Երեկոն վրա էր հասնում, իսկ ես ուժաթափ, թրջված և անոթի Ախրը լեռան գագաթնի վեր միայնակ քաշկռտվում էի՝ բեռնավորված սոսկալի մտքերով ու մտահոգություններով: Մի թուրք գյուղացի էր գալիս դիմացից՝ էշն առաջից քշելով: Խնդրեցի նրան, որ գոնե մինչև լեռան գագաթը նստեցնի ինձ՝ խոստանալով առատորեն վարձատրել: «Ժամը քանի՞սն է», – հարցրեց: Նայեցի և պատասխանեցի նրան: «Իմ ժամացույցը հետ է մնացել», – ասաց ու էշը քշելով առաջացավ՝ առանց նույնիսկ պատասխանելու իմ առաջարկին: Եվս մի քանի քայլ՝ և այլևս անկարող էի ոտքերս շարժել: Անկարելի էր: Աղոթում էի հոգով՝ Աստծուց մի ճար խնդրելով:


Մութը չընկած՝ հետևից բոժոժների ձայն լսեցի և հուսադրվեցի: Շուտով մոտեցավ. Ձեյթունում նոր հաստատված բռնակներից էր, որը մի ամրակազմ ջորու բարձել էր իր ձեռքն ընկած պղնձե ամաններ ու տանում էր Մարաշ ծախելու համար: Թախանձագին խնդրեցի նրան ինձ նստեցնել ջորուն մինչև լեռան գագաթը և վարձատրվել: Սկզբում առարկեց, որ ջորու բեռը ծանր է, բայց ի վերջո համաձայնեց, ու ես կարողացա ջորուն հեծած գնալ Մարաշ. հասա, երբ արդեն գիշեր էր:

Սա մի օրինակ է միայն՝ ցույց տալու համար, թե ինչ չարչարանքներ էին կրում տարագրյալները հենց առաջին օրերից: Այդ չարչարանքների մանրամասն նկարագրությունը մի առանձին հատոր կարող է լցնել:

Այսպիսի տխուր վախճան ունեցավ հերոսների քաղաքը: Կառավարությունն շտապեց անմիջապես փոխել նրա անունը. սկզբում անվանեց Ենի շեհիր⁴³, այնուհետև՝ Սուլեյմանլը՝ ի հիշատակ հազարապետ Սուլեյմանի, որ սպանվել էր կռիվների ընթացքում: Ալայ-կոմանդանդ Խորշիդի բարբարոսության դրսևորում էր նաև հայերեն փորագիր հիշատակարանների ոչնչացումը, որոնք դարերով զարդարում էին Պաղ աղբյուրի քարերը: Թուրքը միամտորեն չէր ուզում հայի հետք թողնել այնտեղ, սակայն հայի հոգին դեռ այնտեղ է:

Վանքի կռվի մասնակիցներից վաթսուն հոգի, երկու խմբի բաժանված, բարձրացավ լեռները: Առաջինը Նազարեթ Չավուշի հորեղբորորդու՝ Եղիա Ենիդունյայանի 20-հոգանոց խումբն էր, երկրորդը Չուլաքյան երկու եղբայրների՝ Մեսրոպի և Արամի 40-հոգանոց խումբն էր: Սրանք տարիներ շարունակ ասպատակեցին՝ դաժանորեն հետապնդվելով թուրք զինվորներից, զարկելով և զարկվելով. նրանցից վերապրեցին ընդամենը հինգը, որոնք, հասնելով Այն էլ-Թել⁴⁴, այնտեղ նոր խմբեր կազմեցին: Սրանք էլ երկար ժամանակ վարեցին ասպատակի խիզախ կյանք: Երբ բրիտանական բանակները գրավեցին Սիրիան, նրանցից երեսուներեք վերապրողներ, ոտքից գլուխ զինված, հաղթական մտան Հալեպ: Երեքը զեյթունցիներ էին:

Մեր՝ Մարաշ հասնելու հաջորդ առավոտյան կոմիսարը լուր է ուղարկում մեզ երկու ժամվա ընթացքում գնալ հյուրանոց՝ հաջորդ օրը զեյթունցիների հետ տարագրվելու համար: Ընդհիվ ամերիկացի բարեկամ միսիոներներ միստերներ⁴⁵ Վուդլի⁴⁶, Լայմոնի⁴⁷ և մանավանդ դոկտոր Ջ. Ի. Մերիլի⁴⁸ միջամտության, որը, բարեբախտաբար, այդ պահին Մարաշում էր, հաջողեցինք մեր ծննդավայրը վերադառնալու թույլտվություն ստանալ: Եկանք Այնթապ, որտեղից չէինք համարձակվում շարունակել ճանապարհը: Մեր գյուղերի մասին շատ բաներ էին խոսում: Շուրջ երկու ամիս կիսաթաքնված վիճակում սպասելուց հետո վերջապես որոշեցինք մեկնել մեր ծննդավայրը՝ Յոդուն-Օլուք: Մի քանի օր անց՝ հուլիսի 12-ին, ապահով հասանք այնտեղ՝ ականատես լինելու համար մի նոր դրամայի, որը ներկայացրեց Սվեդիայի մի բուռ ժողովուրդը՝ պանծացնելով ցեղի առյուծասիրտ արիությունն ու քաջությունը և մասամբ դարմանելով Ձեյթունի անցյալի փառքի օրերի անփոխարինելի կորուստը:



**Մուսա լեռան հերոսամարտի հուշարձանը
Դամալջըկում**

Դամալջըկ—Ամանոսյան լեռնաշղթային հարող բարձունք Մուսա լեռան մոտ: Այստեղ հայերը, Մուսա լեռ բարձրանալուց հետո, հիմնել էին ռազմապաշտպանական ճամբար: Այնտեղ հետագայում կառուցվեց այս հուշակոթողը՝ ազատագրական պայքարում զոհված 18 հայերի հիշատակը հավերժացնելու համար:

Բ ՄԱՍ

ՍՎԵՂԻԱՅԻ ԱՊՍՏԱՍԲՈՒԹՅՈՒՆԸ



Ա

Երբ Ձեյթունն այսպես աղարտում էր հայոց պատմության մեջ իր կերտած փառավոր ու հոյակապ անունը, Սվեղիայի գյուղերի համեստ և սակավաթիվ հայությունը, ինքնապաշտպանության համար անբավարար ու հնացած հրացաններով, բայց առյուծասիրտ կորովով ու քաջությամբ պատրաստվում էր բարձրանալ անտառախիտ լեռները և այնտեղ, իր ֆիզիկական ու հոգևոր բոլոր ուժերն ի մի բերելով, ոգին բուռը հավաքած դիմադրել թշնամու հարձակումներին, հնարավոր ամեն միջոց գործածել փրկության ճանապարհ գտնելու համար, իսկ ծախողելու դեպքում գոնե պատվավոր մահով մեռնելու հաստատ որոշումով:

Այնթապում մոտ երկու ամիս փախստականի կյանք վարելուց հետո, երբ 1915 թվականի հուլիսի 12-ին հասա ծննդավայրս՝ Յողուն-Օլուք, տեսա, որ ժողովուրդը ծայր աստիճան տվայտում է կասկածների և մտավախությունների մղձավանջում՝ ամիսներ ի վեր տիրող քստմնելի կացության և դեսից-դենից հասնող զարհուրելի լուրերի ազդեցության տակ: Համագյուղացի մի պատվելիի՝ Ձեյթունից վերադարձի լուրը նոր ցնցում էր առաջացրել: Ամեն օր հետաքրքրասերների խմբեր էին խոնվում իմ շուրջ, հազարումեկ հարցում անում և պատասխաններ ստանում: Մի կողմից՝ նրանք ողբում էին տարագրվող ազգակիցների սև բախտը, իսկ մյուս կողմից՝ անորոշ ճակատագիրը լլկում էր նրանց մտքերը: Ոմանք, մակերեսային պատճառաբանություններով, ուզում էին հավատալ, որ մեր գյուղերը զերծ են մնալու ընդհանուր աղետից, բայց մյուսները, չընդունելով այդ միամիտ կարծիքները, հառաչում էին ու անասելի տառապում:

Հուլիսի 28-ին Կալադուրանը⁴⁹ և Քեսաբի⁵⁰ [ընակչության] մի մասը

տարագրության հրաման են ստանում: Ի գիտություն առնելով այս լուրը՝ վտանգն սկսեցինք տեսնել նաև մեր տանը: Ժողովուրդը ողջ եւթյամբ ցնցվում էր, հուզվում և ընդվզում իր հոգու խորքերում: Բայց ի՞նչ օգուտ: Ի՞նչ կարելի էր անել: «Ապստամբություն», – գոչում էր մի մասը: Մյուսները դա հիմարություն էին համարում և, կառավարությանը հնազանդվելուց բացի ուրիշ ճանապարհ չէին տեսնում: Ամեն դեպքում պետք էր վճռական որոշման հանգել: Մանավանդ, հարկավոր էր, որ բոլոր գյուղերը համերաշխությամբ խորհրդակցեին ու միասնաբար գործեին:

Տեղական իշխանության պաշտոնյաների վրիժառու և արյունռուշտ նկարագիրը մեզ ծանոթ էր: Անտիոքի կայանակամը և Սվեդիայի մյուդի-րը⁵¹ բուլղար խալիդը, որ երկու անգամ արտաքսվել էր իր բնակավայրից, վաղուց նենգամիտ հերյուրանքներով փորձում էին տեղահանել տալ Սվեդիայի հայությանը, սակայն Անտիոքի արաբ հազարապետի և Հալեպի նահանգապետի՝ մեր նկատմամբ բարյացակամ վերաբերմունքը խափանում էր այդ ծրագիրը: Բայց մի նահանգապետի կամ հազարապետի բարեհաճությանը չէր կարելի հավատ ընծայել: Եթե նրանք ամբողջովին դեմ էլ լինեին տեղահանությանը, անկարող էին արգելել, քանի որ դա կատարվում էր կենտրոնական իշխանությունների որոշումով և անողը հրամաններով: Շրջանառվում էր զրույց, ըստ որի՝ Մեբուսանը⁵² նիստերից մեկում որոշել է հիմնովին բնաջնջել հայերին. այս մասին մի թուրք պատգամավոր տեղեկացրել է Ուրֆայում բնակվող մի գերմանացի միսիոների, որին նա հյուընկալվել էր մի երեկո:

Յուլիսի 29-ին Յոդուն-Օլուքի քահանա տեր Աբրահամ քահանա⁵³ Տեր-Գալուստյանի տանը խորհրդակցական ժողով են հրավիրում Յոդուն-Օլուքի, Բիթիասի, Հաջի-Հաբիբլիի, Խըղըրբեկի⁵⁴, Վակըֆի և Քեբուսիեի երևելիները: Բիթիասի անունից ժողովին մասնակցում են Մովսես Բենժիլյանը, Գևորգ Շերբեթյանը և Պողոս Ֆրենկյանը: Հաջի Հաբիբլին ներկայացնում էին տեր Վարդան քահանա⁵⁵ Վարդերեսյանը, Գրիգոր Մարգարյանը, հաջի⁵⁶ Խաչեր Մարտիրոսյանը և Հովսեփ Տուտագյանը: Յոդուն-Օլուքից ներկա էին տեր Աբրահամ քահանան, Ջաբրա Գազանջյանը, Մովսես Տեր-Գալուստյանը⁵⁷, Պետրոս Տեր-Գալուստյանը⁵⁸, Էլիաս Մասանյանը, Պետրոս Հերկեյանը, Հակոբ Աղամյանը, Պողոս Գապայանը և տողերիս հեղինակը: Խըղըրբեկից եկել էին Տիգրան Քարաջյանը, Մելքոն Գույումջյանը և Եսայի Իբրահիմյանը: Իսկ Վակըֆը ներկայացնում էին Թովմաս Այնթապյանը և Հակոբ Կարագյոզյանը: Քեբուսիեցիները ժողովի հրավերին չէին արձագանքել:

Ժողովի մասնակիցների մեծ մասը ապստամբությունը հիմարություն էր համարում, իսկ կառավարության կարգադրություններին համակերպվելը՝ խոհեմություն: Նրանք իրենց տեսակետը պաշտպանում էին՝ պատճառաբանելով, թե նախ՝ մենք անհրաժեշտ քանակով ոչ զենք ունեինք, ոչ էլ զինամթերք: Որսորդական հրացանները 500–600 հատ էին, որոնք բերանի կողմից էին լիցքավորում և էական դեր չէին ունենալու կանոնավոր [քանակի] զինվորների դեմ կռվելու դեպքում: Բացի դրանցից՝ ունեինք որոշակի քանակության հունական «Գրաներ»⁵⁹ և կունդակլը⁶⁰ «Մաուզերներ»⁶¹: (Հետագայում պարզվեց, որ մեր «զինանոցում» կային 95 «Գրա», 2 «Մարթին», 11 կունդակլը «Մաուզեր», մոտ 15 կըրմա⁶² հրացաններ, որոնք գործում էին փամփուշտով, և մի քանի հարյուր հասարակ, բերանի կողմից լիցքավորվող հրացաններից: Յուրաքանչյուր «Գրա» ուներ 30–120 փամփուշտ, իսկ յուրաքանչյուր կունդակլը «Մաուզեր»՝ 100–200 փամփուշտ: Բացի սրանցից՝ ունեինք բավարար վառող, նաև զնդակներ՝ 30 000 փամփուշտ վերստին լցնելու համար:

Բայց մի՞թե ծիծաղելի արկածախնդրություն չէր այսքան քիչ և ոչ լիարժեք զենքերով ու զինամթերքով փորձել չարքական կանոնավոր ուժերի հետ, որոնք հիանալի զինված էին զենքով ու զինամթերքով և գիտության վերջին հնարքներով: Բացի այդ՝ մեր պարենն էլ շատ քիչ էր: Ժողովուրդը հացահատիկի մեծ մասը գնում էր Անտիոքի շուկայից, քանի որ իր հողատարածքների մեծ մասը վերածել էր թթենու այգիների՝ շերամաբուծության նպատակով: Այդ պահին անհրաժեշտ քանակության հացահատիկ դեռ չէր գնվել, քանի որ նախ՝ դեռ դրա ժամանակը չէր, երկրորդ՝ տեղահանության պատճառով ժողովուրդը կասկածանքով էր նայում ապագային, ուստի չէր ուզում շատ բան ամբարել, և երրորդ՝ շատերը փող չունեին: Այդքան քիչ պաշարով ինչպե՞ս կարող էինք ապրել, եթե պաշարվեինք: Այս բոլորից գատ՝ ունեինք տգետ ու կարգապահությանն անսովոր ժողովուրդ: Մերոնցից հազիվ մի քանիսն էին մասնակցել զինավարժությունների և, հետևաբար, կարող էին գոնե ձայնից հասկանալ, թե թշնամին ինչ զենքով է կրակում: Մի՞թե հիմարության գլուխգործոց չէր այսպիսի պատրաստվածությամբ ապստամբություն սկսելը:

Բայց, մյուս կողմից, ունեինք սքանչելի և ամուր լեռներ, որտեղ դյուրությամբ կարող էինք պաշտպանվել, ունեինք չարքաշ ժողովուրդ, որը կարող էր տոկալ բոլոր դժվարություններին և իրականացնել ամենադժվար գործերը: Թեև այս ժողովուրդը զինվորական կրթություն չուներ, բայց շատ վարժ էր զենքի գործածությանը, քանի որ փոքր տղա-

ներն անգամ զենքով թռչուն որսալու սիրահարներ էին: Հնարավոր է, որ կառավարությունը շատ էլ կարևորություն չտար մեզ, քանի որ նա կենաց ու մահու խնդիր ուներ, իսկ մենք նրան արդեն որևէ վնաս չէինք պատճառում: Այդ օրերին կարելի էր որոշակի պաշար գնել եթե ոչ ԱՄՆ-տիոքից, ապա գոնե նրա շրջակա գյուղերից: Կարելի էր նաև փրկություն հուսալ ծովից, քանի որ դաշնակիցների ռազմաճակատները երբեմն անցնում էին այս կողմերով և ռմբակոծում թուրքական ուժերին: Ընդհանուր պատերազմ⁶³ էլ կարող էր շուտով ավարտվել, և այդ դեպքում անհրաժեշտություն չէինք ունենա երկար ժամանակ դիմադրելու:

Իսկ ի՞նչ հույս կարելի էր ունենալ հնագանդվելու դեպքում: Ո՛չ մի հույս: Միայն անպատվություն, չարչարանք և ամենադժոխակ ու անարգ մահն էր սպասում մեզ այնտեղ: Բայց այստեղ՝ մեր լեռներում, եթե ձախողեինք, գոնե պատվավոր մահով կմեռնեինք՝ զենքը ձեռքներին:

Տեր Աբրահամը, տեր Վարդան Վարդերեսյանը, մանավանդ՝ բիթիասցի Մովսես Բենջիլյանը, հաջիհաբիբլիցի Գրիգոր Մարգարյանը և խղճորեկցի Մելքոն Գույումջյանը ազդու ձևով պնդում էին անձնատուր լինելու համար: Նրանք թվում պետք է հիշել Բիթիասի քարոզիչներից պատվելի Հարություն Նոխուսյանին, որ թեև այնտեղ ներկա չէր, բայց մեծ դեր ունեցավ բիթիասցի 64 ընտանիքների՝ տարագրության ճանապարհը բռնելու հարցում⁶⁴:

Ապստամբությանը և լեռ բարձրանալուն կողմնակից էին Ջաբրա Գազանջյանը, Տիգրան Քարաջյանը, Մովսես Տեր-Գալուստյանը, Ավետիս Մասմանյանը, Թովմաս Այնթապյանը, Հակոբ Կարազոզյանը և ուրիշներ: Ես ինքս դեռևս չէի կարողանում որոշման հանգել: Մի կողմից՝ հիմարություն էի համարում այդքան ամուր լեռները թողնելն ու ծովեզերքից հեռանալը, որտեղից կարելի էր ամեն ժամ օգնության հույս ունենալ՝ ապավինելով փրկարար որևէ նավի, մյուս կողմից՝ զենքի, զինամթերքի ու պաշարի անբավարարությունը և ժողովրդի հոգեկան ու բարոյական վիճակը հոռետես էին դարձնում ինձ: Նույնիսկ ոմանք ասում էին, թե հնարավոր չէ պաշտպանել լեռան աղբյուրներից մի քանիսը, իսկ դրանց՝ թշնամու ձեռքն ընկնելու դեպքում նաև ջրի կարոտ էինք լինելու: Ուստի, սկզբունքով ապստամբության կողմնակից լինելով հանդերձ, առկախում էի իմ վերջնական որոշումը մինչև հիշյալ կետերի շուրջ մեր վիճակի ճշտումը, որը չուշացավ:

Ապստամբության կողմնակիցները տարակարծություն ունեին նաև ապստամբության վայրի ընտրության հարցում: Ոմանք խորհուրդ էին

տալիս հավաքվել ամենամուր գյուղերից մեկում ու դիմադրել այնտեղ: Ես կտրականապես ընդդիմացա այս գաղափարին: Այդ դեպքում նախ՝ չէինք կարողանա հաղորդակցություն ունենալ ծովի հետ, որը փրկության ամենաբանական հույսն էր ներշնչում մեզ: Երկրորդ՝ որևէ գյուղում հավաքվելու դեպքում մեզ անմիջապես պաշարելու էին, իսկ շատ նեղ տարածքում արգելափակված լինելու դեպքում որևէ փոքր ծախսորդություն հնարավորություն կտար թշնամուն՝ մեզ ոտքի տակ տալու և դրանով իսկ ամեն ինչին վերջ դնելու համար: Բացի դրանից՝ թշնամին կարող էր ռմբակոծել, քարուքանդ անել գյուղը ու մեզ թաղել նրա ավերակների տակ: Մինչդեռ Մուսա լեռը, որ պետք է զբաղեցնեինք, 70–80 քառակուսի մղոն⁶⁵ տարածք ուներ, թեև այն պահպանելու համար ոչ ուժ ունեինք, ոչ էլ այդքան տարածքի կարիքը: Ըստ մեր ռազմավարության՝ մարտը պետք է սկսեինք լեռան ստորոտներից և թշնամուն զբաղեցնեինք այնքան, որքան հնարավոր է: Թշնամին չէր կարողանալու մոտենալ մեր բանակավայրերին. վրա էր հասնելու գիշերը: Չէր բացառվում նույնիսկ, որ դրանից առաջ էլ նա ստիպված լիներ մեզ հանգիստ թողնել ու հեռանալ: Բոլոր դեպքերում ոչ մենք էինք հանգիստ լինելու, ոչ էլ նրան էինք հանգիստ տալու: մինչև նրան դուրս չքշեինք լեռան սահմաններից: Եթե փորձեր գիշերել լեռան վրա, թիկունքից և կողքերից պետք է հարձակվեինք: Անհրաժեշտության դեպքում կարող էինք նաև լեռան մեկ ուրիշ կողմն անցնել: Մովսես Տեր-Գալուստյանը և ուրիշներ համաձայնեցին, ու այդ գաղափարը շուտով մի կողմ դրվեց:

Ժողովում մի այլ մտահղացում էլ է մեջտեղ գալիս. Անտիոքի թուրք աղաները չէին կարող կամ չէին ուզենա արդյոք մեզ ազատել տարագրության պատուհասից, եթե մեր երևելիներից մի քանիսը գնային և աղաչեին, ու եթե պետք լիներ, մի խոշոր գումար էլ խոստանային որպես կաշառք: Իզուր էին բոլոր ջանքերը հասկացնելու, որ աղաներն այդպիսի բան անել բնավ չէին ուզենա, իսկ եթե անգամ ուզենային, չէին կարող, քանի որ հրամանը կենտրոնից էր. նույնիսկ մի նահանգապետի էին պաշտոնանկ արել տեղահանության հրամանին չենթարկվելու համար: Այդուհանդերձ, հաջորդ առավոտ կանուխ երևելիներից մի քանիսը մեկնեցին Անտիոք՝ որոշ անձանց [աջակցությանը] դիմելու համար: Ավելորդ է ասել, որ նրանց ջանքերն ամբողջովին ապարդյուն եղան:

Երբ նրանք դեռ Անտիոքում էին, հուլիսի 30-ին մի քանի ժանդարմներ եկան՝ յուրաքանչյուր գյուղի համար առանձին պաշտոնական գրու-

թյուններով, որոնք ուղարկել էր Անտիոքի կայմակամը: Գրություններին կցված էր Սվեդիայի մյուզիորի կարճ ծանոթագրությունը: Ահա դրա պատճենը:

ԲԵՅԱՆԱՄԵ

1. Անթաքիա կազասը դախիլինդե մյութեվաթթին էրմենի միլլեթինե մենսուբ բիր ջյունլե էշխասըն՝ թարիխ-ի ի՛լանդան իթիբարեն յեդի գյուն զարֆընդա Անթաքիայը վե կարիյելերինի թերք էդեջեյի ջիհեթլե, մյուդդեթ-ի մեզքյուրե զարֆընդա ա՛լակադլարանըն խուսուսաթ-ը զաթիյելերինի վե վեսաիթ-ի նակլիյելերինի իհզար էթմելերի լազըմ դըր:

2. Յյուքյունեթջե թա՛յին օլունան մահալե ազիմեթ էդեջեթ օլան էրմենիլերին էսնա-ի սևկինդե, վե գերեթ էսնա-ի ռահլլդե հուզուր վե ռեֆահ-ը հալլերի, վե հեր սուրեթլե թեարոյուզդեն մասումիյեթլերի ժանդարմալար թարաֆընդան թե՛մին օլունաջակ դըր:

3. Ֆակր վե հալլերի թեհակյուկ էդենլերին վեսաիթ-ի նակլիյեսի վե էմր-ի ի՛աշելերի թարաֆ-ը հյուքյունեթդեն թեսվիյե էդիլեջեթ դըր:

4. Բուրադա կալաջազ էմլաթ վե էմվալ յեգյան յեգյան, վե ջինս վե նևլերի զաթթ-ը դեֆտեր էդիլեջեթ, վե հյուքյունեթջե մահֆուզ մահալլերե կոնուլաջակ, վե հյուսն-ի իդարե վե մուհաֆազա օլունաջակ դըր, վե բիլախերե ֆիրուխթընդան իսթիսալ էդիլեջեթ էսմանը՝ էսհապը նամընա էմանեթեն մալ սանդըղընա վազ՝ օլունուբ քենդիլերինե իրսալ ոլունաջակ դըր:

5. Սևկ օլունաջակլարը մահալլերե մյուրեֆֆահեն իսքյան էդիլեջեթլերինե նազարեն՝ ա՛լակադլարանըն հեր խուսուսդա հուկուկ-ը շախսիյեսի մահֆուզ օլաջակ դըր:

6. էմր-ի սևկիյաթըն հյուսն-ի իդարե վե իջրասը վե հեր խուսուսդա հուկուկ-ը շախսիյենին մահֆուզիյեթի, էմլաթ վե էմվալ-ը մեթրուքենին զաթթ-ը դեֆտեր էդիլեթսինի թեմինեն՝ ռիյասեթիմ ալթընդա բիր կոմիսիոն թեշքիլ էթդիմ:

7. Մուամելե-ի նակլիյե ալել՛ադե բիր մուամելե-ի հիջրեթ օլդուղընդան նակլա թաբի՛ի էշխասըն բեոյյուք բիր հիսս-ի ի՛թիմադլե հյուքյունեթին իջրաաթընա ռաթթ-ը կալթ էթմեսի, վե սաիր օսմանլը թաբասաընըն դա հեր սուրեթլե թաիթ-ը մուհաֆազադա բուլունդըրըլան բու հուկուկա հյուրմեթ վե ռիայեթ էլլեմեսի լազըմ դըր:

8. Էհալիդեն օլսուն, մեմուրիյե-ի ինզիբաթիյե վե սաիրեդեն օլսուն,

բու խուսուսդա մյուսամեհեսի գյորյունլերին դեր հալ թաիթ-ը թևկիֆե ալընարակ՝ քենդիլերին դիվան-ը հարթ-ը էորֆիյե սևկ էդիլեջեյինի իխթար վե ի՛լան էդերիմ:

Ֆի 16 թեմ[մ]ուզ 1331

Անթաքիա կազասը կայմակամը

Մաարուֆ

... կարիյեսի մուխթար վե հեյեթ-ի իխթիյարիյեսինե.

Մակամ-ը կայմակամիդեն մուբալլադ ֆի 16 թեմ[մ]ուզ 331 թարիխի վե 732 նոմրուլը վե սեթիզ մադդեյի մյուհթևի բեյաննամե սուրեթի բալալա նակլեն թեբլիղ օլունմակլե, մյուդդեթ-ի մու՛այյենե օլան յեդի գյուն զարֆընդա խուսուսաթ-ը զաթիյենիզին թեսվիյեսիյլե հիջրեթե մյուհեյյա բուլունմանըզ յուզյումը թեբլի[ղ] օլունըր:

Ֆի 17 թեմ[մ]ուզ 331⁶⁶

Սուեյդիյե նահիյեսի մյուդիորի

Խալիդ

Թարգմանությունը

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Նկատի ունենալով, որ, սույն հայտարարության թվականից սկսած, յոթ օրվա ընթացքում Անտիոքի կազայում⁶⁷ բնակվող բոլոր հայերը լքելու են Անտիոքն ու նրա գյուղերը, հարկավոր է, որ սույն հրամանին ենթակա ամեն անհատ հիշյալ ժամանակամիջոցում կարգի բերի իր անձնական գործերը և փոխադրության միջոցները:

2. Յայերին կառավարության որոշած տեղերն ուղարկելիս ժանդարմները ճանապարհին պետք է ապահովեն նրանց խաղաղությունն ու հանգստությունը և պաշտպանեն բոլոր տեսակի կեղեքումներից:

3. Իրենց աղքատ լինելն ապացուցած ընտանիքների փոխադրության միջոցներն ու սնունդը պետք է հոգա կառավարությունը:

4. Այստեղ թողնված ունեցվածքն ու իրերը, ըստ իրենց տեսակի, մեկ

առ մեկ արձանագրվելու են գրանցամատյանում և պահվելու են ապահով տեղում՝ պետության պաշտպանության ներքո, իսկ դրանց վաճառքից գոյացած գումարներն իրենց տերերի անուններով, որպես ավանդներ, պահվելու են պետական գանձարանում և ուղարկվելու են տերերին:

5. Գաղթողների անձնական բոլոր իրավունքները պետք է պաշտպանվեն, իսկ ուր որ նրանք ուղարկվում են, պետք է բնակեցվեն հարմարավետորեն:

6. Իմ նախագահությամբ կազմեցի հանձնախումբ, որպեսզի տեղափոխման գործը բարվոք ձևով կազմակերպվի ու ղեկավարվի, մարդկանց անձնական իրավունքները պաշտպանվեն, ունեցվածքն ու շարժական գույքն արձանագրվեն գրանցամատյաններում:

7. Տեղափոխության ենթակա անհատները պետք է կատարյալ վրստահությամբ վերաբերվեն կառավարության գործողություններին, իսկ օսմանցի մյուս քաղաքացիները պետք է հարգեն այդ իրավունքը, որը պաշտպանված է ամեն ինչով, քանի որ իրականացվող տեղափոխությունը սովորական գաղթ է:

8. Հայտարարում են, որ զանցառուները, լինեն ժողովրդից, թե կարգապահությունը հսկող կամ այլ պաշտոնյաներից, անմիջապես պետք է ձերբակալվեն և հանձնվեն ռազմական ատյանին:

16 հուլիսի 331

Անտիոքի կազայի կայմական

Մաարուֆ

... Գյուղի մուխթարի⁶⁸ և մուխթարական խորհրդի անդամներին՝ կայմականությունից հաղորդված 16 թեմ(մ)ուզ 331 թվականի և 732 թվակիր ութ հողվածներից բաղկացած հայտարարության պատճենն արտագրելով՝ հայտարարում են, որ պետք է հիշյալ յոթ օրվա ընթացքում ձեր անձնական գործերը կարգի բերեք և պատրաստ լինեք գաղթելու:

17 հուլիսի 331

Սվեդիայի նահիեի⁶⁹ մյուղիի

Խալիդ

Գրությունը ոչինչ չէր ասում գաղթի պատճառների մասին, այն մասին, թե ինչո՞ւ մի անմեղ ժողովուրդ, որ ամեն կերպ բավարարել է կա-


ռավարության բոլոր պահանջները, որ իր պատմության մեջ ոչ մի անգամ չի ընդդիմացել նրա ամենաանցան հրամանին, մի ժողովուրդ, որ ընթացիկ պատերազմի համար ամիսներով խրամներ է փորել, [անհաշիվ] գրաստ ու արջառ է հայթայթել, առատ փող տվել և իր ամենաընտիր որդիներին ուղարկել բանակում ծառայելու, հանկարծ պետք է թողնի իր ողջ ինչքը, տներն ու պարտեզները, արտերն ու եզները և զնա անծանոթ անապատ, ով գիտե, ի՞նչ սոսկալի խաչելությամբ թաղվելու: Այս հարցերը ոչ ոք իրավունք չուներ տալու:

Ահազանգը հնչել էր: Ի՞նչ էինք անելու: Մեր աղաները դեռևս Անտիոքում էին, և հայտնի չէր նրանց որոշումը: Բայց ժողովուրդն իր որոշումն արդեն կայացրել էր: Յողուն-Օլուքից, Խըղըրբեկից, Վակըֆից ու Ազյուրից⁷⁰ շատերն արդեն սկսել էին իրենց պաշարն ու իրերը փոխադրել լեռ:

Հուլիսի 30-ին՝ երեկոյան կողմ, երկու կարգի մարդիկ եկան, և երկու տարբեր խրատներ հասան մեզ Անտիոքից: Առաջինները Հալեպից փախչող մի քանի զինվորներ էին, որոնք իրենց աչքով տեսել էին տարագրյալներից ոմանց աղիողորմ վիճակը և շատ սարսափելի բաներ էին իմացել նրանց մասին: Լսել էին, որ տարագրվող հայերը ճանապարհին քրդերի ու արաբների սրի գոհ էին դառնում, նրանց կանայք ու աղջիկները ունեցվածքի պես բաժանվում էին մարդասպանների միջև: Այլևս երկմտելու կարիք չկար. այս կենդանի վկայությունները բավարար էին համոզելու նույնիսկ ամենակասկածամիտներին ու երկչոտներին: Նույն պահին [տեղ] հասավ երկրորդ՝ Անտիոքից վերադարձող հուսահատ աղաների խումբը: Նրանք հորդորում էին հնազանդվել կառավարությանը և պատրաստվել գաղթելու: Բայց, բարեբախտաբար, ժողովրդի մեծամասնությունն անդրդվելի էր:

Այդ օրերին Մովսես Տեր-Գալուստյանի միջոցով նամակագրություն է տեղի ունենում քեսաբցիների հետ: Նրանց հորդորում էինք այս կամ այն կերպ ապստամբել մեր օրինակով: Քեսաբցիները մի քանի անգամ մեզ հուսադրեցին. սկզբում ասացին, թե առանձին են ապստամբելու, այնուհետև՝ միանալու են մեզ, հետագայում՝ երիտասարդների մի քանի խմբեր իրենց զենքերով մեզ են միանալու: Բայց, դժբախտաբար, ոչ մի խոստումը չկատարեցին: Նրանց զենքերից օգտվելու մեր ջանքերը նույնպես ապարդյուն էին: Բայց մեր ընթացքը ոչ մի կերպ կախյալ չէր նրանց բռնելիք ընթացքից:

Յուլիսի 31-ին և հաջորդ երկու օրերին շատ ուշագրավ ու տարօրինակ էր Մուսա լեռան ստորոտի պատկերը: Ամեն մարդ տեսած կլինի՝ ինչպես են մրջյունները, իրար հետևից շարված, ծանր, երբեմն իրենց մարմնից ավելի խոշոր բեռներ կրում: Այդ օրերին այսպիսի շարքերով դեպի լեռան բարձունքն էր շարժվում Յողուն-Օլուբի, Խըղըրբեկի, Վակըֆի և Ազգյուրի ողջ ժողովուրդը: Կառավարությունը տիրացել էր գրաստների մեծ մասին, ժողովուրդն ստիպված էր ամեն ինչ շալակով տանել: Կույրերը, հիվանդները և ծերերը նույնպես մյուսների հետ լեռն էին մագլցում, ավելի ճիշտ՝ սողում էին՝ իրենց մեծ դժբախտությունը բեռ դարձրած: Անկարելի է բառերով նկարագրել այն անհուն թվառությունն ու տառապանքը, որին ենթարկվել էր հեզ ժողովուրդը: Գիշերն էլ հանգիստ չուներ. նա պարտավոր էր գիշեր-ցերեկ գբաղվել իր կարևորագույն իրերը կրել-տանելով:



ԱՎԵՂԻԱ ԵՎ ՄՈՒՍԱ ԼԵՌ

Օգոստոսի 1-ին, երբ ժողովուրդը դեռևս լեռան անապահով մի հատվածում՝ Թաթար-Ալանգ⁷¹ կոչված վայրում էր, մյուզիքից երկրորդ անգամ ստացանք գրություն, որտեղ Խալիդը հիշեցնում էր մեր

պատասխանատվության ծանրությունը, պատմում գաղթածների հանգստավետության մասին ու հորդորում վերադառնալ՝ առանց հապաղելու:

Այստեղ պետք է պատասխանել այն հարցին, թե ինչու՞ կառավարությունն անմիջապես զորք չուղարկեց՝ արգելելու ժողովրդի այս խիզախ շարժումը, քանի որ լիովին իրազեկ էր ամեն ինչին: Չավանաբար երկու պատճառ կար: Առաջին՝ կառավարությունը մեզանից բնավ վախ չուներ: Երբ մի քանի ամիս առաջ՝ մարտի 28-ին, կառավարությունը հանկարծակի պաշարել և խուզարկել էր գյուղերը, սակավաթիվ անպետք ու հին հրացաններից բացի, ոչ մի փամփուշտ չէր գտել: Չետևաբար կարծում էր, որ հարյուր զինվորն իսկ բավարար էր լինելու գյուղացիներին «էշերի նման» իջեցնել [բարձունքներից], ինչպես պարծենալով ասել էր Խալիդը: Երկրորդ՝ կառավարությունը հույս ուներ իր սովորական մեթոդով՝ շռայլ խոստումներով ու ստերով խաբել գյուղացիներին: Բայց և այնպես, վախն ամեն վայրկյան մեր սրտերում էր, և մեր մի աչքը միշտ դեպի հետ էր նայում:

Օգոստոսի 2-ին երեք գյուղերի ողջ բնակչությունը և Քեբուսիեից 8-10 ընտանիք (նրանք այդ գյուղից միայնակ էին բարձրացել լեռ) տեղավորվել էին լեռան զանազան դիրքերում: Բայց բիթիացիների ու հաջիհաբիբիցիների մեծ մասը դեռևս չէր եկել իրենց գյուղերից, միայն մի փոքր մասն էր լեռան ճանապարհին:

Մի քանի օր անց մեզ հասավ մյուզիքի երրորդ գրությունը՝ այս անգամ ուղղված տեր Աբրահամ քահանա Տեր-Գալուստյանին ու Մելքոն աղա Գույունջյանին, որով նրանցից պահանջվում էր համոզել ժողովրդին վերադառնալ իրենց գյուղերը: Ահա նամակի բովանդակությունը:

«Ցավով լսեցինք ժողովրդի հետ ձեր երկուսի լեռ բարձրանալու մասին: Նման ընթացքն անհամատեղելի է ձեր պատվին ու դիրքին: Բարեբախտաբար, տգետ չեք և այս պահից կարող եք պատկերացնել, թե ինչ է լինելու ձեր վախճանը մեր հզոր բանակի հարձակումից հետո: Չետևաբար ցանկանում եմ, որ ձեր ողջ ժողովրդի հետ անմիջապես հանձնվեք և գաղթեք՝ կատարելով կառավարության հրամանը: Չակառակ դեպքում դուք եք պատասխանատու այնտեղ թափվելիք արյան ու արցունքների համար»:

Բնականաբար, մեր առաջին գործը պետք է լիներ լավագույն կազմակերպվածության և ինքնապաշտպանության մասին մտածելը: Չաստատվել էինք Կըզըլջա⁷², Կուզըրդա⁷³, Դամլաջըկ⁷⁴ և Կափլան-Դուզաղ⁷⁵

անուններով չորս տարբեր վայրերում, որոնցից յուրաքանչյուրի համար ուրույն ժողով⁷⁶ էր հարկավոր ռազմական և ներքին գործերի կարգադրության ու ղեկավարման համար: Կըզըլջայի և Դամլաջըկի երևելիներն ստանձնեցին այդ գործը, իսկ Կուզըղազի [հարցը լուծելու] համար բոլոր այրերը հավաքվեցին մի կենտրոնատեղիում, որտեղ խոսեցին նախ՝ տողերիս հեղինակը, այնուհետև՝ Մովսես Տեր-Գալուստյանը, հետո՝ Մովսես Գապայանը, որը պարզ, բայց ազդու մի քանի խոսք ասաց: Ապա գաղտնի քվեարկությամբ ժողովի համար ընտրվեց յոթ անդամ, որոնց միանալու էին ևս երեք հոգի՝ ռազմական ղեկավարության ընտրությամբ՝ իրենց անդամներից: Այսպիսով՝ ժողովը, որ կարող էինք նաև դահլիճ⁷⁷ անվանել, բաղկացած էր լինելու տասն անդամից: Իսկ Կափլան-Դուզաղը շրջանակը ինքնակառավարման ուղղությամբ որևէ քայլ տակավին չէր կատարել:

Մյուզիրին դեռևս չէին հուսահատեցրել մեզ խաբելու ջանքերը: Օգոստոսի 5-ին նա իր չորրորդ գրությունն է ուղարկում մի պատվիրակության հետ, որի կազմում էին Դաջի-Դաբիրլիի քահանա տեր Վարդան Վարդերեսյանը, հաջի Խաչեր Մարտիրոսյանը, Բիթիասի քարոզիչ պատվելի Դ[արություն] Նոխուստյանը և բիթիասցի Գևորգ Շերբեթյանը: Այս գրությունն ու պատվիրակությունը նույնպես արժանացան նախորդների ճակատագրին:

Պատվելի Նոխուստյանը ցանկացավ տեսակցել ինձ հետ և ծանոթանալ իմ կարծիքին: Նա ասաց. «Պատվելի, հիմա որ լեռ եք բարձրացել, հույս ունե՞ս, որ պետք է կարողանաք թուրքերին դիմադրել»: Պատասխանեցի. «Այո, հույս ունեմ, որովհետև դժվար թե թուրքերը, որ արդեն բախտորոշ պատերազմի մեջ են, հեռավոր ճակատներից հսկա բանակներ փոխադրեն այստեղ՝ մեր դեմ կռվելու համար, իսկ մենք իրենց որևէ վնաս չենք պատճառում: Բայց և այնպես, որևէ կառավարության համար խնդիր չէ բավարար ուժ հավաքել նույնիսկ շրջակա գյուղերից և մոտակա քաղաքներից. ես նկատի ունեմ, որ մինչև երեք հազար զինվոր մեր դեմ կարող են հանել, որոնց, հույս ունեմ, կկարողանանք հաջողությամբ դիմադրել Աստծու օգնությամբ»:

Պատվելին առարկեց. «Ձեր վիճակն ինձ դուր չի գալիս: Կարծում եմ՝ ժողովուրդը շատ թույլ է, անհրաժեշտ կազմակերպվածություն ու կարգապահություն չունեք»: Նրան բացատրեցի, որ լեռան գագաթին այդ կաթկաթող [անձրևի] ու թանձր մառախուղի մեջ ժողովուրդն ստիպված է ամենից առաջ լուծել իր պատսպարանի հարցը, որից հետո մեր բոլոր ուժերը տրամադրելու ենք հնարավոր լավագույն կազմակերպվածու-

թյունն ու կարգապահությունն ապահովելուն: Նոխուստյանն ի վերջո հայտարարեց, որ, իր կարծիքով, այս գործը շատ է երկարելու, գուցե կառավարությունն ուրիշ գրություններ և պատվիրակություններ ևս ուղարկի մեզ խաբելու համար և ավելացրեց. «Եթե տեսնեմ, որ կառավարությունը ձեզ շատ կարևորություն չի տալիս, կճողոպրեմ կգամ, այլապես ձեզանից հույս չունեմ»:

Ժողովների ընտրությունից ոչ պակաս կենսական գործեր կային անելու, հատկապես՝ զորանցի և պատնեշների կառուցման առաջնահերթ գործը: Սակայն, դժբախտաբար, հնարավոր չեղավ արագ իրականացնել այս հույժ կարևոր աշխատանքը, որովհետև ժողովուրդն ամեն ինչից առաջ ստիպված էր պատսպարաններ պատրաստել խոնավությունից պաշտպանվելու համար: Լեռը, բացի աշնանից, միշտ պատած էր թանձր մառախուղով, և եղանակն ասես կիսաանձրևային էր. հովը փչելուն պես ջուրն անձրևի նման թափվում էր ծառերի տերևներից: Կըզըլջայի կլիման ավելի չորային էր, այնտեղ հաստատվածներն ավելի շուտ կարողացան կառուցել իրենց զորանոցը:

Բ

Այս իրավիճակում էին, երբ օգոստոսի 7-ին Թաթար-Ալանգուն ընդհանուր ժողով գումարելու անհրաժեշտություն առաջացավ: Մասնակցելու էին Կըզըլջայի, Կուզըղազի ու Դամլաջըկի երեք տեղական ժողովները՝ ողջ կազմով և Դ[աջի] Դաբիրլիից ու Բիթիասից ընտրված նոր անդամները, որոնք չէին կարողացել ժամանակին հասնել: Ժողովին Բիթիասից հրավիրվել էին նաև պատվելի Դ[արություն] Նոխուստյանն ու Մովսես Բենջիլյանը: (Դալեպից փախած և մեզ միացած Դովհաննես Գուպուրյանը հույս ուներ իր վերջին տեղեկություններով համոզել նրանց, որ գան և միանան մեզ): Բայց նրանք չեկան:

Ժողովը հազիվ էր ընտրել ատենապետ ու ատենադպիր, երբ լուր տվեցին, թե մոտ երկու հարյուր զինվորներ Խալիդի առաջնորդությամբ արշավում են Յուլ-Աղըզի⁷⁸ կողմից: Ժողովն ամմիջապես դադարեցրեց նիստն ու սկսեց նախապատրաստվել մարտի: Թաթար-Ալանգուն դիրքավորված երկու տասնյակ հայ աշխարհագորայինները շուտով ուղարկվեցին Յուլ-Աղըզը՝ մեր պահապան քաջերին միանալու: Դեռ չմեկնած՝ նրանցից մեկը շատ լուրջ տոնով հարցրեց. «Ի՞նչ է, զինվորների

վրա կրակե՞լու ենք»: Այդ հարցով նա արտահայտում էր նաև ուրիշների դիրքորոշումը: Դյուրին չէր հզոր իշխանության հմայքն ու նրա առթած երկյուղը դեմ չարտելը, որքան էլ այդ իշխանությունը հետադեմ ու գազան լիներ: Նրան պատասխանեցին՝ միայն մեկ հարց պետք է մտահոգի իրենց՝ ուղիղ նշան բռնել և զինամթերքը չվատնել: Լուր ուղարկվեց նաև մեր երեք բանակավայրեր, որոնցից քիչ անց օգնական զորքեր հասան: Ճակատամարտը տևեց վեց ժամ, և թշնամին ստիպված նահանջեց՝ 5-6 սպանված տանելով իր հետ: Այդ օրը մենք որևէ սպանված կամ վիրավոր չունեցանք:

Գ

Հաջորդ մեկ-երկու օրերին ռազմական մարմինը կարողացավ որոշ չափով կազմակերպել բոլոր մարտիկներին. նրանց բաժանեց տասնյակների և յուրաքանչյուրի համար նշանակեց մի տասնապետ: Ջորանոցին անհրաժեշտ ատաղձը պատրաստվեց, նրա պատերը բարձրացան: Բայց տակավին շատ անելիք կար զորանոցը, որպես այդպիսին, պիտանի դարձնելու համար: Պատրաստ էր միայն Կրզըլջայի զորանոցը:

Սակայն ավելի կարևոր էր պատնեշների և խրամների հարցը: Դրա համար բոլոր փետատները⁷⁹, թիերն ու կացինները գործի դրվեցին ու մի շարք կարևոր կետերում պատնեշներ կանգնեցվեցին: Տեղ-տեղ հողը փորում էին, ուրիշ տեղերում էլ հաստ պատեր էին սարքում՝ հրացանների համար նրանց վրա թողնելով փոքր ու կողմնակի բացվածքներ:

Պատնեշների արդյունավետ գործածության նպատակով բազմաթիվ տեղերում հատվեցին [հարակից] անտառները՝ մինչև 20-25 մետր հեռավորությամբ, որպեսզի հնարավոր լիներ խիտ անտառների արանքից տեսնել թշնամուն:

Դ

Բայց թշնամին չէր ուզում պատրաստվելու համար մեզ ավելի երկար ժամանակ տալ:

Օգոստոսի 10-ին՝ արևածագից քիչ անց, թշնամին նորից հնչեցրեց պատերազմի ահազանգը. այս անգամ հարձակումը Հ[աջի] Հաբիբլիի

կողմից էր՝ Բակաջըկից⁸⁰: Դժբախտաբար, մեր պահակները, վախենալով թշնամու անհամեմատ մեծ թվից (կանոնավոր [բանակի] մոտ 2000 զինվոր, մինչդեռ պահակները 15 հոգուց ավելի չէին)՝ նահանջեցին առանց դիմադրելու⁸¹: Թշնամին արդեն բավական առաջացել էր, երբ մեր քաջերի մահասփյուռ զնդակները կասեցրին նրանց առաջխաղացումը:

Բայց, դժբախտաբար, այս անակնկալ հարձակման հետևանքով բազմաթիվ զոհեր տվեցինք: Իրականում զոհերը հենց իրենք էին մեծ չափով մեղավոր դրա համար: Բիթիասցի ութ ընտանիք (52 հոգի), փոխանակ չորս կենտրոնից մեկնումեկին միանալու, գնում է և հաստատվում Ջորլեն⁸² հուվիլընեն⁸³ կոչված կենտրոնից շատ հեռու մի մեկուսի վայրում՝ երկու պատճառաբանությամբ. առաջին՝ քանի որ այդ վայրը մեկուսի էր, անհավանական են համարում, որ թշնամին այնտեղ գա և գտնի իրենց, երկրորդ՝ նրանք ուրիշներից ավելի հացահատիկ ունեին, չէին ուզում նրանց խառնվել և «կողոպտվել»: Սակայն տեղի է ունենում անակնկալ. թշնամին գալիս է ու գտնում նրանց այնտեղ՝ անպաշտպան վիճակում: Առանց խնայելու մորթում են ավեհեր Կիրակոս Կաղըյանին ու նրա ծեր կնոջը, նաև ուրիշ մի պառավի՝ Սիմա Մազզենյանին, իսկ մնացյալներին գերեվարում են:

Նրանցից ոչ հեռու ծերբակալում են ու մորթում հաջիհաբիբլիցի ծերունի Անդրեաս Ջուհուրյանին ու նրա կնոջը:

Մերձակա մի ուրիշ վայրում՝ Քեոյլու գեղ⁸⁴ կոչվող քարայրում էր տգիտաբար հաստատվել թիթեղագործ Գևորգ Ֆիլյանը՝ իր ընտանիքով: Երբ հրացանների ձայները մոտենում են, Գևորգի կինն ու անչափահաս զավակները հասկանում են, որ պետք է փախչել, բայց Գևորգը հավանական չի համարում, որ զինվորները կարողանան գտնել իրենց թաքստոցը: Կինն ու զավակները փախչում են, իսկ նա և ծեր մայրն անդրդվելի են մնում: Թուրք զինվորները գալիս են, դաժանաբար սպանում են մորը, իսկ Գևորգին տանում են հրամանատարի մոտ: Իր բանակի բազմաթիվ զոհերի պատճառով սաստիկ հուզված հրամանատարը հրամայում է. «Բեշինի, ալթըսընը բիր չուկուրա կոյուն, թևաթուր էքմեյին» («Յուրաքանչյուր հինգ-վեց հոգուն դրեք փոսի մեջ, մի տարածայնեք»): Ապա նա հարցաքննում է Գևորգին և, ավելի կատաղած, երկու տոսկալի ապտակ է հասցնում վերջինիս ու հրամայում զինվորներին նրան էլ տանել ու վերացնել: Վեց տեղից սվինահար Գևորգն անզգա տապալվում է գետին, իսկ զինվորները թողնում գնում են: Բարեբախ-

տաբար, Գևորգը չէր մահացել. ճակատամարտի ավարտից հետո մերոնք նրան գտնում են, խնամում, վերականգնում առողջությունը:

Այդ կռվից հետո թշնամին արժեքավոր ավար թողեց՝ այծեր:

Բուն ճակատամարտը տեղի ունեցավ Օմարեն Գիտեյնում⁸⁵։ Բակաջրկի պատնեշից երեք մղոն հեռավորությամբ: Թշնամին այս անգամ իր հետ էր բերել նաև «Կաթըր թոփը»⁸⁶ տեսակի երկու թնդանոթ, որոնք անդադար ռումբեր էին տեղում մեր հրացաններից դուրս եկող ծխի ուղղությամբ: Դժբախտաբար, այդ ծուխը մատնիչի դեր կատարեց ողջ պատերազմի ընթացքում: Միայն սովորական հրացանները չէին ծուխ հանում. 95 «Գրաներն» ու 2 «Մարթիններն» էլ (մեր ունեցած կարևորագույն զենքերը) մուխի քուլաներ էին թողնում իրենց գնդակների հետևից, քանի որ փամփուշտները լցված էին սովորական վառոդով: Միայն 11 կունդակլը «Մաուզերներն» էին անծուխ: Ուստի, զարմանալի չէր, որ «Մաուզերի» հարյուրավոր գնդակներ ու ռումբեր էին անմիջապես հաջորդում մեր ամեն մեկ գնդակին, մինչդեռ մենք հնարավորություն չունեինք որոշելու թշնամու որևէ զինվորի տեղը՝ առանց նրան տեսնելու: Այդուհանդերձ, այդ ռումբերը չկարողացան մեզ վնասել ողջ պատերազմի ընթացքում՝ բացի աննշան վերքեր և քերծվածքներ պատճառելուց, երբեմն՝ իրենց պոկած ժայռաբեկորներով: Նույնիսկ որոշ չափով օգտվեցինք դրանցից, քանի որ մեր վարպետներն զգուշությամբ քանդում էին չպայթած ռումբերը և օգտագործում նրանց մեջ եղած հարյուրավոր կապարե գնդակները:

Մեկ ուրիշ ցավալի երևույթ նույնպես մեր գործը զգալիորեն դժվարացրեց. ճակատամարտի սկզբից մի քանի ժամ անց սկսեց անձրև տեղալ և շարունակվեց ռազմական գործողությունների ընթացքում: Մեկ-երկու ժամ անց մեր կռվողներն ամբողջովին թրջվել էին ջուրն ընկած մարդու նման: Անշուշտ, թուրք զինվորներն էլ պետք է թրջված լինեին: Բայց դժբախտությունն այն էր, որ մեր զենքերն ու զինամթերքը գրեթե անգործածելի էին դարձել. ամեն ինչ թաց էր, նույնիսկ հրացանների միջից ջուր էր կաթում: Փողի բերանից լիցքավորվող հրացաններն արդեն գրեթե անկարելի էր գործածելը. նույնիսկ եթե թրջված էլ չլինեին, թե՛ վառողը և թե՛ հրացանները թրջվելու էին լիցքավորելու պահին: Իսկ կըրմա հրացանների փամփուշտներն էլ, որ թղթից էին շինված, ոչ թե միայն դրսից թրջվել էին, այլև ջուրը ներս էր անցել, և փամփուշտները գրեթե խմորի էին վերածվել: «Գրաների» փամփուշտների մեջ ջուր ընդհանրապես չէր թափանցել, քանի որ դրանք մետաղից էին պատ-

րաստված: Սակայն «Գրաների» մեխանիզմները վնասվել էին անձրևից, և նրանց գործածությունը դժվարացել էր: Իսկ թշնամու զենքն ու զինամթերքը կատարելապես անվնաս էին մնացել, քանի որ, անշուշտ, ձեռնարկել էին կանխարգելիչ բոլոր միջոցառումները:

Այս ճակատամարտը տևեց տասներկու ժամ: Բայց, հակառակ մեզ համար աննպաստ պայմաններին, թշնամին չկարողացավ առաջանալ շնորհիվ մեր քաջերի դիմադրության:

Հաճելի պարտականություն ենք համարում հիշել այդ հերոսներից Պետրոս Գալուստյանի սխրանքը: Նա դիրքավորվել էր թնդանոթի դեմ դիմաց՝ մի ծակոտկեն քարաժայռի (մեր գյուղացիները դրան «Չակրակ» են անվանում) հետևում՝ թնդանոթաձիգներին ոչնչացնելու նպատակով: Քաջ Գալուստյանն այդ խախտու պատնեշի հետևից ընդամենը հինգ փամփուշտ է արծակել: Նկատվում էր, որ նրա յուրաքանչյուր կրակոցից հետո մեծ շփոթություն ու իրարանցում էր առաջանում թնդանոթի շուրջը, իսկ մի քանի րոպե անց վերսկսում էին ռմբակոծել քարաժայռը: Բայց Պետրոսը շատ քիչ էր մտահոգվում այդ ռմբակոծությունից: Նրա հինգերորդ գնդակը լռեցրել էր թնդանոթը, իսկ [թնդանոթաձիգին] փախուստի մատնել:

Թնդանոթի մերձակայքում կռվող մի ալևի զինվոր սվեդիացի մի հույնի պատմել է, որ Գալուստյանն իր արծակած հինգ գնդակներով սպանել է չորս թնդանոթաձիգի, որոնք իրար հաջորդել են նույն թնդանոթի մոտ: Թուրք հազարապետը, տեսնելով իր մարդկանց ընկնելը, ամբողջովին շփոթված ու վախեցած, անմիջապես նահանջի հրաման է տալիս՝ ասելով. «Անկարելի է սրանց հաղթել. կարող են անվրեպ խփել անգամ գերանի ծայրին դրված ասեղին, բավական է՝ միայն տեսնեն»:

Այս կռվում վիրավորվեցին Մովսես Ադամյանը, Փանոս Ֆասըլյանն ու Հակոբ Ս. Դավիթյանը, զոհվեցին Հակոբ Կարագյոզյանը («Ըլլեուն»⁸⁷) և Պողոս Անտեքյանը: Մասնավորապես արժե հիշել Հակոբ Կարագեոզյանին, որը, թեև մահացել է, բայց անմահ անուն թողել է բոլորի սրտերում իր քաջությամբ և դյուցազնությամբ՝ անգամ իր վերջին շնչում: Երբ մարտական ընկերները վիրավոր Հակոբին շալակած տանում են լեռն ի վեր, նա մերժում է իր նկատմամբ ցուցաբերված այդ աննշան հոգատարությունը՝ ասելով. «Խնդրում եմ ինձանով չզբաղվել: Ես ինչ որ պետք է լինեմ՝ եղել եմ: Գնացեք և դիմադրեք թշնամուն»:

Մեր կարծիքով՝ այս ճակատամարտում թշնամու կորուստը 100-ից պակաս չէր: Հաջորդ առավոտյան իմացանք, որ լուսաբացին թշնամին

քաշվել-հեռացել է՝ անձրևի տակ սոված գիշեր անցկացնելուց հետո, քանի որ իրենց պաշարը, չգիտենք՝ ինչ պատճառով, տեղ չէր հասել:

Դժբախտաբար, անձրևը միայն կռվի վրա չազդեց, ավերեց մեր բանակավայրերը: Ժողովրդի մեծ մասը դեռ չէր հասցրել իր համար անհրաժեշտ հյուղակները սարքել: Ոմանք հաջողել էին իրենց տնակները սարքել, բայց չէին հասցրել տանիքները ծածկել: Ավելի վատ վիճակում էին նրանք, ովքեր հողը թափել էին տանիքների վրա, բայց չէին ամրացրել: Կային նաև շատ քիչ թվով գյուղացիներ, որոնք սավաններով կամ ուրիշ ծածկոցներով անլիարժեք վրաններ էին սարքել: Ամբողջ գիշերվա ընթացքում այնպես էր անձրևում, կարծես ջուրը տիկերից էր հոսում: Տանիքներից ցեխ էր թափվում. անկողին, հանդերձանք, կահ-կարասի ջրի մեջ էին: Հացահատիկը, այլուրը և բոլոր տեսակի սննդեղենը նույնպես թրջվել էին և խմոր դարձել: Մեր բնակատեղիից ոչ շատ հեռու՝ անտառում, մի խեղճ ծերուկ էր կորել և աղիողորմ կերպով ճչում էր՝ օգնություն հայցելով: Բայց ո՞վ կարող էր տեղից շարժվել: Մութը սոսկալի էր, իսկ ճրագ կամ մոմ վառելը՝ բացարձակապես անկարելի: Հուսահատությունը շատ դառն էր, բայց անխուսափելի: Եթե կյանքն այսպես էր լինելու լեռան վրա, հարկավոր չէր արտաքին թշնամի. արդեն իսկ կորած էինք:

Բարեբախտաբար, հաջորդ առավոտ պայծառ և տաքուկ արևը փութաց իր ոսկե շողերով մխիթարել մեզ և հարություն տալ մեր մեռած հույսերին ու կորովին:

Նույն օրը՝ օգոստոսի 10-ին, թշնամին անակնկալ կերպով երևաց Կրզըլջայի մոտակայքում, բայց շուտով հետ դարձավ՝ առանց լուրջ հարձակում գործելու:

Ե

Կրզըլջայի կողմից թշնամու՝ հյուղակներին շատ մոտ հանկարծակի երևալը սարսափեցրել էր այնտեղ բնակվողներին. նրանք անմիջապես սկսել էին Կուզըղազ տեղափոխվել՝ թշնամու անակնկալ հայտնվելը լուրջ հարձակում կարծելով:

Վերջին ճակատամարտի մեր փորձառությունից սովորեցինք, որ մեր ուժերը երեք-չորս տարբեր կենտրոններից կառավարելը շատ դժվար էր ու անապահով: Հարկավոր էր ունենալ միայն մեկ կենտրոն, որտեղից կարելի լիներ անմիջապես անհրաժեշտ քանակի ուժ ուղարկել թշնամու

դեմ հարձակման ժամանակ: Նման կարգավորման մեկ ուրիշ առավելությունն էլ այն էր, որ վախկոտներն ու թուլակամները դյուրությամբ չէին կարողանալու փախչել զինվորական պարտականությունից, և, վերջապես, թշնամուն ստիպելու էինք գործել ավելի նեղ սահմաններում:

Դամլաջըկի ժողովը օգոստոսի 11-ին Կուզըղազի ժողովին ուղարկել էր մի նամակ, որտեղ, շեշտելով միասնական հավաք գումարելու անհրաժեշտությունը, գաղթելու իր պատրաստականությունն էր հայտնում հնարավորության դեպքում, այլապես խնդրում էր մեր ժողովրդին փոխադրել Դամլաջըկ:

Խնդիրը լրջորեն քննարկելով՝ որոշեցինք ծովեզերյա Դամլաջըկը դարձնել կենտրոն: Ռազմական տեսակետից Դամլաջըկը թեև չունեիր Կուզըղազի առավելությունը, բայց խելամիտ չէր ծովեզերքը թշնամու առջև բաց թողնելը:

Մեկ օր անց ժողովրդի մեծ մասն արդեն տեղափոխվել էր Դամլաջըկ: Այդուհանդերձ, բազմաթիվ ընտանիքներ շարունակեցին մնալ Կուզըղազում, իսկ բիթիացիների մեծ մասը հաստատվեց Կուզըղազի և Դամլաջըկի միջակա Կափլան-Դուզաղլում: Սակայն նրանց մարտիկներն էլ Դամլաջըկի գորանոցից էին օգտվում:

Տեղական ժողովների միացումով՝ Դամլաջըկում ստեղծվեց Ընդհանուր վարչական մարմին, որի պարտականությունը պատերազմի մարտավարությունը մշակելն էր, կազմակերպչական աշխատանքների կատարումը, հսկումն ու կառավարումը: Գերագույն իշխանությունն ու ամեն ինչի պատասխանատվությունը նրա վրա էր դրված: Այդ մարմնի իրավասությունը ծրագրերի մշակումն էր ու իրականացումը, տարբեր կարգադրություններում փոքր կամ մեծ փոփոխություններ մտցնելը և անհրաժեշտության դեպքում պատիժներ սահմանելը:

Վարչական մարմնի ատենապետի պաշտոնը վստահվեց տողերիս հեղինակին, իսկ ատենադպիրնը՝ Միքայել Կեկեջյանին: Ժողովի անդամներն էին Հեթում Ֆիլյանը, Սահակ Անտեքյանը, հաջի Խաչեր Մարտիրյանը, Հովնան Իսկենդերյանը, Իսկենդեր Քելեմյանը, Ջաբրա Գազանջյանը, Պողոս Գապայանը, Հովհաննես Գոպուրյանը, Մովսես Տեր-Գալուստյանը, Մելքոն Գույումջյանը, Գրիգոր Թովմասյանը, Եսայի Իբրահիմյանը, Սիմոն Շեմմասյանը և Թովմաս Աղայանը:

Վարչական մարմինը ռազմական վերահսկիչ (գործածված անվանումը՝ «Սևկիաթ ռեխի»)՝ «Առաքումի տնօրեն») կարգեց Մովսես Տեր-Գալուստյանին, որ երկու օգնականների՝ Սերոբ Շերեթեթյանի⁸⁸ ու Տիգ-

րան Քարաջյանի հետ պատնեշների համար հերթապահներ էր նշանակելու և պատերազմի ժամանակ օգնական զորք էր ուղարկելու համապատասխան վայրերը: Ի պաշտոնե Մովսես Տեր-Գալուստյանն անդամակցում էր Վարչական մարմնին, որը նրա միջոցով տեղեկանում էր իրավիճակին և լուծում ծագած խնդիրները: Տեր-Գալուստյանն ամբողջովին ենթարկվում էր Վարչական մարմնին: Պատերազմին առնչվող կարևոր քայլերը գործադրվում էին Վարչական մարմնի անդամների խորհրդակցությամբ և Վարչական մարմնի որոշումով: Յուրաքանչյուր փոփոխություն, օրինակ, որևէ տասնապետի փոփոխություն, կատարվում էր վերջինիս որոշումով: Հանցավորների պատիժները Վարչական մարմնին ինքն էր սահմանում:

Ռազմական դասավորումները մնացին նույնությամբ. կռվողները նորից բաժանվեցին տասնյակների: Կռվելու ունակ և զենք ունեցող միացյալ ուժերը բաղկացած էին 43 տասնյակից՝ նույնքան տասնապետներով:

Այս հաշվից դուրս էր մնում Չեթեյական⁸⁹ կազմակերպությունը: Սա շատ կարևոր հավելում էր. անցած օրերի մեր փորձառությունը թելադրեց ստեղծել այն: Մեր ռազմական գործունեության շրջանակը՝ ողջ Մուսա լեռը, ընդգրկում էր շուրջ 70–80 քառակուսի մղոն տարածք, որը չափազանց մեծ էր մեր պաշտպանության համար: Կարևոր դիրքերում մեր հերթապահները հազիվ երկու տասնյակ հոգի էին՝ հաճախ մի քանի հատ մեր լավագույն զենքերով: Այս պատճառով նրանք, բնականաբար, չէին կարողանա զսպել խոշոր գորամիավորումներին և արագորեն կնահանջեին: Մինչև լուրը հասներ կենտրոնի զորանոց և նոր ուժեր հասնեին, կտևեր 2–3 ժամ, իսկ այդ ընթացքում թշնամին մեծ տարածք կգրավեր:

Այս անպատեհությանն ինչ-որ չափով վերջ տալու համար ամենաքաջերից կազմվեց չեթեյական երեք խումբ՝ 33 հոգուց բաղկացած: Նրանց կենտրոնատեղին թաթար-Ալանց լեռան կենտրոնում էր, որտեղ միանում էին գլխավոր ճակատներից եկող ճանապարհները, որը, սակայն, հարմար չէր ընդհանուր կենտրոնի համար, քանի որ դժվարապաշտպանելի էր համարվում և շատ հեռու էր ջրի աղբյուրներից: Չեթեյներն այդտեղից անմիջապես օգնության պետք է փութային մեր այն պահակ զինվորներին, որոնց դիրքերի վրա թշնամու հարձակում էր սկսվել: Եթե հարձակումն սկսվեր միաժամանակ մի քանի կետերից, չեթեյները բաժանվելու էին մի քանի խմբերի: Առաջին հարձակման լուրն առնելուն պես վիճակ էին հանելու, թե ո՞ր խումբն է օգնության գնալու,

մյուսները կես ժամ սպասելու էին: Եթե այդ ընթացքում հարձակման մասին լուր հասներ երկրորդ ճակատից, վիճակով որոշված երկրորդ խումբը պետք է շտապեր օգնության. երրորդ խումբը կես ժամ ևս սպասելու էր՝ հավանական երրորդ հարձակման հաշվառումով: Եթե այս սպասումներից հետո պարզվեր, որ հարձակումը միայն մեկ ճակատից է, առաջին կես ժամից հետո երկրորդ խումբը, իսկ հետո՝ կես ժամ անց, երրորդ խումբն էր փութալու առաջին ճակատ:

Չեթեյները զինված էին մեր լավագույն զենքերով:

Չեթեյական կազմակերպության երեք խմբապետներն էին Եսայի Յաղուբյանը⁹⁰, Պետրոս Դըմլաքյանը⁹¹ և Պետրոս Տուտազյանը: Մյուս 30 չեթեյներն էին Առաքել Պըլզեյանը, Գևորգ Կըլըջյանը, Մանուկ Կըլըջյանը, Մարկոս Սնապյանը, Սարգիս Ատաջյանը, Գրիգոր Խողիկյանը, Խաչեր Տեր-Մովսեսյանը, Մարտիրոս Հաբեշյանը⁹², Մարտիրոս Զանսըզյանը, Միհրան Ադամյանը, Միհրան Գազանջյանը, Մովսես Յարամազյանը, Պետրոս Աբրահամյանը, Պետրոս Գալուստյանը, Պետրոս Ադամյանը, Սեդրակ Բուրսալյանը, Սերոբ Գեբեշյանը, Տիգրան Իբրահիմյանը, Հակոբ Բոյաջյանը, Հարություն Խողիկյանը, Փանոս Սըզալյանը, Կարապետ Սըզալյանը, Եսայի Սըզալյանը, Թովմաս Այնթապյանը, Հակոբ Փենենյանը, Թովմաս Կերենջյանը, Պետրոս Սըզալյանը, Իսկենդեր Շըրշյանը, Հովհաննես Աբրահամյանը, Սերոբ Գապայանը: Հիշենք, որ այս կազմակերպությունը մինչև վերջ անփոփոխ չմնաց:

Կազմակերպվեցին «Թելեֆոնի տղաքը»՝ տասը-տասներկու տարեկան տղաներ, որոնց հանձնարարվեց թշնամու հարձակումների լուրը խրամներից հասցնել մեր կենտրոն: Խմբեր էին կանգնեցվել՝ յուրաքանչյուր տասը ռոպե հեռավորությամբ: Առաջին խումբը հաջորդին էր հանձնում գրավոր լուրը և վերադառնում իր տեղը, և այսպես հաջորդաբար՝ մինչև մեր կենտրոն:

Կանայք թեև կազմակերպված մարմնի մեջ չէին մտնում, բայց օգնում էին խրամներին ջուր և պաշար հասցնելով: Սա հավելյալ աշխատանք էր՝ ի թիվս նրանց սովորական առտնին պարտականությունների, որոնք ներկա արտասովոր պայմանների պատճառով կրկնապատկվել էին: Տան համար ջուր բերելը միշտ նրանց պարտականությունն է եղել, իսկ հիմա աղբյուրները կացարաններից շատ հեռու էին: Կային տեղեր, որտեղ ջրի գնալու և վերադառնալու համար ոչ պակաս մեկ ու կես ժամ էր հարկավոր: Աղբյուրից հոգնած վերադառնալիս նրանց ուսերը ճնշում էին ջրով լի կժերն ու նավթի տարաները⁹³, իսկ առավել ճգմվում էին

նրանց սրտերը այն մտահոգությունից, թե ինչե՞ր են պատահել իրենց բացակայության ընթացքում:

Բնականաբար, լեռան վրա ջրաղաց չկար, ուստի կանայք հացահատիկն աղում էին երկանքով, խոշորահատիկ ալյուր («գըրթըլ») էին պատրաստում և հաց թխում: Սակայն նրանք այս ամենն անում էին առանց որևէ գանգատի: Նրանցից Շուշան Գապայանը, որ գավակ չուներ, զինված էր և երբեմն շրջում էր իր ամուսնու հետ:

Կազմավորվեց նաև «Գործավորների վաշտ» այն այրերից, որոնք տարիքի կամ էլ զենք չունենալու պատճառով չէին կարողանում մասնակցել կռվին: Նրանց պարտականությունը խրամներ փորելն էր և գլխավոր խրամների առջևի անտառները հատելը, որպեսզի տեսադաշտ լիներ թշնամուն բավական հեռվից նկատելու համար: Որոշ տեղերում նրանք փակեցին ճանապարհները՝ այնտեղ ժայռեր դիզելով: Առանց այդ էլ անում էին այս ամենը՝ առանց կազմակերպված լինելու, բայց կազմակերպվածությունն ավելի արդյունավետ էր դարձնելու նրանց ջանքերը: Գործավորների վաշտի վերակացու նշանակվեցին Դակոբ Քեչիշյանը, Ջաբրա Բարաջյանը, Պետրոս Մարտիրոսյանը և Պետրոս Քյուրոյանը:

Բոլոր շներին սպանեցին, որպեսզի իրենց աղմուկով չմատնեին մեր բանակատեղին: Այդ գործը հանձնարարվեց Օհան Փենենյանին:

Գլխավոր մունետիկ նշանակվեց Առաքել Կեպեշյանը, որի օգնականն Օհան Փենենյանն էր: Նրանց գործն իրենց բարձր ծայնով ահանգանգ հնչեցնելն էր, անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուրին իր պարտականությանը հրավիրելը և կարևոր հրամաններն ու կարգադրությունները ժողովրդին հաղորդելը:

Ձինամթերքի վերակացու նշանակվեց Ներսես Գազանջյանը, որի պարտականությունը զինվորներին փամփուշտ, վառոդ և կապարե գնդակներ բաշխելն էր, դատարկված փամփուշտների կրկին լիցքավորմանը և շարքից դուրս եկած զենքերի նորոգությանը հսկելը: Այս ծառայությունները կատարում էին մեր դարբինները՝ Լևոն Գազանջյանը, Միքայել Գազանջյանը և Վանես Էոյանյանը:

Ժողովրդի պաշարը հավաքելու և օրապահիկ բաշխելու քայլ չարեցինք (թեև վերջին օրերին պատրաստվում էինք արդեն դա նույնպես անելու): Այդուհանդերձ, Վարչական մարմնի որոշումով ամեն օր եզներ էին մորթվում, որոնց միսը ուղարկվում էր խրամները՝ մեր զինվորներին, իսկ կաշին գործածվում էր նրանց ոտնամանների ներբանների համար:



1916 թ. հուլիսի 25-ին լոնդոնյան "The Times. History and Encyclopedia of the War" շաբաթաթերթում տպագրված այս լուսանկարում մուսալեռցիներն են՝ հավաքված Պոր-Սաիդի վրանաքաղաքում կարմիր խաչով փրկության դրոշ բռնած: Այս դրոշն է գրավել ֆրանսիացի նավաստիների ուշադրությունը, և հենց նրանք էլ օգնության հասան Մուսա լեռան վրա շրջափակված հայերին:

Լուսանկարը Դայաստանի ազգային արխիվի հավաքածուից

2

Ինչպես նախապես նշեցինք, մենք մեծ հույս էինք կապել ծովի հետ: Գիտեինք, որ մի բուռ ժողովուրդը չէր կարողանալու մինչև վերջ դիմադրել պետական կազմակերպված [համակարգին], որքան էլ վերջինս տկար լիներ: Եթե նույնիսկ կատարյալ հաջողություն ունենայինք մեր առաջին քայլերում, կարճ ժամանակ անց մեր առաջ ծառանալու էր զինամթերքի բացակայության հարցը և մեզ առաջնորդելու էր անպատիվ ու սոսկալի վախճանի: Եթե թշնամին նույնիսկ դադարեցներ հարձակումները, մեզ սովամահ անելու համար երկար չէր սպասելու: Ինչպես

արդեն ասացինք, մեր պաշարը քիչ էր: Մեր ժողովրդի մեծ մասը, որ ապրում էր օրը օրին, միանգամից շատ բան գնելու միշտ էլ անկարող է եղել, իսկ մնացյալ փոքր մասը տիրող անորոշության պայմաններում չէր համարձակվել մեծաքանակ գնումներ անել: Ուստի, ամեն նոր օր մեզ մի քայլ ավելի էր մոտեցնում սովի սև ուրվականին:

Կար մի հանգամանք, որը շատ փոքր չափով մեղմացնում էր սննդի համար մեր խուճապը՝ զիշերային արշավներ դեպի մեր պարտեզներն ու վարի դաշտերը: Ամեն օր՝ կեսօրից հետո, բազմաթիվ այրեր, կանայք ու տղաներ մոտենալով սահմանագլխին, հետազոտում էին թշնամու դիրքերը, իսկ մութ ընկնելուն պես գնում-անցնում էին նրանց միջով և վերադառնում չլուսացած՝ թուզ, խաղող և ձիթապտուղ բերելով մեր պարտեզներից, նաև կորեկ՝ ֆելլահների⁹⁴ արտերից: Թուրք պահակները, երբ լսում էին նրանց ոտնածայները, խելահեղորեն կրակում էին՝ առանց համարձակվելու իրենց տեղերից շարժվել: Մյուս թուրք պահակները նույն կերպ պատասխանում էին նրանց հրացանածոթյանը:

Բայց այսպես չէինք կարողանա լուծել սննդամթերքի հարցը. գողացված պտուղն ու կորեկը որքա՞ն կկերակրեին 4-5 հազար հոգուն: Թեև շատերը Թուրքիայի անկունը մոտալուտ էին համարում, բայց ավելի լրջամիտները պնդում էին, որ պետք է առնվազն վեց ամիս ևս տոկալ: Փրկության միայն մեկ ուղի կարելի էր հուսալ՝ բարեկամ որևէ երկրի ռազմանավի ուղևորություն մեր ափերով: Այդ ժամանակ հնարավոր կլինեին մեր վիճակի մասին տեղեկացնելու մի ճար գտնել:

Այդ նպատակով դեռևս Կուզըղագում տողերիս հեղինակը սպիտակ, հսկա մի դրոշ էր պատրաստել, նրա վրա խոշորատառ անգլերենով համառոտակի բացատրել մեր վիճակը և օգնություն խնդրել անցնող ռազմանավերից: Գրվել էր մատիտով, և մի քանի օրիորդներ կարմիր դերձանով լիցք էին արել նրա վրա: Դրոշը պարզվելու էր ծովեզերքի բլուրներից մեկի վրա՝ հուսալով, որ եթե անցնող ռազմանավերը տեսնեին, հեռվից հաջողելու էին այն կարողալ հեռադիտակով: Ոմանք խորհուրդ տվեցին սպիտակ մի ուրիշ դրոշ էլ պատրաստել ու նրա վրա կարմիր խաչ կարել: Այս գործն էլ ես ստանձնեցի. սպիտակ սավան գտա և վրան կարմիր կերպասից մի հսկա խաչ կարել տվեցի: Ուշագրավ են սրա պատրաստության հանգամանքները: Սավանը ձեռք բերեցի մի այրի կնոջից: Վերջինս դժվարությամբ համաձայնեց հանձնել՝ առարկելով՝ գուցե թե սավանը կորչի: Նրան քաջալերելու համար պատասխանեցի. «Մի՛ վախեցիր, Աստծու օգնությամբ հետո սա թանկագին հնու-

թյուն է լինելու»: Իսկ վրան կարվելիք կարմիր խաչի կերպասը տվեց մի կաթոլիկ տղա. կաթոլիկ հայրերի նվիրած կարմիր գոգնոց էր: Կարմիր խաչը ձևեց ու կարեց քույրս՝ Իսկուհին:

Այս երկու դրոշները պահվում էին ծովահայաց մի բլրի գագաթին: Երեք-չորս հոգի սպասում էին այնտեղ՝ փրկության հույսի մոնը միշտ վառ պահելու համար: Եթե մի օր բախտը մեզ ժպտար ու մի ռազմանավ անցներ մեր ջրերով, ինչպես երբեմն լինում էր ռազմական պարտականություն կատարելիս, դրոշների պահապանները դրանք ծածանելու էին ռազմանավի ուշադրությունը գրավելու համար (բայց ոչ ուրիշ ժամանակ, որպեսզի թուրքը չհասկանար մեր ծրագիրը): Եթե ռազմանավը նկատեր ու մոտենար, [տղաներից] որևէ մեկը՝ Մովսես Գըրըզյանը, Պապուշյանը կամ Չըլըրյանը, նա, ում հերթապահությանը զուգադիպեր փրկարար այցելությունը, իր զգեստները հանելով նետվելու էր ծով ու լողալով փութար ռազմանավին հասցնել մեր աղերսը, որը ծալված դրված էր այս նպատակով հատուկ պատրաստված թիթեղյա մի տուփի մեջ, որի բերանը զոցված էր անագով: Լողացողն այդ տուփը լարով կապելու էր իր մեջքին:

Ահա այդ գրության հայերեն թարգմանությունը:

«Հանուն Աստծու և մարդկային եղբայրության, հանուն Քրիստոսի և քրիստոնեության դիմում ենք անգլիացի, ֆրանսիացի, իտալացի, ռուս և ամերիկացի բոլոր ծովակալներին, նավապետներին և [նրանց երկրներին] իշխանություններին, բոլոր նրանց, ում կարելի է ներկայացնել սույն աղերսագիրը: Տե՛ր, մենք՝ Յողուն-Օլուքի և հայկական ուրիշ վեց գյուղերի բնակիչներս՝ ընդամենը 6000 հոգի⁹⁵, քաշվել ենք Մուսա դաղի Դամլաջըկ կոչված կենտրոնը, որը Սվեդիայից 3-4 ժամ հեռու է դեպի արևմուտք՝ ծովի դեմ դիմաց: Ծովի և մեր միջև թուրքական զորք չկա և չի էլ կարող լինել: Տե՛ր, մենք այստեղ ապաստանել ենք թուրքական բարբարոսությունից, խժոժություններից, կոտորածից և մահից ու մանավանդ մեր կանանց պատվի բռնաբարումից զերծ մնալու համար: Տե՛ր, վստահ ենք, որ Դուք տեղյակ եք թուրքի բնաջնջման ներկա քաղաքականությանը, որը նա իրականացնում է մեր խեղճ ցեղի նկատմամբ: Իբր հայերի ապստամբությունը կանխելու նպատակով այդ խեղճ քրիստոնյաներին վտարում են իրենց տներից, տարագրում իրենց օջախներից, իրենց պարտեզներից ու այգիներից, իրենց զույքերից ու հարստությունից և ուղարկվում թուրքական անձանոթ անապատ, որպեսզի այն-

տեղ, եթե ոչ ճանապարհին, անպատիվ մահ գտնեն վայրենի թուրքերի, քրդերի կամ արաբների ձեռքով: Այս սաղայելական ծրագիրն արդեն կիրառվել է Չեթունում և նրա 32 գյուղերում, ինչպես նաև Ալբուստանում, Գեոքսյունում և Յարփուզում⁹⁶: Այդ կողմերում ոչ մեկ հայ չի մնացել: Դիարբեքի, Կյուրիհի, Աղանայի, Տարսունի, Մերսինի, Դեռոթ-Յուլի, Չաճընի, Քեսաբի, Չասան-Բեյլի, Այնթապի, Քիլիսի և ուրիշ վայրերի հայ բնակչությունը նույնպես տեղահանվել է: Նույն գործողությունն աստիճանաբար կատարվում է Թուրքիայի բոլոր հայերի նկատմամբ:

Այս տողերի հեղինակը մի քանի ամիս առաջ Չեթունի բողոքականների քարոզիչն էր, որտեղ նա ականատես վկա էր թուրքական կառավարության բազմաթիվ, անլուր վայրագությունների: Սույն գրողի համար սահմուկեցուցիչ էր տեսնել, թե ինչպես ութ կամ տասն անդամներից բաղկացած մեծ ընտանիքներ ստիպված էին գաղթել երկու փոքր գրաստներով, տեսնել վեց-յոթ տարեկան բոբիկ տղաների և ծեր այրերի ու կանանց, որոնք գիշեր ու ցերեկ քայլում էին ոտքները ուռած, հաճախ՝ անոթի ու ծարավ: Բազմաթիվ ուժասպառ մայրեր ստիպված էին իրենց գրկից գցել իրենց հոգեհատորներին, և, իրենց բախտն անիծելով, արտասվալից աչքները փակել հավիտենապես: Քանի՞ փափկասուն տիկնայք, որոնք մացառուտի մոտ էին ծնունդ տվել իրենց երեխաներին, ստիպված էին անմիջապես շարունակել իրենց ճանապարհը՝ մինչև բարեսիրտ մահը եկավ-հասավ վերջ տալու նրանց տառապանքների: Ծերերի ու պառավների, փոքրերի, հիվանդների ու տկարակազմների մեծ մասն այսպես կոտորվեց ճանապարհին: Մնացյալները, որոնք ճամփորդության տաժանքին դիմանալու համար դռնս ուժ ունեին, ժանդարմների խարազանների տակ քշվեցին դեպի անխուսափելի գերեզման՝ դեպի անծանոթ անապատների ավազները՝ արևի կիզիչ ճառագայթների տակ մահանալու համար կամ անոթությունից (շատերը ճանապարհին ուտելու բան չունեին, իսկ ոմանց ունեցած փողը կողոպտել էին), կամ ժանտախտից և այլ հիվանդություններից, կամ էլ վայրենի արաբի, թուրքի ու քրդի սրից, եթե զանգվածային մահ տարածող մյուս միջոցներն իրենց գործը մինչ այդ չէին արել:

Եվ հիմա, Տեր, արդեն իսկ հասել ենք այդ սև եղեռնադրամային, այդ դժոխային ողբերգությանը: Իզուր ենք հիմա փնտրում առաջին գաղթի համեմատաբար լավագույն տարբերակը. առաջին գաղթողներն իրենք իսկ հավիտյանս կորցրել են այն: Հիմա կոտորածներն ամենուր սարսափ են տարածում: Դեյր էգ-Ձոր ուղարկված 7000 Չեթունցի այրերից

ոչ մեկը չի ազատվել կոտորածից, իսկ դժբախտ այրիներին ու աղջիկներին իրենց մեջ բաժանել են արաբ վայրենի բնիկները: Կոտորածներ են տեղի ունեցել նաև Դիարբեքիում և Մարաշում: Դիարբեքիում արական սեռին ջնջելուց հետո մնացյալներին գաղթեցրել են Չեթունցիներին բախտակից դարձնելու համար: Մենք իմացել ենք, որ այժմ գաղթողներին չեն թույլատրում նույնիսկ որոշված աքսորավայրերը հասնել: Ճանապարհի գյուղերի բնակիչներն սպանում են նրանց այրերին, իսկ ոմանք առևանգում են նրանց կանանց ու աղջիկներին: Մի խոսքով՝ որոշակի գիտենք, որ, ինչպես ասել է մի ամերիկացի բժիշկ, թուրքական կառավարությունը որոշել է բնաջնջել թուրքահայերին և իր ծրագիրը գործադրում է մեծ եռանդով:

Հիմա, Տեր, մենք դարերով հալածված մի ժողովրդի մնացորդներն ենք: Երբ թուրքական կառավարությունը սրանից քառասուն օր առաջ մեզ տեղեկացրեց մեր ողջ բնակչությանը գաղթեցնելու իր որոշման մասին, մենք այստեղ քաշվեցինք մեր կյանքն ու պատիվը փրկելու համար, քանի որ հստակ գիտենք, որ ներկա պայմաններում գաղթը նշանակում է ոչնչացում, սարսափ, տանջանք և անպատվություն: Ուստի մենք որոշեցինք մեռնել կռվելով, քան սեփական աչքերով տեսնել մեր կանանց պատվի անարգումը և, որպես վախկոտներ, անլուր չարչարանքներով մեր մահը: Մենք այստեղ քիչ ուտելիք, սակավաթիվ զենք և անբավարար զինամթերք ունենք: Անոթության աղաղակն արդեն իսկ լսվում է, իսկ թուրքական կառավարությունն անդադար հալածում է մեզ: Մինչև հիմա հինգ կատաղի ճակատամարտ ենք ունեցել 3000-հոգանոց զորքի և անկանոն խուժանի դեմ, և Աստված հաղթանակը մեզ է շնորհել: Բայց մենք կորցրեցինք մեր ամենից թանկագին կռիվներից մի քանիսին և համոզված ենք, որ հաջորդ անգամ ստիպված ենք լինելու շատ ավելի մեծ ուժի դիմադրելու, հետևաբար վստահ չենք, թե պետք է կարողանանք հաղթել այսչափ քիչ զենքով ու զինամթերքով, մանավանդ որ սովը շատ է մոտեցել մեզ:

Տեր, եթե քրիստոնյա աշխարհը օգնության ձեռք չկարկառի, 6000 խեղճ քրիստոնյաներ դատապարտված են սովալլուկ մեռնելու կամ թուրք զինվորների ձեռքով կոտորվելու: Վստահ ենք, որ, եթե, Աստված մի՛ արասցե, մեկ անգամ պարտվենք, մեր բոլոր այրերը պետք է սպանվեն անլուր չարչարանքներով, իսկ մեր դժբախտ կանայք անձնատուր պետք է լինեն ամոթալի ու սրտակեղեք կյանքի:

Տեր, դիմում ենք Ձեզ հանուն Աստծու և մարդկային եղբայրության, դիմում ենք հանուն Քրիստոսի, դիմում ենք հանուն քաղաքակրթության,

ընդդեմ քաղաքակրթության այս ոսոխի և խնդրում ենք ազատել մեր կյանքն ու պատիվը: Հաճեցեք, Տեր, փոխադրել մեզ Կիպրոս կամ մի ուրիշ ազատ երկիր: Մեր ժողովուրդը ծուլ չէ, նա կարող է իր ապրուստը հոգալ, եթե աշխատանք գտնի: Եթե այսքանը հնարավոր չէ, խնդրում ենք փոխադրել գոնե մեր կանանց, ծերերին ու երեխաներին, իսկ մեզ զինեք զենքով ու զինամթերքով, մեզ ուտելիք տվեք, որպեսզի Ձեզ հետ կողք կողքի կռվենք թուրքական ուժերի դեմ: Խնդրում ենք, Տեր, մի՛ թողեք, որ սովամահ լինենք, մի՛ թողեք, որ ոչնչացվենք, ազատե՛ք մեր կյանքը, ազատե՛ք մեր պատիվը, քանի դեռ շատ ուշ չէ:

Ձեր խոնարհ ծառա

Տեղի բոլոր քրիստոնյաների անունից՝
Տիգրան Անդրեասյան

20 օգոստոսի / 2 սեպտեմբերի 1915⁹⁷

Այս բոլոր կարգադրություններն ու նախազուշույունները շատ լավ էին, բայց բավարար չէին: Կարող էինք ավելին անել և անելու էինք, քանի որ 4–5 հազար հոգու կյանքի ու պատվի հետ էինք խաղում: Ի՞նչ էր լինելու այս ժողովրդի (ճակատագիրը), եթե ժամանակին մեզ չայցելեին ռազմաճակատ: Ո՞վ կարող էր մեզ վստահեցնել, թե այդ ռազմաճակատն անցնելու էին այնքան մոտիկից, որ կարողանային նշմարել մեր նշանները: Բացի դրանից՝ հնարավոր էր, որ մեր եզերքից նավեր անցնեին, մենք նրանց չնկատեինք, քանի որ հաճախ շուրջբոլորը, մինչև իսկ ծովեզերքն ու ծովը, մառախուղով էր ծածկվում: Ուստի Դամլաջը կամ մեր հավաքվելու հաջորդ օրը որոշեցինք մեր աղերսագրի երկրորդ օրինակը Իսկենդեբունի կողմերն ուղարկել մի լողացողի միջոցով: Հավանական էր, որ, ինչպես հաճախ պատահում էր, այնտեղ ռազմաճակատ լինեին: Մովսես Գրրըզյանը՝ որպես առաջնորդ, և նրա օգնականները՝ Աբրահամ Գոճայանը, Կարապետ Խազճյանը և Տիգրան Մավլիկյանը (բնիկ վակըֆցի, բայց Բեյլանում հաստատված), մեկնեցին, սակայն մի քանի օր անց վերադարձան՝ տեղեկացնելով, որ թեև թշնամիների միջով գիշերով անվտանգ անցել էին, բայց այդ կողմերում նավ չէին տեսել: Դժբախտաբար, Տիգրան Մավլիկյանը չվերադարձավ ու չվերադարձրեց այն «Գրա» իրացանը, որ տրվել էր նրան պաշտպանության համար:

Օգոստոսի 18-ին մեր տղաներից մի քանիսն իջնում են Բիթիաս, որտեղ հանդիպում են մոտակա գյուղերից եկած և ավարառությանը զբաղվող բազմաթիվ թուրքերի: Նրանցից մի քանիսին սպանում են, իսկ չոկակլիցի Մուհամմեդին գերեվարում, կապում ու հետները բերում լեռ: Մուհամմեդին հարցաքննեցին, բայց նա առանձնապես հաղորդելու շատ բան չուներ: Հայերի դեմ կռվող զինվորների քանակի մասին մեր հարցին նա պատասխանեց. «Դուրսը թաքուր դիյորլար» («Ասում են, թե ինը վաշտ են»):

«Մուհամմեդ, արի քրիստոնյա դարձիր», – ասում են նրան:

«Գյավուր⁹⁸ օլուրսամ նե՞ օլաջակ» («Ի՞նչ է լինելու, եթե գյավուր լինեմ»), – խրոխտաբար պատասխանում է Մուհամմեդը:

Ի թիվս այս ամենի՝ առաջիններից ավելի սաստիկ փոթորիկ էր պատրաստում թշնամին՝ մեր արիությունն ու կորովը փորձելու համար: Օգոստոսի 19-ի առավոտյան թշնամին երևաց չորս կողմից՝ Կրզըլջայից, Սավուլուկից, Դամլաջը կի մեծ ջրից ու Յուլ-Աղըզըից: Մեզ այնպես էր թվում, թե նա Կրզըլջայի և Սավուլուկի կողմերից երբեք լուրջ հարձակում գործելու մտադրություն չի ունեցել: Ջրից թշնամու հարձակումն էլ ապարդյուն եղավ, քանի որ մեր դիրքերը շատ ամուր էին. բավական էր քարեր գլորել վար, որպեսզի թշնամին ահաբեկվեր և ստիպված նահանջեր, ինչպես ցույց տվեց փորձը:

Բուն հարձակումը Յուլ-Աղըզը կողմից էր: Այստեղ մի քիչ առաջանալուց հետո թշնամին բաժանվեց երկու խմբի. մի խումբը գնաց գրոհելու Թաթար-Ալանգը, իսկ երկրորդը փոքր-ինչ առաջանալով արևմտյան կողմից՝ սկսեց լուռ ու մունջ հսկել անտառները՝ հավանաբար սպասելով Թաթար-Ալանգի ուղղությամբ հարձակման արդյունքին:

Շատ չանցած՝ առաջին խումբը կանգ առավ Թաթար-Ալանգի եզերքին, որ ամենաթույլ և անպաշտպան կետն էր. նրա մի կողմի պատնեշները հեռու էին. մեկ-երկու ժամ էր հարկավոր պահակներին օգնական զորք հասցնելու համար: Դժբախտաբար, ամենաքաջ չեթները պատահաբար մյուս ճակատներն էին ուղարկվել:

Այդ և հաջորդ օրը թշնամին կատարյալ հաստատակամությամբ և մեծ հույսով էր կռվում: Կանոնավոր բանակի երեք հազար զինվոր և երեք–չորս հազար հոգուց բաղկացած մի ահռելի ամբոխ «Ալլահու աքբար»⁹⁹ կանչելով և աղոթելով անդադար կրակ էին տեղում մեր կռվող-

ների վրա: Երկու թնդանոթ շարունակ ռմբակոծում էր այն բոլոր վեճերն ու ծառերը, որոնց հետևից նշմարում էր մեր հրացանների ծուկը: Երբ մութն ընկավ, թշնամու միայն մի մասին էր հաջողվել անցնել Թաթարլանգի արտերն ու հասնել մեր կողմը՝ անտառի եզերքը: Մեր քաջերը նրանց «Ալլահու աքբար»-ին պատասխանում էին կատարյալ պաղարյունությամբ, ազգային երգերով ու անարգական հեզմանքով:

Իսկ արևմտյան կողմում՝ անտառում թաքնված թշնամին, որ, անտառների միջով առաջանալով, գաղտագողի մոտեցել էր մեզ, երեկոյան կողմ հանկարծակի հարձակվեց: Թշնամու արծակած գնդակներն սկսեցին կարկուտի նման տեղալ մեր զորանոցի ու շրջակայքի վրա: Մեր ժողովուրդը, ահաբեկված, իսկույն սկսեց խուժել անտառների խորքերը: Բայց մի քանի կտրիճներ շուտով կարողացան թշնամուն ստիպել նահանջել և խաղաղեցնել վրդովված ժողովուրդին: Մեր քաջերը նաև հաջողել էին ողջ բռնել թշնամու երկու մատնիչ առաջնորդներին՝ քեբուսիեցի հայերի, որոնք նաև անարգել էին մեր կռվողներին: Քիչ անց նրանց սպանեցին:

Սակայն, դժբախտաբար, այդ ճակատամարտում կորցրինք Գրիգոր Նգրուրյանին, Վանես Գոճանյանին¹⁰⁰, Բաղդասար Մարտիկյանին, Ջաբրա Խեյոյանին, Պետրոս Փենենյանին, Սարգիս Շաննակյանին, Գրիգոր Գուպուրյանին և Հակոբ Գարիյանին, հերոսների, որոնք քաջաբար նահատակվեցին (ենթադրվում է, որ նրանցից երկուսին սխալմամբ խփել են մեր տղաները), իսկ Միսաք Բայրամյանը, Բարսում Խոշյանը, Հակոբ Հավաթյանը, Մովսես Հանեսյանն ու Թովմաս Գերմեշյանը վիրավորվեցին. առաջին երեքը հետագայում մահացան:

Ավա՛ղ, ոչ բժիշկ ունեինք, ոչ էլ դեղագործ, որոնք գրագետ ձևով խնամեին մեր վիրավորներին, հուսադրեին նրանց ու թերևս փրկեին նրանցից գոնե մի մասի կյանքը: Մեր բժիշկներն էին Հովհաննես Գուպուրյանն ու Լևոն Գազանջյանը, որոնք ոչինչ չէին հասկանում բժշկությունից, բացի նրանից, ինչ հավանաբար սովորել էին հինգ-տասն անգամ տեսնելով, թե ինչպես է բժիշկը մշակում վիրավորների վերքերը: Նրանք ընդամենը տաք ջրով մաքրում էին վերքերը և փոխում վիրակապերը, որը չեղածից լավ էր:

Ջաբրա Խեյոյանն ու Վանես Գոճանյանը («Ֆենդը»¹⁰¹) սպանվել էին Յուլ-Աղըզի պատմեշի մոտակայքում: Երբ մյուս պահակները, վախենալով, նահանջել էին, նրանք միայնակ, որպես անվախ հերոսներ, համառորեն դիմադրել էին թշնամուն: Ջաբրա Խեյոյանը գրեթե անմիջապես խփվել էր: Այս քաջ երիտասարդն էլ Հակոբ Կարազյոզյանի պես իր

հոգևարքի պահին դրսևորել է ազնիվ ու վեհանձն ոգի. ճիշտ նույն խոսքերն է ասել իրեն տանող ընկերներին. «Խնդրում եմ, ինձանով մի գբաղվեք, գնացեք թշնամուն դիմակայեք»:

Իր արիությանը Ֆենդը սարսափեցրել է թշնամուն, բայց, շատ չանցած, նրան պաշարել են և սպանել: Թուրք զինվորները նրա զենքը՝ «Կըրմա թեքը», վերցրել տարել են Սվեդիա, ցույց տվել մարդկանց և ասել. «Սրա տերը, մեռնելուց առաջ, սրանով սպանեց հինգ զինվորի»:

Հաջորդ առավոտյան կռիվը դարձյալ կանուխ սկսվեց՝ նախորդ օրվա սաստկությամբ: Մինչև կեսօր թշնամին շատ փոքր տարածք կարողացավ նվաճել: Բայց կեսօրից հետո, մանավանդ՝ երեկոյան կողմ, դժբախտաբար, արագ առաջացավ մեր բանակավայրի ուղղությամբ: Մեր դիրքն սկսել էր շատ փափուկ ու վտանգավոր դառնալ: Հուսահատությունը պատել էր շատերին: Նրանցից մեկը՝ «Սխտորը», բոլորովին հուսահատված, մտահոգվում էր միայն մի բանի համար՝ չթողնել, որ իր կինը թուրքերի ձեռքն ընկնի: Նա հևասպառ գալիս է իր հյուղակը, կանչում կնոջը. իբր թե նրան ասելիք ունի: Եվ երբ խեղճ ու անմեղ կինը, առանց որևէ բան կասկածելու, մոտենում է, «Սխտորն» իր ձեռքի խոշոր դանակով (փալաբըչակ) փորձում է ուժգին հարվածել նրա գլխին: Բարեբախտաբար, դանակը դիպչում է հյուղակի գերաններից մեկին, և կինը սարսափահար փախչում է ու հեռանում:

Մեկ ուրիշը՝ Գեյվալին, իր եղբորն ուղարկում է, որպեսզի իր ընտանիքի անդամներից ում գտնի, տեղում գնդակահարի, որպեսզի թշնամու ձեռքը չընկնեն:

«Աստված իմ», – բացականչում է մի խեղճ կին: – Ի՞նչ ենք անելու, եթե թշնամին գա ու հասնի մեզ: Ինչպե՞ս կարող են գոնե անհրաժեշտ իրերը շալակել ու փախչել իմ այս տկար զավակի հետ: Սոսկալի բան է, երբեք չեն հանձնվի թշնամուն: Գիտեմ, թե ինչ են անելու. այս քարավեժից¹⁰² ներքև են նետելու իմ դստերն ու ցատկելու են հետևից: «Մամա, – հեծկըլտում է հազիվ չորս տարեկան, հրեշտականման աղջիկը, – մամա, մի՛ նետիր ինձ, ես էլ մի փոքր տոպրակ կշալակեմ»:

Դասալիքների թիվն աստիճանաբար ավելանում էր, ու գրեթե անկարելի էր դառնում նրանց հոսանքը կասեցնելը: Պատերազմը գրեթե գիրկընդխառն մերձամարտի էր վերածվել: Մի թուրք սպա ընդհուպ մոտենում է ամենաքաջ հերոսներից Եսայի Յաղուբյանի պատմեշին և ատրոճանակն ուղղելով նրան, «Ալլահու աքբար» գոռում: Երբ ձգանը պետք է քաշեր, հանկարծ Յաղուբյանը տեսնում է նրան ու կայծակի արագու-

թյամբ գնդակը «մեխում» սպայի ճակատին՝ «Ատանկ չ'ըլլար, ասանկ կ'ըլլայ» պատասխանելով սպայի սպառնալի արարքին: Սպան դիտապաստ փռվում է գետին: Քաջ Եսային կեսօրվա մոտ վերադարձել էր գորանոց, քահանայի առաջ ծնրադրել, հաղորդություն ստացել ու վերադարձել ռազմադաշտ:

Մահը բոլորին էր մոտ թվում: Կափլան-Ղուզաղըից մի քանի հոգի, հուսահատված, թողնում են ամեն ինչ ու բարձրանում ավելի վերևները՝ Կուզջըղագ, որտեղ իրենց գլխին սպիտակ լաթեր են կապում և սպիտակ դրոշ վերցրած գնում հանձնվելու թուրքերին: Բարեբախտաբար, Մանուկ Կըլըջյանը պատահաբար հանդիպում է նրանց և մահվան սպառնալիքով կանխում այդ դավաճանությունն ու անպատիվ արարքը:

Երեկոյան մոտ թշնամին նորից հանկարծ գնդակների տեղատարափ սկսեց մեր զորանոցի վրա՝ բանակավայրի ծայրի ուղղությամբ: Ժողովուրդը, սարսափահար, փութաց դեպի անտառները՝ համոզված, որ թշնամին արդեն հասել է մեր դիրքերին: Իրականությունը դրանից շատ էլ հեռու չէր: Թշնամին Մազարեն հենդեյը¹⁰³ կոչվող ձորից բարձրացել, հասել էր Սինջարեն Դայր կոչվող դաշտը, որը մեր զորանոցից 15–20 րոպեի հեռավորություն ուներ: Բարեբախտաբար, հարձակումն օրվա վերջին պահին¹⁰⁴ էր: Վերջնականապես՝ կորած էինք: Ի՞նչ էինք անելու:

Այդ ամենաճակատագրական պահին ռազմագիտական ամբողջական ծրագիր չուներինք, բայց հուսահատության և հարկադրանքի անողորմ տրակը խուճապահար փախուստի դիմող զանազան խմբակների մեջ արթնացրեց ողջամտությունը և վերջապես մղեց տենդագին գործի: Նրանք, առանց իրարից լուր ունենալու, մտորում են և որոշում, որպես վերջին հնար, թիկունքից հարվածել թշնամուն: Թիկունքից և աջ ու ձախ կողմերի տարբեր կետերից բացված կրակն ամբողջապես պաշարված լինելու տպավորություն է ստեղծում թշնամու համար: Կիսամութի մեջ մեկ ժամ տևած հարձակումը կատարելապես ցիր ու ցան և սարսափահար է անում թշնամու բանակը՝ խառնաշփոթության մատնելով նրան անտառներում: Ի վերջո, անճար և հուսահատ, թանձր խավարում մա փախչում է:

Հաջորդ առավոտյան մեր երիտասարդ քաջերը ժպիտը դեմքներին խուզարկում էին ռազմադաշտը, որտեղ թշնամին թողել էր բազմաթիվ դիակներ, մի ջորի, հաց, պանիր, դեղորայք և այլն: Մի խումբ թուրք զինվորներ էլ, իրենց ճանապարհը կորցնելով, անտառում մոլորվել էին: Սրանց մեծ մասն սպանվեց. ընդամենը մի քանիսը կարողանում են ճողպրել ու ազատվել: Մեր քաջերից Պետրոս Յարամազյանը¹⁰⁵ 50 տա-

րեկան ալեհեր մի մարդ, հարձակվում է զինվորներից մեկի վրա, բռնում նրա կոկորդից և խլում նրա «Մաուզերն» ու փամփուշտները, բայց զինվորը հաջողում է փախչել: Մեր ավարը յոթ «Մաուզեր» էր և շուրջ երեք հազար փամփուշտ: Իմացանք, որ թշնամին մի թնդանոթ էլ թողել է անտառում, որը, դժբախտաբար, չկարողացանք գտնել:

Այդ օրվա կռվում ունեցանք երեք զոհ և չորս վիրավոր: Սպանվեցին Սամվել Մարգարյանը, Սամվել Բոյաջյանը և Քըրյանը, վիրավորվեցին Ավետիս Մասմանյանը, Պողոս Երվայանը, Վանես Ջելլաթյանը և Հակոբ Խեչոնյանը («Հըբլեն»): Ստույգ չգիտենք, թե որքան էր թշնամու կորուստը երկու օրում. ըստ մեր ստացած տեղեկության՝ շուրջ 190 վիրավոր և 1020 կորած: Ամեն դեպքում՝ թշնամու կորուստը 600–700–ից պակաս չէր կարող լինել:

Ը

Հայտնի դարձավ, որ թուրքական կառավարությունը մեր մասին այլ կարծիք է ունեցել: Թշնամին երեք–չորս անգամ կատարյալ վստահությամբ հարձակվեց մեզ վրա և մեծ կորուստներ տալով նահանջեց՝ առանց հաջողության հասնելու: Կառավարությունն արդեն գիտեր, որ մեր ժողովուրդը շատ քիչ պաշար ունի: Ուստի խոհեմություն համարեց մեզ սովամահ անելով վերացնել կամ մեզ ստիպել անձնատուր լինել: Այսպես՝ լուրջ հարձակումները դադարեցին, թեև ամեն օր փոքր ընդհարումներ էին տեղի ունենում Բակաջըկի կողմերում: Թշնամին պատնեշներ շինեց մեր գյուղերի սահմանների մոտ և բլուրների վրա՝ մեզ մեր վայրերում արգելափակելու համար: Սակայն ամեն գիշեր մեզանից շուրջ հարյուր այր ու կին թշնամիների միջով անցնում-գնում էին և առավոտյան վերադառնում՝ մեր պարտեզներից թուզ և խաղող, ֆելլահների արտերից էլ կորեկ բերելով: Բայց գողացված կորեկն ինչպես՝ կարող էր բավականացնել 4000-ից ավելի մարդու:

Շատերի պաշարը վերջանալուն մոտ էր: Նրանք ոչ մի տեղից արմտիք ձեռք բերելու միջոց չուներին՝ առանց իրենց կյանքը վտանգի ենթարկելու: Որպեսզի Սվեդիայում բնակվող ընտանիքները չկարողանան մեզ համար սննդեղեն հայթայթել, Անտիոքի կայմակամը մինչև իսկ մտածել էր նրանց գնումների քանակը ճշգրտել հատուկ այս նպատակով տպված կտրոնների միջոցով:

Վարչական մարմինն սկսել էր բոլորի սննդեղենը հավաքելու և ժողովրդին օրական բաժին սահմանելու ծրագրի մշակումը, բայց որոշ ավելի պարտադիր գործեր դրանով զբաղվելու ժամանակ չէին թողնում մեզ: Բարեբախտաբար, աղի դժվարություն չունեինք. մի քանի խմբեր շարունակ աղ էին արտադրում ծովափին՝ ծովի ջուրը եռացնելով:

Թ

Թաթար-Ալանգի ճակատամարտը մեզ շատ փորձառու դարձրեց: Շատ տեղերում պատնեշների պակասը զգացնել էր տվել, որի համար բավական թանկ վճարեցինք: Շատ տեղերում անտառները մեծապես օգնում էին քշնամու աննկատ առաջխաղացմանը: Այս պատճառով մի քանի օր զբաղված էինք նոր պատնեշների կառուցումով, հարկ եղած տեղերում էլ անտառները հատելու աշխատանքներով:

Փորձը մեզ սովորեցրեց նաև, որ զինվորական շրջանակներում կարգապահություն պարտադրելու և դասալքությունն արգելելու համար հարկավոր է ունենալ ավելի գործնական և ազդեցիկ միջոց: Այս նպատակով ստեղծվեց «Ոստիկանական մարմին»՝ ի դեմս Եսայի Յաղուբյանի, Պետրոս Դըմլաբյանի, Մարտիրոս Ջանսըզյանի և Պետրոս Գալուստյանի, որոնք իրենց պարտականությունները կատարում էին մյուս գործերին զուգահեռ, իսկ կռիվների ընթացքում շարունակում էին իրենց անգնահատելի ծառայությունը:

Այս ընթացքում մի ուրիշ միտք էլ հղացանք՝ Եռյակ համաձայնությամբ¹⁰⁶ և արտասահմանում բնակվող մեր ազգակիցներին լուր հասցնել Չալեպում ամերիկյան հյուպատոսի միջոցով: Երեք նամակ գրեցինք՝ մեկը՝ հյուպատոսին, երկրորդը՝ Պողոս փաշա Նուպարին, իսկ երրորդը՝ Չալեպի հայոց առաջնորդարանին: Առաջինը գրեցի ես՝ անգլերենով, առաջնորդին ուղղված նամակի հեղինակը Մ[ովսես] Տեր-Գալուստյանն էր, իսկ Պողոս փաշային հասցեագրվածի հեղինակը հավանաբար տեր Վարդան Վարդերեսյանն էր:

Հյուպատոսից խնդրում էինք, որ անհրաժեշտ տեղեկություններ հաղորդի՝ ուր որ հարկ է և շնորհ անի մյուս երկու նամակներն էլ հասցնել իրենց հասցեատերերին: Այս նամակները հյուպատոսին էր տանելու Խաչիկ Ազապյանը, որին թուրքական բանակից արձակուրդ էին տվել. արտոնագիրը նրան շնորհել էր ճանապարհորդելու դյուրություն՝

առանց մեծ վտանգի ենթարկվելու: Ազապյանը խոստացավ և ճամփա ընկավ, բայց քիչ անց վերադարձավ մի շարք չքմեղանքներով: Այնուհետև որոշեցինք նամակներն ուղարկել Սվեդիայի հույների միջոցով: Չգիտենք, նամակները տեղ հասա՞ն, թե՞ ոչ, բայց գիտենք, որ դրանք որևէ արդյունք չտվեցին:

Ժ

Չպետք է զարմանալ, որ մի շարք անհամաձայնություններ և սոցիալական տարըմբռումներ են առաջանում մեր նման անուս ու թույլ նկարագիր ունեցող ժողովրդի մեջ կյանքի այսօրինակ, բոլորովին նոր պայմաններում: Մանր գողություններն ու դրանց հետևանքով զանգատներն անպակաս էին: Սակայն հիմա՝ այս ժամանակաշրջանում, ավելի լուրջ անհամաձայնություններ և բախումներ էին առաջանում: Այլևս «մեծի» ու «փոքրի» խնդիր չկար: Հայի նկարագիրն է երևան գալիս տվյալ պահին: Ո՛չ ոք չէր հոժարում հնազանդվել ուրիշին, ո՛չ ոքի դուր չէին գալիս ուրիշների խելքն ու խորհուրդը, ամեն մարդ ինքն իրեն էր համարում ամենախելացին, ամեն մարդ մեծավոր էր ուզում լինել: Բացի սրանցից՝ մյուս կենտրոնների, մանավանդ՝ Կուզըղզազի զինվորները չէին ուզում գալ Դամաշքի գորանոց և այնտեղ հրահանգ ստանալ [պատճառաբանելով]՝ ինչո՞ւ պետք է այդքան հոգնենք: Ուրիշ ճար չկար, պետք էր համակերպվել: Ստեղծված այս պայմաններում ո՛չ մեկը, ո՛չ իսկ Վարչական մարմինն անկարող էին բառիս բուն իմաստով ամբողջությամբ գործադրել կառավարության հեղինակությունը՝ վախենալով, որ կարող են ավելի վատ բաներ տեղի ունենալ: Ստիպված էինք բավականաճալ ոմանց խրախուսելով, ոմանց՝ աղաչելով, ոմանց էլ՝ ծեծելով, ու գոհանալ արդյունքով:

Կենտրոնական վարչական մարմնի արտոնությամբ և նրա ատենապետի առաջնորդությամբ, ըստ Հ[արեթ] Իսկենդերյանի, օգոստոսի 28-ին (տե՛ս «Սուլտիոյ Ապստամբութիւնը»¹⁰⁷, էջ 28) Կուզըղզազում և Կափլան-Դուզաղում ընտրվեցին տեղական Վարչական մարմիններ և «Առաքումի տնօրեններ», որոնց ղեկավարությամբ այդ շրջանների զինվորները պատասխանատու էին մեկ-երկու ճակատների պաշտպանության համար, թեև բոլորը ենթակա էին կենտրոնական Վարչական մարմնի գերագույն հսկողությանը և հավաքվում էին Դամաշքում՝ կարևոր խնդիրների շուրջ Կենտրոնի հետ խորհրդակցելու համար:

Կափլան-Դուզաղըի Վարչական մարմնի անդամներն էին Հեթում Ֆիլյանը, Հակոբ Քեչիշյանը և Սահակ Անտեքյանը, իսկ զինվորական վերահսկիչը («Սևկիաթ ռեիսի»)՝ Հաբեթ Մ. Իսկենդերյանը:

Կուզջըղազի Վարչական մարմնի անդամներն էին Հակոբ Ադամյանը, Սիմոն Շեմմասյանը, Հովման Իսկենդերյանը և Գրիգոր Քելեմյանը, իսկ զինվորական վերահսկիչը՝ Մովսես Տեր-Գալուստյանը: Մինչ այդ Տեր-Գալուստյանն ստանձնել էր Դամլաջըղի Կենտրոնի զինվորական վերահսկիչի պաշտոնը և լավ էր կատարել իր դերը. այդ օրերին հայրը՝ տեր Աբրահամը, Կուզջըղազ էր փոխադրվել, ուստի, ընտանեկան հանգամանքների բերումով, Մովսես Տեր-Գալուստյանը պաշտոնավարում էր Կուզջաղազում:

Դամլաջըղի Կենտրոնական վարչական մարմնի անդամներն էին Գարրիել Գազանջյանը, Միքայել Կեկեջյանը, Գրիգոր Թովմասյանը, Մելքոն Գույունջյանը, Թովմաս Աղայանը, Հովհաննես Գոպուրյանը, Պողոս Գապայանն ու տողերիս հեղինակը, իսկ զինվորական վերահսկիչը՝ Տիգրան Քարաջյանը: Վերջին խուճապից հետո, Տ[իգրան] Անդրեսայանն իր ընտանիքը փոխադրել էր Կափլան-Դուզաղը և, իր կնոջ (մոտակա օրերին իր անդրանիկ զավակն էր ունենալու) ծանր վիճակը նկատի ունենալով, չէր ուզում նրան Դամլաջըղ վերադարձնել, քանի որ խուճապի կրկնվելու դեպքում նա անելանելի կացության կմատնվեր: Տիգրան Անդրեսայանը մինչև վերջին օրը Դամլաջըղի Կենտրոնական վարչական մարմնի նախագահն էր. նա ամեն օր վաղ առավոտյան գնում էր Դամլաջըղ՝ իր գործին՝ «պաշտոնավար», իսկ երեկոյան վերադառնում ընտանիք:

ԺԱ

Մի օր Մովսես Գըրըզյանը, անսպասելի վերադառնալով ծովեզերքից, իր պարզ ու միամիտ, բայց բարի սրտով մի խորհուրդ տվեց Կենտրոնական վարչական մարմնին. «Ի՞նչ օգուտ ունի օրերով ու շաբաթներով սպասել ծովեզերին՝ անկարելի կապույտ ջրերից գթություն հուսալով»: Անոթությունն արդեն սկսել էր անգթորեն սեղմել մեր կոկորդը: Ավելի ճիշտ չէ՞ր լինի մի մակույկ շինել ու թիավարելով Կիպրոս անցնել: Մովսեսը երեք-չորս կտրիճ մարդ էր ուզում իրեն ընկերանալու համար:

Մենք գիտեինք մեր դառնագույն կացությունը, նաև գիտեինք, որ մեր փրկության ամենահզոր, գրեթե միակ հույսն արտասահմանի հետ հաղորդակցության միջոց գտնելն էր:

Դրոշների և աղերսագրերի պատրաստությանը զուգահեռ, նույնիսկ դրանցից շատ ավելի վաղ, այդ ուղղությամբ աշխատանք էր տարվել՝ համոզել մի ալևի նավապետի՝ մեծ գումարներ խոստանալով, իր առագաստանավով մի քանի ընտանիք փոխադրել Կիպրոս: Բայց Դրեյբաթին (այդպես էր ֆելլաի ազգանունը) այդ ընտանիքների անդամներին բազմիցս հուսադրելուց հետո վերջնականապես խզել էր բանակցություններն այդ խնդրի շուրջ:

Այնուհետև մտածեցինք Որոնդեսի գետաբերանից՝ Իսկելեից¹⁰⁸ մի առագաստանավ գողանալ և փորձել դրանով մարդ տեղափոխել Կիպրոս: Բայց անկարելի էր այս ծրագրի իրագործումը, քանի որ կառավարությունն առագաստանավերը խիստ հսկողության տակ էր առել: Նույնիսկ ոմանք ասում էին, թե կառավարության [իրահանգով] բոլոր առագաստանավերի հատակները ծակել էին ու անհնար դարձրել դրանցով ճանապարհորդությունը:

Մի օր էլ տեսանք, որ մի առագաստանավ էր անցնում մեր ծովեզերքը գրեթե քերելով: Մի քանի երիտասարդներ հևասպառ վազեցին ծովափ՝ հուսալով, որ կկարողանան համոզել նավապետին նավը մոտեցնել ափին, ապա զենքի սպառնալիքով նրան պարտադրել իրենց Կիպրոս փոխադրել, որպեսզի այս կացության մասին հաղորդեին այնտեղ: Բայց ավա՞ղ, իրենք դեռ ծովեզերք չէին հասել, երբ նավը ծովի խորքերը քաշվեց ու հեռացավ Իսկենդերունի ուղղությամբ:

Գըրըզյանն առաջարկեց մի նոր փորձ անել նույն նպատակով: Նրա առաջարկության հաջողությունն անիրական էր, այդուհանդերձ, երկար խորհրդակցություններից և կողմ ու դեմ կարծիքներ փոխանակելուց հետո որոշում կայացրինք: Անհավանական էր, որ այդ կերպ կարելի լիներ հասնել Կիպրոս, բայց հնարավոր էր, որ մեր մակույկը ծովի խորքերում հանդիպեր բարյացակամ [պետության] ռազմանավի կամ շոգենավի:

Եթե հաջողեինք, հավանաբար կփրկվեինք, եթե ոչ՝ արդեն իսկ կորած էինք: Երեք-չորս ատաղձագործներ մի քանի օր քրտնաջան աշխատեցին հույսի այդ վերջին նավակը շինելու համար: Նոյի տապանի կրկնօրինակն էինք պատրաստում՝ նոր ձևով: Մակույկն իր հետ տանելու էր կարմիր խաչով մի ուրիշ դրոշ ու մեր աղերսագրի մի օրինակ, որը հանձնելու էին առաջին հանդիպած ռազմանավին, նաև ուրիշ վեց աղերսագրեր՝ ուղղված Կիպրոսի նահանգապետին, զինվորական գլխավոր հրամանատարին, Ն[որին] վ[սեմություն] Անգլիայի թագավորին, Ն[որին] վսեմ[ություն] Անգլիայի արտաքին գործերի նախարարին, ծանոթ հայասեր պրոֆեսոր Ռեն-

դել Յարիսին¹⁰⁹ ու Ն[որին] վսեմ[ութուն] Պողոս փաշա Նուպարին: Աղեր-
սագրերը պատրաստվել էին արդեն՝ առաջին հինգը՝ անգլերենով՝ տողե-
րիս հեղինակի, իսկ վեցերորդը՝ տեր Վարդան Վարդերեսյանի ձեռքով:
Դժբախտաբար թե բարեբախտաբար որևէ մեկը չընկերակցեց Գըրըզյա-
մին, երբ մակույկը կազմ ու պատրաստ էր մեկնելու:

ԺԲ

Օգոստոսի վերջին մի օր՝ երեկոյան մոտ, հույժ աղեխարշ տեսարան
էր բացվել լեռան [գագաթից]: Մառախուղի միջից հանկարծ ռազմանավ
էր երևացել, որը սակայն, դժբախտաբար, մեր տեսնելուց առաջ արդեն
չրջել էր իր ուղղությունը: Այդ թույլին հույսն ու հուսահատությունը
խառնվեցին իրար: Բլուրների վրա անմիջապես բազմաթիվ դրոշներ
պարզվեցին, խարույկներ վառվեցին, բարձրաձայն աղաղակեցին, բայց
իզո՛ւր. մավը, խուլ ու անտարբեր, շարունակեց իր համր ընթացքը դե-
պի Իսկենդերուն՝ հետևում թողնելով 4000-ից ավելի հուսախաբ սրտեր,
որոնք ակնապիշ հետևում էին նրա ընթացքին՝ տխու՛ր ու դառնագին:

Հուսահատությունը, սակայն, չէր կարող մեզ փրկել: Մեկ օր առաջ
հատուկ մարդ էինք ուղարկել մեզանից 5-6 ժամ հեռու մի բլրի գագա-
թից դիտելու, թե Իսկենդերունի [տարածքում] ռազմանավ չկա՞ր արդ-
յոք: Հիմա տարակույս չունեինք: Իսկույն երկու ընկերոջ առաջնորդու-
թյամբ Իսկենդերունի ուղղությամբ երկու լողորդ ուղարկեցինք՝ թիթեղ-
յա տուփերի մեջ երկու աղբրսագիր [տալով նրանց]:

ԺԳ

Մի քանի օր էր, որ Իսկենդերուն մեկնողները բաժանվել էին մեզանից:
Կիրակի օր էր՝ սեպտեմբերի 5-ը: Եղանակը բացառիկ պարզ էր ու գեղե-
ցիկ, թեև [մեր] սրտերը նույն տխուր սրտերն էին՝ մահվան չարաշուք
մղձավանջից ընկճված: Կեսօրին մոտ հանկարծ ցնծության բարձր աղա-
ղակներն սկսեցին թնդացնել օդը. «Վափառ՜ու իզեյր, վափառ՜ր իզեյր»
(«Շոգեմավը եկե՛լ է, շոգեմավը եկե՛լ է»): Ո՞վ կարող էր բացատրել ուրա-
խությունը այդ ողջ-մահացածների, որոնք նոր էին աշխարհ գալիս: Մի՞-
թե Կոլումբոսն ու նրա նավաստիներն ավելի էին ուրախացել, երբ «եր-



Սուսա լեռ: Հայերի տեղահանության տեսարանով այս բացառիկ լուսանկարը
տպագրվել է "He Sphere" թերթում (30.10.1915): Ֆրանսիացի նավաստիները
տարհանում են մուսալեռցիներին:

Լուսանկարը Հայաստանի ազգային արխիվի հավաքածուից

կի՛ր, երկի՛ր» էին գոչում ամերիկյան ցամաքը տեսնելուն պես:

Իսկապես, շոգեմավը եկել էր ու կանգնել մեր ափի մոտ՝ այդ պահին
գրկելով մեր բոլորի հույսերը, մեր բոլորի սրտերը: Մեկ ժամ հեռավորու-
թյունից՝ Շեյխ Խըղըրի դիմացից, նավից տեսել էին մեր դրոշները և մո-
տեցել՝ հասկանալու համար, թե ի՞նչ էր դա նշանակում: Մեր ազատարա-
րը՝ փոխծովակալ¹¹⁰ Դարտիժ դյու Ֆուրնեն¹¹¹, իր «Պատերազմի հիշա-
տակները» գրքում այսպես է բացատրում եղելությունը. "Dans les pre-
miers jours de septembre, le croiseur Guichen, commandé par le capitaine
de frigate Brisson, longeait la côte au nord d'Antioche, quand il aperçut
des signaux à terre" («Սեպտեմբերի առաջին օրերին, երբ «Գիշեն» ռազ-
մանավը կապիտան Բրիսոնի հրամանատարությամբ ընթանում էր Ան-
տիոքի հյուսիսային կողմով, ցամաքում նշաններ տեսավ»): Մեր պահակ-
ներն անմիջապես սկսել էին դրոշները ծածանել: Քիչ անց ռազմանավը

մակույկ էր իջեցրել ու վերցրել պահակներին, որոնք էլ հանձնել էին մեր աղերսագիրը, իսկ հաջեր Դումանյանը, որ գիտեր ֆրանսերեն, բերանա-
ցի բացատրել էր մեր կացությունը: Տեղի ունեցածի մասին ֆրանսիա-
կան ռազմաճակատի «Գիշենից», արագորեն հեռագրում են ուր որ հարկն
է և խոստանում ութ օրվա ընթացքում տեղեկացնել, թե ինչպես են կարո-
ղանալու օգնել մեզ:

ԺԴ

Պետրոս Դըմլաքյանը, որը նույնպես գիտեր ֆրանսերեն, շուտով հա-
սել էր ծովեզերք և հաջողացրել բարձրանալ ռազմաճակատ: «Գիշենի»
անձնակազմը Դըմլաքյանից իմանում է, որ թուրքերը Քեբուսիեի եկեղե-
ցին վերածել են զինանոցի, գյուղն էլ լցրել թուրք զաղթականներով:
Մեզ մոտ հասնելուց գրեթե երկու ժամ անց ռազմաճակատը մոտեցավ ռմ-
բակոճելու Քեբուսիեն: Հարվածներից եկեղեցին պայթեց, զինամթերքը
ոչնչացվեց: Սարսափահար զաղթականները շփոթվել էին՝ չիմանալով
ուր փախչել, քանի որ ռումբերն ամենուր մահ էին սպռում:

Ռմբակոծությունից հետո, երբ «Գիշենը» կրկին մոտեցավ մեզ ու մա-
կույկներ էր ուղարկում ծովափ, հանկարծ «Մաուզերի» գնդակներ սկսեցին
տեղալ մակույկների ուղղությամբ: Թուրք զինվորները, որ, հավանաբար
Չանակլըքից տեսել էին ռազմաճակատը, մոտեցել էին և անտառից հրացա-
նածգություն սկսել: Թնդանոթները միանգամից ռումբերի տարափ տեղա-
ցին այն բլուրների վրա, որտեղ, ենթադրվում էր, թաքնված էր թշնամին:

Մակույկները հասան ծովեզերք, մոտ տասը զինվորի հասցրին ափ և
մի քանի թույլ անց վերադարձան:

Խալիզը, երբ լսում է թնդանոթների որոտը, խրախուսում է Քեբուսիեից
փախչող թուրք զաղթականներին՝ ասելով. «Մի՛ վախեցեք, զավակներս,
գերմանական ռազմաճակատ է, ձեզ սխալմամբ ռմբակոծեց: Չե՞ք տեսնում՝
լեռան վրայի գյավուրներին էլ է ռմբակոծում»:

Թշնամին այլևս հուսախաբ էր եղել. նա հասկացել էր, որ անօգուտ է
մեզ պաշարելը, քանի որ օտարների հետ հաղորդակցության մեջ էինք,
մանավանդ հավանական էր, որ ֆրանսիացիները հայերի առաջնորդու-
թյամբ հարձակվեին [բարձունքներից ու ստորոտից]: Ուստի չէր կարելի
ժամանակ կորցնել, հարկավոր էր անմիջապես խեղդել հայերի ապըս-
տամբությունը:

Հավանաբար այսպիսի որոշմամբ ձեռնարկեցին սեպտեմբերի 7-ի հար-
ձակումը, որը, բարեբախտաբար, ամբողջովին ձախողվեց: Արևածագից
քիչ անց թշնամին հարձակվեց Շեյխ Յորդըի կողմից ու կրակ տեղաց մինչև
երեկո, հետո լեռան հեռավոր ստորոտից սկսեց խույս տալ՝ ով գիտե՝ որ-
քան կորուստներից հետո: Մեզանից ոչ մեկի քիթը չէր արյունոտվել:

Մինչ լեռան վրա կռիվ էր մղվում, Վարչական մարմինը, ընդամառե-
լով նախորդ երեկո ստացված հրավերին, զնացել էր ռազմաճակատ՝ տե-
սակցելու փոխծովակալ Դարտիժ դյու Ֆուրնեի հետ, որի ղեկավարած
ռազմաճակատից մեզ օգնում էին: Նա այժմ «ժանն դ'Արկ» հաժանավում
էր և մոտենում էր մեր ափերին՝ տեսակցելու համար մեզ հետ, վերահա-
սու լինելու մեր կողմերում տիրող իրադրությանը: Ազնվական փոխծո-
վակալը [մեկ առ մեկ] սեղմեց մեզանից յուրաքանչյուրի ձեռքը, հարցու-
փորձ արեց, քաջալերեց մեզ և հրաժեշտ տվեց:

Վերադարձին տեսանք, որ մերոնք ծովեզրի մոտ սպանել էին մի
թուրք զինվորի, իսկ նրա «Մաուզերն» ու փամփուշտները: Դա մեր
ձեռքն անցած ութերորդ «Մաուզերն» էր:

ԺԵ

Սեպտեմբերի 9-ի առավոտյան երկու ալևի ֆելլահ տղաներ սպի-
տակ դրոշով երեք տարբեր գրություններ են բերում ու հանձնում Շեյխ
Յորդըի պատնեշի մեր պահակներին: Ստորև ներկայացնում ենք դրանց
բովանդակությունը:

ԲԺԻՇԿ ԲԵՆԻԱՄԻՆԻ ՆԱՄԱԿԸ

Տեր Աբրահամ քահանա Տեր-Գալուստյան վե Տեր Վարդան
քահանա Վարդերեսյան

Չոք սելամդան սոնրա, սիզի խաբերդար էդերիմ քի՝ Համայա գիդեն մու-
հաջիրլերդեն սելամեթ վե րահաթ խաբերի գելդի: Նի՞չյուն բեռլե մեմուլին
դայրը օլարաք հարեքեթ էդիյորսընը: Հյուրյունեթ-ի օսմանիյե աֆվեյանի
դըր, մուհաջերեթ սոնունդա աֆվ իհթիմալի վար: Շու մուդայակա գյունլերի
գեչդիդըն սոնրա յիմե իսթեդիյիմիզ մահալե հիջրեթ էդեբիլիսիմիզ: Շու
մուամելենիզ ջյունլենիզին մահվընա սեբեթ օլաջաղը բեդիհի դըր:

Կոմանդան բեյին սիզե մեքթուրընդա յազղըղը գիբի մուհակկակ իքի բի-

նի մութաջավըզ, ասլա խաբեր անլամազ վե չոլուք-չոջուք էսիրգեմեզ արաբան՝ սիզի Չաջի-Չաբիբլի վե Յողուն-Օլուք քարաֆընդան իհադե էթմիշ՝ վե իքի թաբուրդա ասքեր բիրլիքդե դըրլար: Չեմեն աջելե թեսլիմ օլմադըղընըզ թաքդիրդե՝ մահվ օլաջակսընըզ: Էմին օլդում, չունքի արաբանը գեոզում իլե գեորդում: Շերեֆիմ իլե սիզե յեմին էդերիմ քի՝ բու յազըշըմ հակիկաթ դըր, բիրադերլեր: Բաքի դիրայեթ վե վիջդանընըզա հեվալե էդերիմ:

Բենիամին (հեքիմ)
27 աղուսթոս սեմե 1331

Թարգմանությունը

Տեր Աբրահամ քահանա Տեր-Վալուստյան և տեր Վարդան քահանա Վարդերեսյան

Բարևներից հետո ձեզ տեղեկացնում եմ, որ Չամա մեկնած գաղթականներից լուրեր ստացանք նրանց բարեհաջող տեղ հասնելու մասին: Ինչո՞ւ եք այսպես՝ ակնկալվածից հակառակ կերպով¹¹³ շարժվում: Օսմանյան կառավարությունը ներողամիտ է, գաղթից հետո նա հավանաբար ձեզ կների: Այս անձկության օրերից հետո կարող եք գաղթել ձեր ուզած տեղը: Չստակ է, սակայն, որ ձեր այս գործողությունը ձեր բոլորի ղնչացման պատճառ է դառնալու:

Ինչպես հրամանատար բեյը գրել է ձեզ, Չաջի Չաբիբլիի և Յողուն-Օլուքի կողմից ձեզ շրջապատել են բնավ խոսք չհասկացող և փոքրերին չխնայող ավելի քան երկու հազար արաբներ՝ երկու վաշտ զինվորի ուղեկցությամբ: Եթե շուտով չհանձնվեք, բնաջնջվելու եք: Դրանում վստահ եմ, քանի որ արաբներին իմ աչքերով տեսա: Իմ պատվով եմ երդվում ձեզ՝ ինչ գրել եմ՝ ճշմարիտ է, եղբայրներ: Մնացածը թողնում եմ ձեր իմաստությանն ու խղճին:

Բենիամին (հեքիմ)
27 օգոստոսի 1331¹¹⁴

ՉԱԶԱՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ

Բիթիաս, Չաջի Չաբիբլի, Յողուն-Օլուք, Խըղըրբեկ, Վակըֆ հեյեթ-ի իխթյարիյելերիցն

Մադդե 1. Աջիզ վե աջիզե, էրքեք, կադըն վե մասուն չոջուքկարըն կանլարընա գիրմեմենիզի իխթար իլե բունլարըն թեսլիմ էդիմեներինի քավսիյե էդերիմ:

Մադդե 2. Թեսլիմ-ի նեֆս էդեջեք օլանլար էլլերինդե բեյազ բայրակլարը օլըղըը հալդե, ասքերին բուլունդըղը մահալե գելեջեք դըր:

Մադդե 3. Էրքեք վե գեմջերդեմ արզու էդեմլեր սիլահլարը իլե մաեմ թեսլիմ-ի նեֆս էդեբիլիլեր:

Մադդե 4. Թեսլիմ-ի նեֆս էդեմլերն հիչ բիր ջիհեթլե զարար իքա էդիմեյեջեք դըր:

Մադդե 5. Աքսի թաքդիրդե դեոքյուլեջեք կանըն մեսուլը սիզ սինիզ: Մադդի վե մանևի մեսուլիյեթ սիզե սիդ դըր:

133-ջի ալայ կոմանդանը
Բինբաշը Ռեֆաթ
25 աղուսթոս 1331

Թարգմանությունը

Բիթիասի, Չաջի Չաբիբլիի, Յողուն-Օլուքի, Խըղըրբեկի, Վակըֆի մուխթարական ժողովներին

Չողված 1. Խորհուրդ եմ տալիս ծերերի, պառավների, տղամարդկանց, կանանց ու երեխաների արյան պատճառ չդառնալ և հանձնել նրանց:

Չողված 2. Անձնատուր լինել ցանկացողները պետք է սպիտակ դրոշմերով գան զինվորների բանակատեղի:

Չողված 3. Տղամարդիկ և երիտասարդները, ցանկության դեպքում, կարող են իրենց գեմքերով անձնատուր լինել:

Չողված 4. Անձնատուր եղողներին որևէ վնաս չի հասցվելու:

Չողված 5. Չակառակ պարագայում դուք պատասխանատու եք թափվելիք արյան համար: Նյութական և բարոյական պատասխանատվությունը դուք եք կրելու:

131-րդ գնդի հրամանատար
Չազարապետ Ռեֆաթ
25 օգոստոսի 1331

Արան կցվել էր բժիշկ Բենիամինի հետևյալ ծանոթագրությունը:
Իքի սաաթդան բիր մա'լյունաթ վերմեդիյինիզ թակդիրդե, չոջուկլա-
րընըզըն վե կադընլարընըզըն վեբալը խաբեր անգլայան բեոյյուքլերին
բոյնունա օլսուն: Իքի սա'աթ մյուհլեթ վար, աջելե թեսլիմ օլունուզ վե
կուրթուլընըզ, դոսթլարըմ:

Իշբու մեքթուրը շու տակիկեդե Տեր Աբրահամա յա Տեր Վարդանա
յախոդ բիր ալըլը ադամա վերեսինիզ: Ամա'ն, րեջա էդերիմ, իհմալ էթ-
մեյինիզ:

Բենիամին (հեքիմ)

27 աղուսթոս 1331

Թարգմանությունը

Եթե մինչև երկու ժամ տեղեկություն չհաղորդեք, ձեր երեխաների ու
կանանց արյունը գիտակից մեծերի վզին կլինի: Երկու ժամ մտածելու
ժամանակ ունեք, շուտ անձնատուր եղեք և փրկվեք, բարեկամներս:

Այս նամակը հենց հիմա տվեք կամ տեր Աբրահամին, կամ տեր Վար-
դանին, կամ էլ մի խելացի մարդու: Ա'հ, աղաչում եմ, զանցառու մի
եղեք:

Բենիամին (հեքիմ)

27 օգոստոսի 1331

Երրորդ նամակը, որ հազարապետը հասցեագրել էր տեր Աբրահամ
քահանա Տեր-Գալուստյանին, կրկնում էր սովորական սպառնալիքնե-
րը՝ ավելացնելով, որ ոչ մի տեղից, ոչ իսկ ծովից¹¹⁵ չենք կարող օգնու-
թյուն հուսալ, և ուզում էր ստահող խոստումներով մեզ խաբել:

Երեք վարչական մարմինները Դամլաջըկում երկար խորհրդակցե-
ցին այս նամակների շուրջ: Մովսես Տեր-Գալուստյանն առաջարկեց եր-
բեք չպատասխանել դրանց: Հովհաննես Գոպուրյանն առաջարկեց պա-
տասխանել՝ ասելով. «Մենք ապստամբ չենք, այլ օսմանյան կառավա-
րության հավատարիմ հպատակները, ինչպես եղել ենք միշտ: Մենք
այստեղ ենք քաշվել ոչ թե ինչ-որ մեկի վնաս պատճառելու, այլ պատ-
վավոր և խաղաղ կյանքով ապրելու համար»: Ես հախուռն կերպով
առարկեցի Գոպուրյանի առաջարկին՝ բացատրելով, որ արդեն գի-
տենք, թե որչափ նենգամիտ է թուրքը: Եթե նա մեզանից այսպիսի թույլ
պատասխան ստանա, քաջալերվելու է կրկին գրելու՝ այս անգամ որոշ
խոստումներ անելով և ստեր հերյուրելով ժողովրդին խաբելու համար:

Մեր մեջ արդեն քիչ չեն երկմիտ ու վախկոտ տարրերը, որոնք ճգնաժա-
մային որևէ պահի կարող են դյուրությամբ խաբվել և որոշել անձնա-
տուր լինել: Այդ դեպքում մենք իրար ենք հակառակվելու, և հետևանքը
լինելու է կործանումը: Ուստի, ենթադրում եմ, պետք է պատասխանել
այնպիսի բանաձևով, որը ծառայի մեզ միայն ժամանակ շահելու հա-
մար, մինչև ռազմանավը, որ արդեն մեկնել էր, վերադառնա, և խորհըր-
դակցենք մեր բարեկամների հետ:

Ուստի որոշվեց պատասխանել, որ այսպիսի կենսական խնդրի
[շուրջ] ժողովրդի հետ խորհրդակցելու և նրա կամքը հարցնելու համար
հարկավոր է ավելի երկար ժամանակ, և հազիվ թե 24 ժամ անց կարո-
ղանանք պատասխանել: Սակայն թշնամին, առանց սպասելու մեր պա-
տասխանին, սկսեց հարձակումը:

Ճակատամարտը շարունակվեց մինչև երեկո: Առաջին իսկ քայլերից
թշնամին շատ արագ թափով գործեց, սակայն շուտով մեր քաջերի մա-
հացու զնդակները ստիպեցին նրան կանգ առնել: Այդ ճակատամարտը
շատ թանկ նստեց թշնամու վրա. նա խառնաշփոթ փախչում էր: Բազմա-
թիվ տկլոր արաբներ, որոնց մի մասը եկել էր Համայից և ավելի հեռու-
ներից, կոտորվեցին: Կանոնավոր բանակի [բազմաթիվ] զինվորներ
նույնպես առատորեն վճարեցին իրենց արյան տուրքը: Փայլուն սխրա-
գործություններ կատարեցին Մարտիրոս Ջանսըզյանը, որ իր դիրքից
հինգ թուրք էր սպանել, Մարտիրոս Հաբեշյանը, որ թշնամուց մի քանի-
սին սպանել էր միանգամից՝ առանց իր տեղից շարժվելու:

Այդ օրը մեզանից սպանվեցին Հաբեթ Վանայանն ու Պետրոս Հա-
վաթյանը, վիրավորվեց Հովհաննես Լուրջյանը:

Երեկոյան մոտ ռազմանավից եկած մի գրությամբ (հեղինակը Պետ-
րոս Դըմլաքյանն էր, որ այլևս մնում էր ռազմանավում) շնորհավորում
էին մեզ՝ հայտնելով՝ այդ օրը պատերազմեցին [հայերը], իսկ հաջորդ
օրն իրենք են կռվելու:

ԺԶ

Սեպտեմբերի 10-ին ժամը 9-ին (ը. ե. ¹¹⁶) մոտ ֆրանսիական ռազմանա-
վերից երկուսը՝ «Գիշենը» և «Դեսեքսը», միաժամանակ սկսեցին
ռմբակոծությունը. մեկը ռմբակոծում էր Սվեդիայի թուրքական զորանոցը
և այլ կետեր, իսկ մյուսը՝ Քեբուսին (որտեղ վերադարձել էին թուրք գաղ-

թականները) և Կաբակլըն՝ թուրքական մի գյուղ, որը թշնամու ռազմական կենտրոնատեղի էր դարձել պատերազմի ընթացքում: Շուտով մոխրի վերածվեցին Սվեդիայի զորանոցն ու ռմբակոծված մյուս բոլոր կետերը:

Կաբակլըի ռմբակոծությունն ավելի ուշագրավ էր. մեր պահակները շատ մոտիկից կարողացել էին դիտել այնտեղ հավաքված զինվորների և խուժանի անթիվ բազմությունը: Մի խումբ ծիավորներ ռազմանավը տեսնելուն պես անմիջապես փախչում են, բայց քիչ անց, երբ նկատում են, որ նավն անցել է բլուրների հետևը, վերադառնում են: Սակայն ռազմանավը հանկարծ կրկին հայտնվում է ու սկսում ռմբակոծել: Խելացնոր բազմությունը չգիտեր ուր փախչել. ռումբերը նրանց գտնում էին բոլոր կողմերից՝ առջևից, հետևից, մեջտեղից, բոլոր կողմերից: Մեր տղաները, որ նախապես հրահանգներ էին ստացել ռազմանավից, ուղղորդում էին ռմբակոծությունը՝ դրոշներով ճշտելով թշնամու դիրքը՝ բլուրների հետևում: Կարծում ենք, որ ռմբակոծությունը բազմաթիվ կորուստներ պատճառեց թշնամուն: Մեր քաջերն էլ, թշնամու խառնաշփոթ վիճակից սրտապնդված, նրանց հետապնդեցին և քեցցին շատ հեռու:

ժԷ

Երեկոյան կողմ «Գիշենի» [իրամանատարությունը], ինչպես խոստացել էր, հաղորդեց Ֆրանսիայի կառավարության վերջնական պատաս-



ՆԱԿԱՄՈՒՏԶԷ: ԱՋԻՏ՝ ԾՈՎԱՅԻՆ ՄՊԱ ՏԻՐԱՆ ԹԵՔԵՅԱԼ



ՍՎԵԴԻՎԱՅԵՐԻ ԱՋԱՏԱՐԱՐԸ՝ ԾՈՎԱԿԱԼ
ԴԱՐՏԻԺ ԴՅՈՒ ՖՈՒՐՆԵ



ՆԱԴԱՏԱԿՆԵՐԻ ԱՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

խանը: Մերժել էին զորք հանել ցամաք կամ պարեն ու զինամթերք տալ, բայց ազնվաբար հայտնում էին մեզ Պոր-Սաիդ տեղափոխելու իրենց բարեհոժարությունը:

Ողջ ժողովուրդը երկու օրվա ընթացքում անպատմելի ուրախության մեջ էր. ծովեզերք էր իջել իր կարասիներով, անասուններով ու զրաստներով, որոնք, սակայն, նավերում տեղ չլինելու պատճառով ստիպված եղան ոչնչացնել ու սպանել:

Մեզ տեղափոխեցին «Գիշեն», «Դեսեքս», «Դեսթրե», «Ամիրալ Շարեն» և «Ֆուդր» ֆրանսիական ռազմանավեր¹¹⁷: Մի քանի մղոն զնալուց հետո «Ֆուդրն» իր ուղևորներին փոխանցեց անգլիական «Ռեյվլըն» ինքնաթիռատար փոխադրանավին ու հեռացավ:

Ի՞նչ սրտաշարժ ու անմոռանալի էր այն պահը, երբ ծերերն ու մանուկները, այրերն ու կանայք, տղամարդիկ ու կովոզները վերջին հրաժեշտն էին տալիս իրենց տներին ու պարտեզներին, անտառներին ու լեռներին և այն սիրելիներին, որոնք դատապարտված էին թուրքական բանակի մեջ մեռնելու: Ի՞նչ սքանչելի տեսարան էր. փրկարար նավակներ էին մոտենում և նրանց նավ տեղափոխում: Ասպետական էր այն օգնությունը, որ ֆրանսիացի ազնիվ նավաստիներն ընծայում էին տկար ու դողդողացող ծեր մամիկներին և անմեղ երեխաներին: Հատկապես

հիշատակության արժանի է ֆրանսիական բանակի ծովային սպա պարոն Տիրան Թեբեյանի¹¹⁸՝ մեզ մատուցած անձնվեր ծառայությունը:

Մասնավոր շնորհակալություն ենք հայտնում կապիտան Բրիսոնին, որը դարձավ մեր փրկության երկնառաք հրեշտակը:

Երբեք չենք մոռանա ասպետական Ֆրանսիայի անգին բարերարությունը. Աստուծու շնորհով նրան ենք պարտական մեր կյանքի ու պատվի համար: Իսկ փոխծովակալ Դարտիժ դյու Ֆուրնեի անունն ընդմիշտ ոսկե տառերով արձանագրվելու է մեր սրտերում: Իսկապես մեր երախտագիտության ամենամեծ բաժինը նրան ենք հայտնում: Փոխծովակալը մեզ այցելեց սեպտեմբերի 8-ին և ապա ուղղակի մեկնեց Ֆամագուստա՝ Կիպրոս: Այնտեղից նա դիմում է թե՛ Կիպրոսի և թե՛ Եգիպտոսի բարձր[աստիճան] կոմիսարներին¹¹⁹ ու հարցնում, թե կարո՞ղ են նրանք մեզ ընդունել իրենց երկրներում: Առաջինը պատասխանում է. «No accommodation for them» («Նրանց համար տեղ չունենք»): Իսկ երկրորդն ասում է, որ այդ մասին հարցում են արել Լոնդոն: Փոխծովակալի՝ Փարիզ ուղարկած առաջին հեռագիրը սխալմունքի պատճառով տեղ է հասնում հազիվ սեպտեմբերի 15-ին, իսկ սեպտեմբերի 10-ին ուղարկած երկրորդ հեռագրի պատասխանն ստանում են ամսի 14-ին. ծովային նախարարությունը հարցնում էր. «Ou est la Mont Moïse?» («Որտե՞ղ է Մուսա լեռը»):

Բայց փոխծովակալը, մեզ ամեն ժամ սպառնացող վտանգը նկատի ունենալով, դեռևս վերևից արտոնություն չստացած և մեզ համար որևէ ապաստարան չապահոված, իր անձնական պատասխանատվությամբ հրաման է տալիս մեզ տեղավորել ռազմանավերում: Այս ընթացքում նա գործի բերումով փոխադրվում է Դարդանել¹²⁰, և նրա արժանավոր հաջորդի՝ կոնտր-ադմիրալ Դառիյեռյի, և Եգիպտոսում Ֆրանսիայի դեսպան պարոն Դեֆրանսի ջանքերով ու բանակցությամբ մեզ ընդունում են Եգիպտոսի ասպնջական ափերին (տես «Souvenirs de guerre d'un admiral» par Vice-Admiral Dartige du Fournet և «Pavillon Haut»¹²¹ par Chack¹²² գրքերի համապատասխան գլուխները):

Այս ամենից ավելի գոհաբանություն ենք հայտնում մեր երկնային Հորը, որ օրհնեց մեր ջանքերը, բարեկամներ ուղարկեց և մեզ ազատեց սոսկալի ճակատագրից՝ պատասխանելով հավատացյալների սրտաբուխ աղոթքներին:

Սեպտեմբերի 13-ին ու հաջորդող մի քանի օրերին նավերից աստիճանաբար փոխադրվեցինք Պոր-Սաիդի Լազարեթ կոչվող բուժմենկուսարանի տարածք, որը մի քանի տարի անվանվելու էր «Հայ Ապաստանեալներու Քեմքը, ի Բոր-Սաիտ»: Անգլիայի բարեսիրտ կառավարությունը կանխավ պատրաստվել էր ընդունելու փրկվածներին. նրանց տեղավորեց վրաններում, կերակրեց ու հոգաց բոլորի առողջապահական հարցերը: Եգիպտոսի հյուրընկալ կառավարությունը ևս չզլացավ իր մարդասիրությունն ու գթությունը:

Առաջին իսկ օրվանից եգիպտահայ գաղութը նույնպես, գիտակցելով իր ազգասիրական պարտականությունը, իր առաջնորդարանով ու Կարմիր խաչով, Բարեգործականով¹²³ ու այլևայլ ընկերություններով ջերմ գուրգուրանքով պատեց նրանց, հանդերձավորեց և պատսպարեց: Չի կարելի մոռանալ նաև Ամերիկյան Կարմիր խաչի և Հայաստանի բարեկամների¹²⁴ նվիրատվություններն ու զանազան օժանդակությունները, մանավանդ օտար այլ մարդասերների՝ հազարապետ Փիրտոնի¹²⁵, Հորնբլաուրի¹²⁶, Տրոբրիջի¹²⁷, գնդապետ Էլբուդի և մանավանդ նրա ազնիվ կնոջ՝ Միսիս Էլբուդի¹²⁸ անունները. վերջինս առաջին օրից դարձավ բոլոր գաղթականների պահապան հրեշտակը:

ՎԵՐՁ

1 Սվեդիա – Ավան նավահանգիստ Ադանայի նահանգի Ալեքսանդրետի սանջակում: Մուսա լեռան (Անտիոքի գավառ) գավառակ-գյուղախմբի և գավառակի կենտրոնի՝ ավանի պաշտոնական անվանումը: Գավառակը հայտնի էր նաև թուրքական և արաբական անվանումներով՝ համապատասխանաբար՝ Մուսա դաղ և Ջեբել Մուսա:

2 Ցավոք, այդ ապառոջ երևույթը շարունակվում է մինչ օրս: Հրատարակվում են պատվիրված գրքեր, որտեղ Մուսա լեռան հերոսամարտին մասնակցած անձինք ներկայանում են կամ նրանց ներկայացնում են իրենց դերերի գերարժևորումներով՝ ընդհուպ վերագրելով ինքնապաշտպանության միակ կազմակերպչի ու զինվորական հրամանատարի անգո արժանիքներ...

2* Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը առաջին անգամ լույս է տեսել 1933 թ. (Բեռլին-Վիեննա-Լայպցիգ): 1935 թ. արդեն հրատարակվել էին երկի անգլերեն և ֆրանսերեն թարգմանությունները՝ համապատասխանաբար՝ Նյու Յորքում և Փարիզում:

3 Վեր. Հ. Խանդամուր – Վերապատվելի Հայկազուն Խանդամուր(յան) (1874, Կյուրին, Սեբաստիայի նահանգ – 11.08.1943, Կահիրե):

4 Ակիլինե – Վեր. Հայկազուն Խանդամուրյանի գրական կեղծանունն է, որով նա 19-րդ դարի վերջից հանդես է եկել Կոստանդնուպոլսի, Ջնյունիայի, Երուսաղեմի, Կահիրեի և Նյու Յորքի հայկական պարբերական մամուլում:

5 Բոշնակ – Սերբերենի «բոսնիակ»՝ «բոսնիացի» բառի թուրքերենում աղավաղված տարբերակն է: Այսպես էին անվանում Բալկաններից գաղթած և Օսմանյան պետության տարածքում վերաբնակված սլավոնական ծագումով մուսուլմաններին:

6 Սպարտական – Հին Հունաստանի Սպարտա քաղաքի անունից: Փոխաբերաբար նշանակում է խիզախ, քաջ, անհավասար կռվի պատրաստ մարտիկ:

7 Լոնգֆելլո – Յենրի Վոդսուորթի Լոնգֆելլո (Henry Wadsworth Longfellow, 27.02.1807, Փորթլենդ, Մեսեչուսեթսի նահանգ, այժմ՝ Մեյնի նահանգ, ԱՄՆ – 24.03.1882, Քեմբրիջ, Մեսեչուսեթսի նահանգ, ԱՄՆ) – ամերիկացի մանկավարժ և քնարերգու բանաստեղծ:

8 Գրանվիրե – բնակավայր այժմյան Կանադայի Նովա Սքոշիա նահանգում: Բնիկներին բռնությամբ տեղահանել են մեծ բրիտանացի վերաբնակիչները: Այս թեմայով Յենրի Լոնգֆելլոյի գրած «Էվանջելին» պոեմը 19-րդ դարի համաշխարհային գրականության գոհարներից է:

9 Յոբ – Յոբ երանելի, Յին Կտակարանի կերպարներից: Ի հեճուկս իր ընտանիքին և իրեն պատուհասած բազմաթիվ փորձանքների՝ Յոբը համբերությամբ տանում է դրանք՝ միշտ ապավինելով Աստծու ողորմածությանը:

10 Վեսիքա (արաբերեն, օսմաներեն) – Փաստաթուղթ:

11 Էշկիա (արաբերեն «շակի» բառի հոգնակին) – Փախստական, զինյալ հանցավոր խմբավորման անդամ:

12 Մութասարիֆ (արաբերեն, օսմաներեն) – Վարչական հատուկ կարգավիճակ ունեցող գավառի կառավարիչ:

13 Փաշա (օսմաներեն) – Տիրոջ Օսմանյան պետությունում, շնորհվում էր նահանգապետներին, մութասարիֆության կարգավիճակ ունեցող գավառների կառավարիչներին և բանակի, ոստիկանության ու ժանդարների այլ զենեքալներին, ինչպես նաև այլ անձանց՝ սուլթանի հրամանով:

14 Աղա (պարսկերեն, օսմաներեն) – Պատվանուն Օսմանյան պետությունում, որը հասարակությունը տալիս էր երևելի մարդկանց:

15 Ենիդունյանները Ջեյթունի իշխանական չորս տոհմերից ամենանշանավորն էին: Հայտնի էին նաև ազգանվան հայացված տարբերակով՝ Նորաշխարհյան:

16 Չավուշ (օսմաներեն) – Հարյուրապետ: Ժողովուրդը հաճախ ինքնաբուխ այդպես է անվանել հարգանք վայելող զինվորական ցածրաստիճան գործիչների և հայդուկային խմբերի հրամանատարների:

16 Ակնարկում է Ջեյթունի 1895 թ. ապստամբությունը: Ծանր հարկերի դեմ բողոքող և երկրում մոլեգնող հայկական ջարդերից խուսափելու համար ընդվզած զեյթունցիների ապստամբությունը կազմակերպել են Աղասին (Կարապետ Թուրսարգիսյան, 1871–1941) և հնչակյան կուսակցության մի քանի այլ գործիչներ: Մարտերում զեյթունցիների բազմաթիվ հաղթանակներից հետո, եվրոպացիների միջնորդությամբ, թուրքական իշխանություններն ու հայ ապստամբները համաձայնել են դադարեցնել ռազմական գործողությունները: Հնչակյան գործիչներն անվտանգ մեկնել են Եվրոպա, օսմանյան զորքերը հեռացել են Ջեյթունի շրջանից, նշանակվել է քրիստոնյա կառավարիչ, սուլթան Աբդուլ Համիդ Բ-ն ներել է զեյթունցիներին և հինգ տարով ազատել հարկերից:

17 «Մարթին» – Անգլիական արտադրության մեկփամփուլշտանի հրացան: Կոչվել է ստեղծողի՝ շվեյցարացի Ֆրիդրիխ ֆոն Մարթինի անունով: Առաջին անգամ գործածվել է 1871 թ.:

18 Կայմական (արաբերեն, օսմաներեն) – Գավառապետ:

19 Ժանդարմերիա (ֆրանսերեն) – Պետության ներքին անվտանգությունը հսկող ոստիկանական հատուկ ստորաբաժանում:

20 Բալկանյան պատերազմ – Ավելի ճիշտ՝ Բալկանյան պատերազմներ: 1912 թ. Բալկանյան առաջին պատերազմում Հունաստանը, Սերբիան, Չեռնոգորիան և Բուլղարիան, դաշինք կազմելով, խայտառակ պարտության մատնեցին Օսմանյան պետությանը՝ վերջինիս գրեթե ամբողջովին դուրս չպարտելով Եվրոպայից՝ թողելով նրան Կ. Պոլիսն ու հարակից փոքր տարածքը: Բալկանյան երկրորդ պատերազմը ծագեց 1913 թ.՝ հաղթողների միջև թուրքական ժառանգությունը բաժանելու շուրջ ծագած անհամաձայնությունների պատճառով. բալկանյան երեք պետությունները հարձակվեցին չորրորդի՝ Բուլղարիայի վրա: Օգտվելով առիթից՝ Բուլղարիայի դեմ պատերազմի մեջ մտավ նաև Օսմանյան պետությունը: Պատերազմն ավարտվեց Բուլղարիայի պարտությամբ: Թուրքերը կարողացան վերագրավել իրենց կորցրած եվրոպական տարածքների մի մասը, այդ թվում՝ Էդիրնե քաղաքը:

21 Վեր. Տ. Անդրեասյանի այս գրքի արևմտահայերեն երկու հրատարակություններում ազգանունը «Ասմընեան» է:

22 Սովորություն էր դարձել երեք հարանվանությունների հոգևոր պետերի և աղաների միացյալ ժողովի գումարումը՝ ծանր իրավիճակների շուրջ խորհրդակցելու և դրանցից դուրս գալու ելք գտնելու նպատակով: Ծանոթագրությունը՝ հեղինակի:

23 Բեյ, էֆենդի – Տղամարդկանց տրված պատվանուններ և հարգալիր դիմելաձևեր Օսմանյան պետության մեջ:

24 «Վինչեստեր» – 1860–70-ական թթ. ԱՄՆ-ում գործառնության մեջ մտած մեկփողանի կամ երկփողանի հրացան: 20-րդ դարի երկրորդ կեսից հիմնականում օգտագործում են որսորդները:

25 Վեր. Տ. Անդրեասյանի այս գրքի արևմտահայերեն երկու հրատարակություններում ազգանունը «Պէսիլոսեան» է:

26 Ճշտում: Օսմանյան պետությունը պատերազմական գործողություններն սկսել էր դեռևս 1914 թ. հոկտեմբերի 28-ին՝ ռմբակոծելով Ռուսաստանի սևծովյան մի քանի նավահանգիստներ: Նոյեմբերի 4-ին դաշնակիցները պատերազմ են հայտարարել Օսմանյան պետությանը, և անմիջապես կռիվներ են սկսվել չորս ճակատում՝ Անդրկովկասում, Բալկաններում, Իրաք-Պարսկաստանում և Սուեզի ջրանցքի շրջանում:

27 Ամըկ և Բեյլան – Հայաբնակ ավաններ Սիրիայի հյուսիս-արևմուտքում՝ Ալեքսանդրետի սանջակում:

28 Օսմանիե – Հայաշատ ավան Կիլիկիայում:

29 Պատմության լուսի ներքո հարկադրված ենք բարեփոխելու մեր այս տեսությունը: Այսօր հայտնի է, որ թուրքական կառավարությունը նախօրոք որոշել էր բնաջնջել հայությանը, և զեյթունցիներն ինչ դիրք էլ բռնեին, ելքը նույնն էր լինելու. պատերազմը տևեց չորս-հինգ տարի: Եթե զեյթունցիներն իմանային թուրքական կենտրոնական կառավարության այս դժոխային որոշման մասին, անշուշտ նախընտրելու էին տեղում դիմադրել մինչև վերջ և մեռնել հերոսաբար: Այս դեպքում նույնպես ավելի նպաստավոր պետք է լիներ ապստամբությունն սկսել թուրքական բանակների հեռանալուց հետո: Ծանոթագրությունը՝ հեղինակի:

30 Վեր. Ահարոն Շիրաջյան (1864, Մարաշ – 5.12.1939, Հալեպ) – 1886 թ. ավարտել է Կենտրոնական Թուրքիայի քոլեջը (Այնթապ): Աստվածաբանական բարձրագույն կրթություն ստացել է Էդինբուրգում: 1914 թ. ծեռնադրվել է հոգևոր հովիվ: 1915 թ. հուլիսի 31-ին Հալեպում հիմնադրել է քաղաքի հայկական առաջին որբանոցը, 1923 թ.՝ Հայ ծերանոցը: Իր որբախնամ նվիրյալ գործունեության համար արժանացել է «Որբերու հայրիկ» պատվանվանը:

31 Տեր Սահակ քահանա Տեր-Պետրոսյան (26.03.1877, Մարաշ – 8.10.1927, Տրոյ, Նյու Յորքի նահանգ, ԱՄՆ) – Սերում է տոհմիկ քահանաների գերդաստանից: Սովորել է ծննդավայրի Կենտրոնական վարժարանում, Տարսնի Սեյնթ Պոլ ամերիկյան քոլեջում և Մարաշի աստվածաբանական ամերիկյան ճեմարանում: 1902–1906 թթ. եղել է ուսուցիչ, 1908–1909 և 1912–1914 թթ.՝ Մարաշի թեմի առաջնորդական տեղապահ: Մեծ եղեռնի ժամանակ աքսորվել է Ղեյր էզ-Ջոր, բանտարկվել Հալեպում: Չինադադարից հետո վերադարձել է Մարաշ, որտեղից 1922 թ. գաղթել է Հալեպ, նույն թ. մեկնել Տրոյ՝ որպես տեղի Հայ առաքելական եկեղեցու հոգևոր հովիվ:

32 Հեր (զերմաներեն) – Պարոն:

33 Հեր Բլանկը կամ Միստեր Բլանկը ավետարանական վերապատվելի էր, Մարաշի Բեթ էլ և Բեթ Շալոն զերմանական որբանոցների և զերմանական հիվանդանոցի տնօրենը:

34 Սահակ կաթողիկոս – Աշխարհիկ անունը՝ Գաբրիել Խապայան (25.03.1849, գյուղ Եղեգիս, Խարբերդի նահանգ – 8.11.1939, գյուղ Անթիլիաս, Լիբանան) – Կիլիկիո կաթողիկոս՝ 1902–1939 թթ.:

35 Հետագայում Սահակ կաթողիկոսին անխնա քննադատում էին և մեղադրում Ձեյթունի դժբախտությունների համար: Ըստ մեզ՝ այդ քննադատություններն ու վերագրումները անիրավացի էին: Տվյալ իրավիճակում հանուն Ձեյթունի անվտանգության հնազանդվելն ավելի խելամիտ էր, քան ապստամբելը: Արտաքին միջամտությունն ամբողջովին բացառվում էր, իսկ սակավաթիվ զենքով ու չնչին զինամթերքով անորոշ ժամանակով հսկա բանակների դիմադրելու հույսը մեծագույն միամտություն էր: Չենթարկվելն անխուսափելի կործանում էր նշանակում, մինչդեռ հնազանդվելու դեպքում գո-

նն [փրկութեան] ինչ-որ հույս էր մնում: Աներկբա է, որ թուրքական կառավարությունը պետք է աներ այն, ինչ արեց:

Կիլիկիայում Տարագրությունն սկսվեց Ձեթունից. մինչ այդ չէր եղել նման նախադեպ, որից Ձեթունը կարողանար դաս քաղել: Ձեթունը շատ անգամ էր վիզ ծռել թուրքին, բայց նման վերաբերմունք չէր տեսել: Ասել, թե «Ավելի լավ էր այնտեղ դիմադրելն ու մեռնելը», նշանակում է պատմության անիվը հետ դարձնել:

Անկարելին պահանջելու և պատմությունը հետընթաց կարողալու փորձ է նաև այն խորհուրդը, թե «Հայերն ամենուր պետք է միաժամանակ ապստամբեին. այդ դեպքում թուրքը կշփոթվեր, իսկ նրա թշնամիները, հրապուրվելով նրա ներքին տկարությամբ, հավանաբար մի ճակատ էլ կբացեին Կիլիկիայում և շուտով թուրքի հետ հաշիվը կփակեին»: Բայց հայերն ինչպե՞ս կարող էին իմանալ, թե ինչպե՞ս է թուրքը տրամադրված իրենց նկատմամբ, ինչպե՞ս կարելի էր արդարացնել այդպիսի վտանգավոր քայլը՝ առանց իմանալու հայերի բնաջնջման թուրքերի որոշումը: Եվ ինչպե՞ս կարելի էր ակնկալել միաժամանակ ապստամբություն բոլոր տեղերում: Մի՞թե մենք կազմակերպված, հաղորդակցության միջոցներ ունեցող և իր որոշումները ժողովրդին պարտադրելու ունակ կառավարություն ունեինք: Մի՞թե կարելի է մոռանալ, որ թուրքական նենգ և փորձառու կառավարությունն աչալրջորեն վերահսկում էր փոքր կամ մեծ ամեն շարժում ու երևույթ: Ծանոթագրությունը՝ հեղինակի:

36 Իսլամական աշխարհում, ներառյալ՝ Օսմանյան պետությունը, ընդունված էր Օ ժամ համարել արևածագը: Գրելով «Առավոտյան ժամը կեսին»՝ հեղինակը նկատի ունի «արևածագից քիչ անց»:

37 Ալայ – կոմանդանդ - Ալայ (օսմաներեն) – գունդ, կոմանդան (ֆրանսերեն) – հրամանատար, այսինքն – գնդապետ:

38 Մուֆթի (արաբերեն) – Իսլամ հոգևորական, որն իրավունք ունի մեկնաբանելու նաև Ղուրանի և իսլամական մյուս կրոնական գրքերի դրույթները:

39 Կադի (արաբերեն, օսմաներեն) – Դատավոր:

40 Խոջա (պարսկերեն, օսմաներեն) – Մեծահարուստ, ուսուցիչ, նաև պատվանուն:

41 Ջիհան – Խոշոր գետ Կիլիկիայում:

42 Վալի (արաբերեն, օսմաներեն) – Նահանգապետ, կուսակալ:

43 Ենի շեհիր – Ենի (թուրքերեն) – նոր, և շեհիր (պարսկերեն, օսմաներեն) – քաղաք, այսինքն՝ նոր քաղաք:

44 Բնագրում՝ «Էյնթըլի»: Բնակավայր Հալեպից հյուսիս-արևմուտք՝ Կիլիկիայի մատույցներում:

45 Միստեր (անգլերեն) – Պարոն:

46 Վուդլի – Վեր. Էդուարդ Կառութերս Վուդլի (Edward Carruthers Woodley) – 1912–1920-ին գործել է Մարաշում, եղել է Կիլիկիայի աստվածաբանական ճեմարանի դասախոս, 1914 թ-ից՝ կառավարիչ մարմնի անդամ:

47 Լայմոն – Վեր. Ջեյմս Զ. Լայման (James K. Lyman, 1880–1950) – Մարաշի ավետարանական վերջին միսիոները: 1920 թ. փետրվարին Մարաշի հայաթափումից հետո որոշ ժամանակ գործել է Ստամբուլում:

48 Դոկտոր Ջ. Ի. Մերիլ – Վեր. դոկտ. Ջոն Էռնեստ Մերիլ (John Ernest Merrill, 9.05.1872, Մեդինա, Նյու Յորքի նահանգ, ԱՄՆ – 22.09.1960, Բելոզ Ֆոլզ, Վերմոնտի նահանգ, ԱՄՆ) – Ամերիկացի միսիոներ: 1898 թ. Կենտրոնական Թուրքիայում միացել է առաքելությանը: 1905 թ-ից՝ Կենտրոնական Թուրքիայի քոլեջի (Այնթապ) տնօրեն, իսկ կրթօջախի՝ Հալեպ տեղափոխվելուց հետո՝ Ալեքսիս քոլեջի առաջին տնօրենը 1923–1937 թթ:

49 Կալադուրան կամ Կարադուրան – Քեսաբի գավառակի ամենամեծ գյուղը. Քեսաբ վարչական կենտրոնից ձգվում է արևմուտք՝ մինչև Միջերկրական ծով (երկարությունը՝ 7,5 կմ): Մինչև 21-րդ դարի սկիզբը եղել է զուտ հայաբնակ, այնուհետև այնտեղ մշտական բնակություն են հաստատել սակավաթիվ օտարներ: Հռչակվել է իր ծխախոտի և խոզակի, 20-րդ դարի երկրորդ կեսից՝ դափնեծեփի և խնձորի արտադրությամբ:

50 Քեսաբ – Գավառակ և նույնանուն ավան Մուսա լեռան հարավում՝

Կասիոս լեռան հարավային լանջերին: 1939 թ-ից, որպես առանձին վարչական միավոր-գավառակ, Սիրիայի Լաթաքիա նահանգի կազմում է:

51 Մյուդիիր (արաբերեն, օսմանական թուրքերեն) – Գավառակի կառավարիչ:

52 Մերուսան (արաբերեն, օսմաներեն) – Լրիվ անվանումը՝ Մեջլիս-ը մերուսան: Բառացի նշանակում է Պատգամավորների ժողով: Օսմանյան պետության օրենսդիր մարմնի անվանումը:

53 Բնագրում այստեղ և այլ տեղերում՝ «Չայր», որով հեղինակն ակնարկում է անձի հոգևորական լինելը: Բոլոր տեղերում փոխել ենք «քահանա» բառով:

54 Չեղինակը գործածում է «Խըտըրպէյ» և «Խտըրպէկ» տարբերակները: Նախընտրել ենք միօրինականացնել ավելի տարածված ձևով՝ «Խըղըրբէկ»:

55 Բնագրում այստեղ և այլ տեղերում հեղինակը գործածել է «Չայր» բառը: Ավելի ճիշտ ենք համարում «քահանա»-ն, քանի որ «Չայր»-ը գործածվում է Չայ առաքելական և կաթողիկե եկեղեցիների բոլոր հոգևորականների համար:

56 Չաջի (արաբերեն, օսմաներեն) – Կրոնական սրբավայրեր ուխտագնացություն կատարած անձանց (քրիստոնյաների դեպքում՝ երուսաղեմ այցելածների՝ մահտեսիների) տրվող պատվանուն:

57 Մովսես Տեր-Գալուստյան (14.11.1895, գյուղ Յողուն-Օլուք, Մուսա լեռ – 14.11.1984, Բեյրութ, թաղվել է Բեյրութում, 1998 թ. սեպտեմբերի 12-ին վերաթաղվել է մուսալեռացիների Այնճար ավանում, Լիբանան) – Մուսա լեռան հերոսամարտի կազմակերպիչներից տեր Աբրահամ ավագ քահանա Տեր-Գալուստյանի որդին է, նույնպես հերոսամարտի կազմակերպիչներից ու ղեկավարներից էր: Պատանի տարիքից անդամագրվել է Չայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությանը, 1947–1967 թթ. եղել ԳՅԳ Բյուրոյի անդամ: Աշխատել է որպես ուսուցիչ: Եղել է Մուսա լեռան գավառակի (Սիրիայի կազմում) առաջին կառավարիչը, 1927–1938 թթ.՝ Սիրիայի,

1938–1939 թթ.՝ Չաթայի պետության, 1943–1972 թթ.՝ Լիբանանի խորհրդարանների անդամ: Մեծապես նպաստել է Այնճար ավանի հիմնադրմանն ու բարգավաճմանը, 1950-ական թթ. աջակցել Չայ առաքելական եկեղեցու պառակտմանը՝ Իրանի ու Չունաստանի թեմերը Մայր աթոռից անջատելուն և Կիլիկիայի կաթողիկոսությանը կցելուն:

2011 թ. երևանում լույս է տեսել պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Ներսիսյանի «Մովսես Տեր Գալուստյան» մենագրությունը՝ այս գործի դերի գերարժևորումներով և հերոսամարտի մասին գրած բազմաթիվ հեղինակների, որոնց թվում՝ վեր. Տիգրան Անդրեասյանի հաղորդած տեղեկությունների անտեսումով կամ կամային ձևափոխում-մեկնաբանություններով:

58 Պետրոս Տեր-Գալուստյան – Տեր Աբրահամ քահանայի մյուս որդին:

59 «Գրա» – Մեկփողանի՝ առանց պահուսակի հրացան: Արտադրվել է Ֆրանսիայում՝ 1874 թ., հետագայում՝ նաև Չունաստանում և այլ երկրներում: Կոչվել է ֆրանսիացի զնդապետ Բազիլ Գրայի անունով: Գործածվել է թուրք-հունական 1897 և 1919–1922 թթ., Բալկանյան երկու՝ 1912–1913 թթ. և համաշխարհային երկու՝ 1914–1918 և 1939–1945 թթ. պատերազմների ժամանակ:

60 Կունդակը – Թուրքերեն «կունդակ»՝ հենակ բառից: Ուսին ամրացվող հենակ ունեցող զենք:

61 «Մաուզեր» – Գերմանական արտադրության հրացան և ատրճանակ: Գործարանը հիմնադրել են Վիլիելմ և Պաուլ Մաուզեր եղբայրները 1874 թ.: 20-րդ դարի երկրորդ կեսից արտադրվում են միայն մարզական և որսորդական «Մաուզեր» զենքեր:

62 Կըրմա – Թուրքերեն «կըրմակ»՝ կոտրել բայից, այսինքն՝ լիցքավորման համար կեսից ծալվող «կոտրվող» զենք:

63 Նկատի ունի Առաջին համաշխարհային պատերազմը (1914–1918 թթ.):

64 Տեր Աբրահամ և տեր Վարդան քահանաներն ու Մելքոն Գույումջյանը մի քանի օր անց փոխեցին իրենց դիրքորոշումները և միացան լեռը բարձրացողներին: Ծանոթագրությունը՝ հեղինակի:

- 65 Մեկ մղոնը մոտ 1,61 կիլոմետր է:
- 66 Այստեղ և այլ տեղերում զեղչվել է տարեթվի առաջին թվանշանը: Բուն տարեթիվը՝ 1331: Սովորաբար Օսմանյան պետության պաշտոնյաները զեղչում էին առաջին թվանշանը՝ տարեթիվը համարելով ինքնին հասկանալի:
- 67 Կազա (արաբերեն, օսմաներեն) – Գավառ:
- 68 Մուխթար (արաբերեն, օսմաներեն) – Տվյալ բնակավայրի բնակչության ընտրած անձ, որը լիազորված է կատարելու պետական մարմինների հետ իր ընտրողների քաղաքացիական կարգավիճակին առնչվող գրագրությունը, որոշակի առումով՝ գզիր:
- 69 Նահիե (արաբերեն, օսմաներեն) – Գավառակ:
- 70 Բնագրում այստեղ և այլ տեղերում տպվել է «Ազիր»: Մուսա լեռան գյուղակներից, ունեցել է երկու թաղ՝ Վերին Ազգյուր, և Վարին կամ Նըրքի Ազգյուր:
- 71 Բնագրում այստեղ և հետո տպագրվել է «Թաթարալան»:
- 72 Կըզըլջա (թուրքերեն) – Կարմրավուն:
- 73 Կուզըղդազ (թուրքերեն) – Գառների մակաղավայր:
- 74 Դամլաջըկ (թուրքերեն) – Կաթկաթող:
- 75 Կափլան-Դուզաղը (թուրքերեն) – Վազրի ծուղակ:
- 76 Ժողով – Վարչական մարմին:
- 77 «Դահլիճ» բառն արևմտահայերենում նշանակում է նաև կառավարություն:
- 78 Յոլ-Աղըզը (թուրքերեն) – ճանփի սկիզբ:

79 Փետատ – Բլունգ:

80 Բակաջըկ (թուրքերեն) – Դիտարան:

81 Տարագրությունից վերապրած բիթիասցիները հավաստել են, որ բշնանու զորքում այդ ժամանակ եղել է 5–6 հազար զինվոր: Բիթիասի մուխթար Սարգիս Մ. Շերբեթջյանը պատմում է, որ այդ օրերին հյուրընկալել է յոթ հազարապետի: Դրանից 2–3 օր առաջ Բիթիասի ողջ բնակչությունը որոշել էր լեռ բարձրանալ: Բարեխոսության խնդրանքով Անտիոքի աղաների մոտ գնացած հանձնախմբի անդամ Մովսես Բենջիյանը, դեռ Անտիոքում տեղեկանալով իր ընկերներից մի քանիսի հանկարծակի ձերբակալության մասին, ապաստան է գտնում իր բարեկամ Աղալը Մուհամմեդ աղայի տանը՝ Որոնդես գետի նրա սեփական կղզյակում: Իբր խելացի, իրազեկված և միանգամայն բարյացակամ մարդու՝ Մուհամմեդ աղան Բենջիյանին է հանձնում հայերի բնաջնջման մասին թուրքական կառավարության որոշումը և խորհուրդ տալիս նրան շուտափույթ վերադառնալ Բիթիաս ու ժողովրդին համոզել բարձրանալ լեռ: Նա իր նավակով Բենջիյանին անցկացնում է Որոնդեսի արևմտյան ափը: Բենջիյանը զալիս է Բիթիաս և, առանց մեծ դժվարության, համոզում ժողովրդին:

Մենք լեռան վրա իմացանք, որ բոլոր բիթիասցիները զալիս են մեզ միանալու, և ուրախացանք: Բայց այս ընթացքում հսկա բանակը տեղ է հասնում ու դիրքավորվում: Հ[աջի]-Հաբիբլիի հրամանատարը կարգադրում է կանչել Բիթիասի երևելիներին: Երբ նրանք զալիս են և իրենց աչքով տեսնում անթիվ զինվորներին, թնդանոթի մարտկոցներն ու զինամթերքը, ամբողջովին հուսահատվում են: Թուրքերը նրանց ասում են, որ ամբողջ լեռն այրելու են: Այդ բանակում ծառայող մի գերմանացի սպա նրանց հարցնում է. «Մի՞թե այդ լեռից ավելի բարձր լեռ չկա: Մենք թնդանոթը կտանենք այնտեղ և այնքան կմոբակոծենք, որ ծառ, թուփ, ամեն ինչ այրվի»:

Բարեբախտաբար, մեր դիրքերը հսկող ավելի բարձր լեռ չկար: Լսեցինք նաև, որ թուրքերը փորձել են նավթով հրկիզել լեռը, բայց չեն հաջողել: Այդ օրերին նավթը շատ թանկ էր, և, բնականաբար, չէին կարող այդ նպատակով սպառել մեծ քանակությամբ նավթ, մանավանդ որ լեռը միշտ թանձր մառախուղի մեջ էր, և ամեն ինչ՝ գրեթե ջրի մեջ, հետևաբար՝ շատ դժվարությամբ կայրվեր: Աղաներին հնարավորություն են տալիս ժողովրդին համոզել իջեցնել ներքև: Դա անկարելի էր: Սակայն նրանք հաջողում են գիշերով մարդ ուղարկել և լեռ բարձրացած իրենց հարազատներից ոմանց հա-

մոզել (շատ երկմտողներ ուզում էին իջնել, բայց բռնի արգելում էին) և գաղտնի կերպով վար իջեցնել»: Ծանոթագրությունը՝ հեղինակի:

82 Զորլեն – «Զորլի» մականվան սեռական հոլովածն է:

83 Խուլիզրնեն – Փոքր արտը (Մուսա լեռան բարբառ):

84 Քեոյլու գեոլ (թուրքերեն) – Գյուղացու լիճ:

85 Օմարեն Գիտեյնը – (Օմարի հողը Մուսա լեռան բարբառ):

86 Կաթըր թոփը – Թուրքերեն «կաթըր» – ջրի, և «թոփ» – թնդանոթ բանրից, այսինքն՝ ջրիով քարշ տրվող թնդանոթ:

87 Ըլլեուն կամ Ըլլեոն – Առյուծը (Մուսա լեռան, Քեսաբի և հարակից շրջանների բարբառներում):

88 Սերոբ Շերբեթյան – ԴՅԴ անդամ: Մասնակցել է Մուսա լեռան հերոսամարտին: 1927–1939 թթ. եղել է Մուսա լեռան զավառակի (Սիրիայի կազմում) երկրորդ և վերջին կառավարիչը: Հետագայում հաստատվել է Լիբանանի Այնճար ավանում: Հեղինակել է «Պատմութիւն Սուլտահայերու» գիրքը (2010, Բեյրութ):

89 Չեթե – Սերոբ-հորվաթերեն «չեթնիկ»՝ աշխարհագրային բառի թուրքերեն աղավաղված ձևն է:

90 Եսայի Յաղության (1878, գյուղ Յողուն-Օլուք, Մուսա լեռ – 1957, Երևան) – Մուսա լեռան ինքնապաշտպանության զխավոր կազմակերպիչներից: Հերոսամարտի նախօրեին, կանխազգալով վտանգը, ապահովել է որոշակի քանակի զենք և զինամթերք: 1939 թ. ֆրանսիացիների՝ Մուսա լեռան շրջանը դավադրաբար թուրքիային հանձնվելուց հետո անցել է Սիրիա-Լիբանան: Հայրենադարձել է 1947 թ.:

91 Պետրոս Դըմլաքյանը Մուսա լեռան հերոսական ինքնապաշտպանությունից հետո զինվորագրվել է Ֆրանսիայի Արևելյան («Հայկական») լեգեոնին, ունեցել է հիսնապետի աստիճան, մասնակցել է Պաղեստինի, Սիրիա-

յի և Կիլիկիայի ազատագրությանը: Սպանվել է 1919 թ. դեկտեմբերին Մարաշում՝ թուրք-ֆրանսիական մարտերի ժամանակ:

92 Բնագրում այստեղ և այլ տեղերում «Հեպեշեան» է:

93 Արևմտահայերեն բնագրում՝ «փթրոլի թիթեղներ»: Մինչև պլաստմասսայի զանգվածային կիրառումը ջուր, կաթ, այլ հեղուկներ, պանիր և այլն տեղափոխելու համար օգտագործում էին ուրիշ նյութերից պատրաստված տարողություններ, այդ թվում՝ թիթեղյա տարաներ, որոնք նավթի ընկերությունները գործածում էին մանրածախ առևտրի ցանցում:

94 Ֆելլահ (արաբերեն) – Հողագործ: Մուսա լեռան, Քեսաբի և հարակից շրջանների, ինչպես նաև Կիլիկիայի որոշ տարածքների հայկական բարբառներում այս բառով են բնորոշել արաբ ավելի մուսուլմաններին, որոնց հիմնական զբաղմունքը հողագործությունն էր:

95 Մարդահամար չէր կատարվել, և մուսալեռացիների թիվն այդ օրերին այդքան էինք կարծում, բայց հետագայում իմացանք, որ մեր թիվը 4200 էր: Ծանոթագրությունը՝ հեղինակի:

96 Ալբուստան, Գեոքսյուն (Կոկիսոն), Յարփուզ – Հայկական ավաններ Կիլիկիայում:

97 Այս աղերսագիրը գրեցինք մի քանի անգամ, հատկապես երբ Իսկենդերունի կողմերը և Կիպրոս մարդ ուղարկելու հարցեր առաջացան: Թվականը, կռիվների թիվը և այլն աղերսագրում նշանակվեցին ըստ այնմ: Ծանոթագրությունը՝ հեղինակի:

98 Գյավուր – Արաբերեն «քաֆեր»՝ անհավատ բառի աղավաղված թուրքերենն է:

99 Ալլահու աքբար (արաբերեն) – Աստված մեծ է: Մոլեռանը մուսուլմանների սիրած արտահայտությունն է, որը կրկնում են հատկապես հարձակվելիս:

100 Բնագրում այստեղ և այլ տեղերում «Գոճէնեան» է:

¹⁰¹ Ֆենդ – Մուսա լեռում սովորություն էր իրար մականուն կապնելը: Հավանաբար առաջացել է «էֆենդի» պատվանունից:

¹⁰² Բնագրում «գահավեժն» է. հավանաբար վրիպակ է:

¹⁰³ Մազարեն Խենդեյը – Մուսա լեռան և նրա շրջակայքի բարբառներում նշանակում է գերեզմանոցի ծորակը:

¹⁰⁴ Հեղինակը նկատի ունի մայրամուտը:

¹⁰⁵ Ազգանունը բնագրում «Արամացեան» է: Կարծում ենք՝ ճիշտ տարբերակը «Յարամայան» է:

¹⁰⁶ Եռյակ համաձայնություն – Նկատի ունի Անտանտի երկրները՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը: Օսմանյան պետությունը պատերազմում էր Անտանտի ու նրա դաշնակիցների դեմ [Entente (Անտանտ) Ֆրանսերեն է, նշանակում է «համաձայնություն»]:

¹⁰⁷ Մուսալեռցի Հաբեթ Մ. Իսկենդերյանի հեղինակած «Սուլտիոյ Ապստամբութիւնը» գիրքը լույս է տեսել Կահիրեում, 1915 թ.: մուսալեռցիների՝ Եգիպտոս տեղափոխումից շաբաթներ անց:

¹⁰⁸ Իսկելե (թուրքերեն) – Նավահանգիստ: Այստեղ օգտագործվել է որպես հատուկ անուն՝ որոշակի տեղանվան իմաստով:

¹⁰⁹ Ռենդել Հարիս – Ջեյմս Ռենդել Հարիս (James Rendel Harris, 27.01.1852, Պլայնուֆ, Անգլիա – 1.03.1941) – Անգլիացի բանասեր, աստվածաշնչյան ասորերեն բնագրերի մասնագետ հետազոտող: Համահեղինակ է (կնոջ՝ Հելենի հետ) «Նամակներ՝ Հայաստանում վերջին կոտորածների վայրերից» ("Letters from the Scenes of the Recent Massacres in Armenia") ականատեսի վկայություն- հուշագրության, 1897 Լոնդոն:

¹¹⁰ Հեղինակը գրքում հաճախ գրում է «ծովակալ», որը ճիշտ չի արտահայտում Ֆուրնեի զինվորական աստիճանը՝ vice-admiral:

¹¹¹ Դարտիժ դյու Ֆուրնե - Ամբողջական անունը՝ Լուի Դարտիժ դյու

Ֆուրնե (Lousi Dartige du Fournet, 2.03.1856, Պուտանժ, Օրնի դեպարտամենտ, հյուսիս-արևմտյան Ֆրանսիա – 16.02.1940, Պերիգո, Դորդոնի դեպարտամենտ, հարավ-արևմտյան Ֆրանսիա) – 1872 թ. ընդունվել է Ֆրանսիայի նավային ուժերի դպրոցը, որն ավարտել է ծովային լեյտենանտի զինվորական աստիճանով: Մասնակցել է ֆրանս-սիամական պատերազմին, Բալկանյան երկու և Առաջին համաշխարհային պատերազմներին: Միջերկրական ծովում եղել է ֆրանսիական նավատորմի, այնուհետև՝ ֆրանսիական 3-րդ նավատորմի հրամանատար: 1915 թ. սեպտեմբերին կազմակերպել է 4080 մուսալեռցի հայերի Պորտ Սաիդ տեղափոխումը: Նավի վթարի պատճառով 1916 թ. դեկտեմբերին պաշտոնազրկվել է Ֆրանսիայի ծովային նախարարի հրամանով, հետագայում՝ արդարացվել, անցել թոշակի:

¹¹² Գրքի ֆրանսերեն վերնագիրը՝ "Souvenirs de guerre d'un admiral": Տպագրել է Փարիզի «Պլոն-Նուրրի» հրատարակչությունը 1920 թ.:

¹¹³ Բնագրում թարգմանվել է «անակնկալ կերպով», որը ճիշտ չի արտահայտում օսմանական թուրքերեն «մեմուլին դայրի» բառակապակցության իմաստը:

¹¹⁴ Օսմանական տոմարով տարին 2 – 3 տարով հետ էր մուսուլմանական համապատասխան տարեթվից: Օսմանական տոմարի 1331 տարեթիվը մոտավորապես համապատասխանում է մեր (քրիստոնեական) թվականության 1915 թ.:

¹¹⁵ Թավ ընդգծումը բնագրային է:

¹¹⁶ Ը. Ե. – Նշանակում է՝ «ըստ երոպացուց»: Հեղինակը նկատի ունի ժամանակի հաշվառման եվրոպական համակարգը, որը հետագայում տարածվեց որչա՞ աշխարհում և ցայսօր գործածվում է ամենուր:

¹¹⁷ Բնագրում նշվել է «Ֆոդր» ձևով: Ֆրանսիական ռազմանավերի լատինատառ անվանումներն են՝ Guichen, Desaix, D'Estrees, Amiral Charner և Foudre:

¹¹⁸ Տիրան Թեքեյանը նշանավոր բանաստեղծ, խմբագիր, մանկավարժ և հասարակական գործիչ Վահան Թեքեյանի զարմիկն է:

119 Բնագրում հայատառ ֆրանսերեն է՝ «Յօ-Գօմիսերներ»: Նկատի ունի բրիտանական այդ գաղութների անգլիացի կառավարիչներին:

120 1915 թ. սեպտեմբերին Ղարղանելի նեղուցում դաշնակիցների և օսմանյան բանակների միջև շարունակվում էին դաժան մարտերը, որոնք սկսվել էին նույն թվականի մարտի 18-ին: Բազմաթիվ փորձերից հետո 1915 թ. դեկտեմբերին դաշնակիցներն ստիպված էին նահանջել:

121 Տպագրել է Փարիզի «Լեզ էդիսիոն դը Ֆրանս» հրատարակչությունը 1929 թ.:

122 Բնագրում սխալմամբ տպվել է Ohack: Պոլ Չակ (Paul Chack, 1876, Ֆրանսիա – 9.09.1945, Մոնտրուժի ամրոց, Ֆրանսիա) – Օռվային սպա և ռազմածովային թեմաներով ֆրանսիացի գրող: Ունեցել է ծովային կապիտանի զինվորական աստիճան: Ֆրանսիայի՝ գերմանական բռնազրավման տարիներին գործակցել է զավթիչների հետ, հիմնադրել և ղեկավարել է «Հակաբոլշևիկյան շարժման կոմիտե» կազմակերպությունը: Որպես հայրենիքի դավաճան՝ դատապարտվել է մահապատժի և գնդակահարվել:

123 Բարեգործական – Նկատի ունի 1906 թ. ապրիլին Կահիրեում հիմնադրված Հայկական բարեգործական ընդհանուր միությանը:

124 Հայաստանի բարեկամներ – Անգլերեն անվանումը Friends of Armenia: Հասարակական կազմակերպություն Անգլիայում: Հիմնադրել են լորդ Ջեյմս Բրայսը, լեդի Լյուսի Կավենդիշը և բրիտանացի այլ երևելի գործիչներ 1887 թ.: Գործել է մինչև 1952 թ.: օժանդակելով թուրքական վայրագությունների հայ զոհերին, գաղթականներին և Հայաստանի առաջին հանրապետությանը: 2001 թ. Լոնդոնում ստեղծվել է նույնանուն բարեգործական կազմակերպությունը:

125 Մայր Փիրսոն – Լեստեր Բոուլզ Փիրսոն (Lester Bowles Pearson, 23.04.1897, Յորք ավան, Օնթարիոյի նահանգ, Կանադա – 27.12.1972, Օտտավա, Կանադա) – 1915 թ. սկզբին սերժանտի աստիճանով կամավորագրվել է Կանադական բանակի բժշկական կորպուսին, նույն թվականին ստացել լեյտենանտի, հետագայում՝ մայորի աստիճան: Առաջին աշխարհամարտի տարիներին որպես բուժակ երկու տարի ծառայել է Եգիպտոսում և Հու-

նաստանում, այնուհետև՝ Սերբիայում: Հետագայում զբաղվել է քաղաքական գործունեությամբ, եղել Կանադայի խորհրդարանի անդամ, ԱՄՆ-ում Կանադայի արտակարգ և լիազոր դեսպան, Կանադայի արտաքին գործերի նախարար, 1963 թ. ապրիլից մինչև 1968 թ. ապրիլը՝ վարչապետ:

126 Հորնբլաուր – Վիլյամ Ս. Հորնբլաուր, մուսալեռացի գաղթականների՝ Պորտ-Սաիդի վրանաքաղաքի կազմակերպիչը: Հավանաբար՝ կանադացի:

127 Տրոբրիջ – Վեր. Ստեֆըն Ռ. Տրոբրիջ (Rev. Stephen R. Trowbridge) – Որպես միսիոներ՝ ծառայել է Մարաշում: Ականատես եւ վկայողներից է Ադանայի 1909 թ. ապրիլյան կոտորածների: Եղել է Ամերիկյան կարմիր խաչի Կահիրեի կոմիտեի քարտուղարը: Մեծ եղեռնի և նրան հաջորդող տարիներին մեծ օժանդակություն է մատուցել Մերձավոր Արևելքի երկրներում ապաստանած հայ գաղթականներին: Ունեցել է մայրոքի զինվորական աստիճան: Վեր. Տիգրան Անդրեսայանից գրառել է նրա պատումը Մուսա լեռան հայոց ինքնապաշտպանության մասին, որն ընդգրկվել է Լորդ Ջեյմս Բրայսի «Հայերի նկատմամբ վերաբերմունքը Օսմանյան կայսրությունում» գրքում (Լոնդոն, 1916):

128 Միսիս (անգլերեն) – Տիկին:

ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ՏԻԳՐԱՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԶԵՅԹՈՒՆԻ ՏԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ

ՍՎԵԴԻԱՅԻ ԱՊՍԱՍՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Գիրքը կազմեց և հրատարակության պատրաստեց պատասխանատու խմբագիր՝ **Անդրանիկ Մարդոյանը**
2. Խորհրդատու՝ **Հարութ Ներսեսյան**
3. Արևմտահայերենից արևելահայերենի փոխադրեցին **Գևորգ Յազըճյանը և Հասմիկ Գուլակյանը**
4. Ծանոթագրությունները և ուղիղ փակագծերում ավելացումները՝ **Գևորգ Յազըճյանի**

Տեղանունների տառադարձումը՝ ըստ բնագրի

Գեորգի Փրոյսը - Լեստր Բրուկ Գրեյթ (Lester Bowie Proctor, 23.04.1857, Յոթք անլան, Օնտարիոյ նահանգ, Կանադա - 27.12.1972, Օտտավա Կանադա) - 1915 թ. սկսած ստանալով ասորիական խանութատարի և կառավարչի բանալի բնիկներին, կոտորածի մեծ ջանքերով և անհատական ջանքերով միջուկի առաջին և հիմնական հոսանքաբեկ ժողովրդագրական մեթոդով աշխարհագրական տարածություններում և Երևանում և Երասխայի

9(47.925)
2h-5842



1915-2015

Հիշում են և

դահանջում

Ամերիկայի
Հայ Ավետարանչական ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

Հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 18
Հեռ.՝ (374-10) 54 35 76

Էլ. փոստ՝ amaa.armenia@amaa.am

Ֆաքս՝ (374-10) 54 75 69

Կայքէջ՝ www.amaa.am

Ֆեյսբուք էջ՝ <https://www.facebook.com/amaaArmenia>

Twitter: https://twitter.com/AMAA_Armenia